


01
A
10



Julius Assfalg





Julius Abtaig

15.5.65

INDOGERMANISCHE BIBLIOTHEK

1. Reihe

LEHR- UND HANDBÜCHER



ALTARMENISCHE
CHRESTOMATHIE

Mit einem Glossar

von

HANS JENSEN



HEIDELBERG 1964

CARL WINTER · UNIVERSITÄTSVERLAG



Nachlaß
Julius Abfalg

ASSF 905

01 SA 4110

R



Alle Rechte vorbehalten. © 1964. Carl Winter, Universitätsverlag, gegr. 1822, GmbH., Heidelberg
Fotomechanische Wiedergabe nur mit ausdrücklicher Genehmigung durch den Verlag.

Imprimé en Allemagne. Printed in Germany. Archiv-Nr. 3275

Gesamtherstellung: Rheingold-Druckerei, Mainz



VORWORT

Der Anregung einiger Rezensenten und sonstiger Interessenten meiner 1959 im gleichen Verlage erschienenen Altarmenischen Grammatik folgend habe ich meinen schon länger gehegten Plan einer altarmenischen Chrestomathie nunmehr ausgeführt.

Die Auswahl aus den wichtigsten Texten des *oskedarean hayerēn* war nicht leicht zu treffen; ich habe mich bemüht, Stücke auszuwählen, die mir wichtig und interessant zu sein schienen und die in anderen Lehrbüchern des Altarmenischen noch nicht abgedruckt waren. Da man sich am leichtesten an Hand der vorzüglichen armenischen Übersetzung des Neuen Testaments in das klassische Altarmenisch einliest, habe ich es für richtig gehalten, dem daraus entnommenen Textteil einen nicht zu bescheidenen Umfang zuzugestehen.

Die kurzen Einleitungen sollen nur das Allernötigste über den Autor und den Zusammenhang des betreffenden Textes bieten. Auf ein paar leichter zugängliche Übersetzungen als letzte Hilfe bei größeren Schwierigkeiten ist hingewiesen worden. Sichere Druckfehler in den Texten habe ich korrigiert, sonst fast nichts an ihnen geändert. Mit Anmerkungen bin ich sparsam gewesen. Mit Hilfe des ausführlichen Glossars und der Verweisungen auf meine Altarmenische Grammatik wird es nicht allzu schwer sein, die freilich nicht immer glatte Diktion der Autoren zu verstehen.

Das Glossar setzt sich gewissermaßen aus drei Wortschichten zusammen. Es enthält nämlich 1. das Wortmaterial der Texte, 2. einen gewissen Bestand an Wörtern, die allerdings nicht in den gebotenen Texten erscheinen, aber wegen ihres nicht seltenen Vorkommens bei weiterer selbständiger Lektüre (etwa des NT) sich als nützlich erweisen können, 3. alle Wörter aus meiner Grammatik, die aus irgendeinem Grunde dort eine besondere Erwähnung gefunden haben (mit Angabe der Paragraphen).



Es hat sich als nötig erwiesen, dem vorliegenden Buch ein Verzeichnis der in meine Grammatik eingeschlichenen Druckfehler beizufügen. Den Hinweis auf einige von mir noch übersehene Druckfehler verdanke ich den durchweg recht günstigen Besprechungen meiner Grammatik.

Dem verdienten Winterschen Verlag spreche ich meinen Dank aus für die Bereitwilligkeit, die Publikation auch dieser Chrestomathie zu übernehmen; desgleichen danke ich Fräulein Christa Brüdigam für die Hilfe bei der Herstellung des Manuskriptes, vor allem des Glossars, sowie bei dem Lesen der schwierigen Korrekturen. Dank gebührt auch dem Setzer, der den nicht leichten Satz verständnisvoll bewältigt hat.

Der Verfasser

INHALT

Vorwort	5
1. Neues Testament	9
a) Matthäus, cap. 5–9	9
b) Marcus, cap. 6–7; 10–13	22
2. Moses von Choren	36
a) Buch II, cap. 30–32	37
b) Buch III, cap. 44–54	39
3. Faustus von Byzanz	50
a) Buch IV, cap. 5–13	51
b) Buch V, cap. 37–39	70
4. Koriun	78
a) Absatz 5–13; 15–17	79
b) Absatz 36–38	83
5. Eznik von Kolb	84
a) Buch I, cap. 12–14	85
b) Buch II, cap. 1–12	90
Wörterverzeichnis	104
Anhang:	
Kurze historische Übersicht	198
Berichtigungen zu meiner Altarmenischen Grammatik	201



NEUES TESTAMENT

Die Schaffung einer armenischen Bibel ist das erste Übersetzungswerk des hl. Mesrop und seiner Schüler. Ob die um 410 vollendete Übersetzung aus dem Syrischen mit späterer Vergleichung eines griechischen Textes erfolgt ist, oder zur Hauptsache auf einem griechischen Text mit gewissen syrischen Einsprengseln angefertigt worden ist, ist eine noch nicht endgültig entschiedene Frage.

Die neueren Ausgaben der armenischen Übersetzungen beruhen im allgemeinen auf dem recht guten Text der armenischen Bibel des Zohrab, Venedig 1805. In dem vierbändigen Werk bildet das Neue Testament den vierten Band, der bereits 1789 erschien. Der in den folgenden Auszügen benutzte Text stammt aus der Londoner Ausgabe des Neuen Testaments von 1892.

EVANGELIUM DES MATTHÄUS

ԳԼ. Ե

(1) Եւ տեսեալ զժողովուրդսն ել 'ի լեանն . և իբրև նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտք նորա . (2) Եւ բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա և ասէր . (3) Երանի աղքատաց հոգևով , զի նոցա է արքայութիւն երկնից : (4) Երանի սգաւորաց , զի նոքա մխիթարեսցին : (5) Երանի հեզոց , զի նոքա ժառանգեսցեն զերկիր : (6) Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան , զի նոքա յագեսցին : (7) Երանի ողորմածաց , զի նոքա ողորմութիւն գտցեն : (8) Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք , զի նոքա զԱստուած տեսցեն : (9) Երանի խաղաղարարաց , զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին : (10) Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան , զի նոցա է արքայութիւն երկնից : (11) Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն , և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ : (12) Ցնծացէք և ուրախ լերուք , զի վարձք ձեր բազում են յերկինս . զի այսպէս

հալածեցին զմարգարէան որ յառաջ քան զձեզ էին: (13) Դուք էք ազ
 երկրի. ապա թէ ազն անհամի ²²⁴ իւ յաղիցի. ոչ իմիք ²²⁹ ազդիցէ այնուհետև,
 բայց եթէ ընկենուլ արտաքս, և կոխան լինել 'ի մարդկանէ: (14) Դուք
 էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաքչել՝ որ 'ի վերայ լերին կայցէ:
 (15) Եւ ոչ լուցանեն ճրագ՝ և դնեն ընդ գրուանաւ, այլ 'ի վերայ աշտա-
 նակի, և լոյս տայ ամենեցուն որ 'ի տանն իցեն: (16) Այնպէս լուսաւո-
 րեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զդործս ձեր բարիս,
 և փառաւորեսցեն զշայր ձեր որ յերկինս է:

(17) Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ
 եկի լուծանել՝ այլ ընուլ: (18) Ամէն ասեմ՝ ձեզ, Մինչև անցցեն երկինք և ¹⁰
 երկիր, յովա մի՛ որ նշանախեց մի է՝ ոչ անցցէ յօրինացն և 'ի մարգարէից
 մինչև ամենայն եղիցի¹: (19) Որ ոք լուծցէ մի ինչ 'ի պատուիրանացս յայս-
 ցանէ 'ի փոքունց, և ուսուցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքա-
 յութեան երկնից. իսկ որ արասցէ և ուսուցէ, նա մեծ կոչեսցի յարքա-
 յութեան երկնից: (20) Բայց ասեմ՝ ձեզ, Չի եթէ ոչ առաւելուցու արդա-
 րութիւն ձեր աւելի քան զզպրացն և զփարիսեցուց, ոչ մտանիցէք յար-
 քայութիւն երկնից: (21) Լուարուք զի ասացաւ առաջնոցն թէ Մի՛ սպանա-
 ներ. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի: (22) Այլ ես
 ասեմ՝ ձեզ, Եթէ ամենայն որ բարկանայ եղբոր իւրում տարապարտուց,
 պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար, պար- ²⁰
 տաւոր լիցի ասանի. և որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր լիցի
 'ի գեհնէն հրոյ: (23) Եթէ մատուցանիցես զպատարագ քո 'ի վերայ սեղա-
 նոյ, և անդ յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունի ինչ խէթ զքէն, (24) Թո՛ղ զպա-
 տարագն քո առաջի սեղանոյն. երթ նախ հաշտեանց ընդ եղբոր քում,
 և ապա եկեալ մատուցիր զպատարագն քո: (25) Լեր իրաւախոհ ընդ [—]
 ոտիս քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա 'ի ճանապարհի. զուցէ ^{243, 525, 563}
 մտանիցէ զքեզ ոտիս դատաւորի, և դատաւորն դահճի, և արկանիցիս
 'ի բանտ: (26) Ամէն ասեմ՝ քեզ. ոչ ելանիցես անտի մինչև հատուցանի-
 ցես զյետին նաքարակիտն: (27) Լուարուք զի ասացաւ, Մի՛ շնար. (28)
 Բայց ես ասեմ՝ ձեզ. Թէ ամենայն որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ ³⁰
 նմա, անդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում: (29) Եթէ ակն քո աջ
 զայթակղեցուցանէ զքեզ, խլեմ զնա և ընկեմ 'ի քէն. զի լաւ է քեզ եթէ

Ty

Ty

2

¹ ἢ μὴ κεραία; das ἢ „oder“ ist als ἢ aufgefaßt worden, und so erklärt sich der armenisch unpassende Relativsatz որ . . . է.

մի յանդամոց քոց կորիցէ, և մի ամենայն մարմինդ քո անկանիցի 'ի գե-
 Տեն: (30) Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հատ վնա և
 ընկեա՛ ՚ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի ամենայն
 մարմինդ քո արկանիցի 'ի գեհէն: (31) Ապաքէն ասացաւ, Եթէ որ
 արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն. (32) Բայց ես ասեմ
 ձեզ, Եթէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան՝
 նա տայ նմա շնալ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ: (33) Դարձեալ լուա-
 րուք զի ասացաւ առաջնոցն. Մի երզնուցուս սուտ, բայց հատուցես
 Տեառն զերգմունս քո: (34) Այլ ես ասեմ ձեզ Ամենևին մի երզնուլ, մի յեր-
 10 կինս՝ զի աթոռ է Աստուծոյ, (35) Եւ մի յերկիր՝ զի պատուանդան է ոտից
 նորա, և մի յերուսաղէմ՝ զի քաղաք է մեծի Արքայի. (36) Եւ մի 'ի գլուխ
 քո երզնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ: (37)
 Այլ եղիցի ձեր բան՝ այոն այո, և ոչն ոչ. զի աւելին քան զայն 'ի չարէն
 է; (38) Լուարուք զի ասացաւ. Ակն ընդ ազան, և ատամն ընդ ատաման:
 (39) Այլ ես ասեմ ձեզ՝ Մի կալ հակառակ չարին. այլ եթէ ոք ածիցէ ապ-
 տակ յաջ ծնօտ քո, դարձո՛ նմա և զմիւսն: (40) Եւ որ կամիցի ոք դատել
 և առնուլ զշապիկս քո, թո՛ղ 'ի նա և զբաճկոն քո: (41) Եւ որ տարապար-
 հակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա և երկուս: (42) Որում խնդրէ
 'ի քէն՝ տո՛ւր. և որ կամի փոխ առնուլ 'ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս:
 20 (43) Լուարուք ապաքէն զի ասացաւ. Սիրեսցես զընկեր քո, և ատեսցես
 զթշնամին քո: (44) Այլ ես ասեմ ձեզ, Սիրեսցէք զթշնամիս ձեր, օրհնե-
 ցէք զանիժիչս ձեր, բարի արարէք ²⁶⁷ ատելեաց ձերոց, և աղօթս արարէք
 'ի վերայ այնոցիկ՝ որ լլկենն զձեզ և հալածեն. (45) Ձի եղիջիք որդիք
 Հօր ձերոյ որ յերկինսն է. զի զարեգակն իւր ծագէ 'ի վերայ չարաց և բա-
 րեաց, և ածէ անձրև 'ի վերայ արդարոց և մեղաւորաց: (46) Ձի եթէ սիրի-
 ցէք զայնոսիկ ²²⁶ որ սիրենն զձեզ՝ զինչ վարձք իցեն. ոչ ապաքէն և մաք-
 սաւորք զնոյն գործեն: (47) Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բարեկամաց
 ձերոց՝ զինչ աւելի առնէք. ոչ ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն
 գործեն: (48) Արդ եղերո՛ւք դուք կատարեալք որպէս և Հայրն ձեր երկ-
 30 նաւոր կատարեալ է:

525,



ԳԼ. 2

(1) Չգնչ լերուք ողորմութեան ձերում մի առնել առաջի մարդկան, որպէս թէ 'ի ցոյց ինչ նոցա. դուցէ և վարձս ոչ ընդունիցիք 'ի Հօրէն ձերմէ՝ որ յերկինսն է: (2) Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի հարկաներ փող առաջի քո, որպէս կեղծաւորքն առնեն 'ի ժողովուրդս և 'ի հրապարակս՝ որպէս զի փառաւորեսցին 'ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա: (3) Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո. (4) Որպէս զի եղիցի ողորմութիւն քո 'ի ծածուկ և Հայրն քո որ տեսանէ 'ի ծածուկ՝ հատուցէ քեզ յայտնապէս: (5) Եւ յորժամ յաղօթս կայցես, մի լինիցիս որպէս կեղծաւորքն. 10 զի սիրեն 'ի ժողովուրդս և յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս. որպէս զի երևեսցին մարդկան. ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա: (6) Այլ դու յորժամ կայցես յաղօթս, մ'ո՛ւտ 'ի սենեակ քո, և փակեմ զդուրս քո, և կից յաղօթս առ Հայր քո 'ի ծածուկ. և Հայրն քո որ տեսանէ 'ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս: (7) Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի շատախօսք լինիք իբրև զշեթանոսսն. զի համարին եթէ 'ի բազում խօսից իւրեանց լսելի լինիցին: (8) Արդ մի նմանիցէք նոցա. զի գիտէ Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչև ձեր խնդրեալ ինչ իցէ 'ի նմանէ: (9) Եւ արդ այսպէս կացէք դուք յաղօթս. Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո: (10) Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի: (11) Չհաց մեր հանապազօրդ ա՛նք մեզ այսօր: (12) Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: (13) Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն: (14) Չի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր: (15) Ապա թէ ո՛չ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ո՛չ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր: (16) Եւ յորժամ պահիցէք՝ մի լինիք իբրև զկեղծաւորսն արտմեալք. որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երևեսցին մարդկան թէ պահիցեն. ամէն ասեմ ձեզ, Այն իսկ են վարձք նոցա: (17) Այլ դու յորժամ պահիցես, Օ՛ձ զգլուխ քո՝ և լուս զերեսս քո, 30 (18) Չի մի երևեսցիս մարդկան իբրև զպահօղ. այլ Հօրն քում 'ի ծածուկ. և Հայրն քո որ տեսանէ 'ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս: (19) Մի

գանձէք ձեզ գանձս յերկրի. ուր ցեց և ուտիճ ապականեն, և ուր գողք
 աղան հատանեն և գողանան: (20) Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս,
 ուր ոչ ցեց և ոչ ուտիճ ապականեն, և ոչ գողք աղան հատանեն, և գողանան;
 (21) Ձի ուր գանձք ձեր են անդ և սիրտք ձեր եղիցին:

- (22) Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ է, ամենայն մարմինդ
 լուսաւոր եղիցի: (23) Ապա եթէ ակն քո չար է ամենայն մարմինդ խաւարին
 եղիցի. իսկ արդ՝ եթէ լոյսդ որ ՚ի քեզ է խաւար է, խաւարն իրջափ
 ևս: (24) Ոչ սք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ, և զմիւսն
 սիրիցէ. կամ զմին մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք Աս-
 10 տուծոյ ծառայել և մամոնայի: (25) Վասն այգորիկ ասեմ ձեզ Մի հո-
 գայք վասն ոգւոց ձերոց՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք. և մի վասն
 մարմնոց ձերոց՝ թէ զինչ ազանիցիք. ոչ ապաքէն ոգի առաւել է քան
 զկերակուր՝ և մարմին քան զհանդերձ: (26) Հայեցարո՛ւք ՚ի թոշուսս
 երկնից՝ զի ոչ վարեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն ՚ի շտեմարանս, և Հայրն
 — ձեր երկնաւոր կերակրէ զնոսս. ոչ ապաքէն դուք առաւել էք քան զնո-
 սս: (27) Իսկ արդ՝ ո՞ր ՚ի ձէնջ առ հոգալ իւրում՝ յաւելուլ կարիցէ ՚ի հա-
 սակ իւր կանգուն մի: (28) Եւ վասն հանդերձի զի հոգայք. հայեցարո՛ւք
 ՚ի շուշանն վայրենի՝ սրպէս աճէ. ոչ ջանայ և ոչ նիւթէ: (29) Ասեմ ձեզ՝
 զի ոչ Սոզումնոն յամենայն ՚ի փառսն իւրում² զգեցաւ իբրև զմի ՚ի նոցանէ.
 20 (30) Իսկ եթէ զխոտն ՚ի վայրի, որ այսօր է և վաղիւն ՚ի հնոց արկանի,
 Աստուած այնպէս զգեցուցանէ. իրջափ ևս առաւել զձեզ թերահասաւք:
 (31) Մի այսուհետև հոգայցէք և ասիցէք. Ձինչ կերիցուք՝ կամ զինչ
 արբցուք՝ կամ զինչ զգեցցուք: (32) Ձի գայդ ամենայն հեթանոսք խնդրեն.
 քանզի դիտէ Հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն: (33)
 — Խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ և զարդարութիւնն նորա,
 և այդ ամենայն յաւելցի ձեզ: (34) Մի այսուհետև հոգայցէք վասն վաղու-
 ին՝ զի վաղիւն վասն իւր հոգասցի, շատ է աւուրն չար իւր:

ԳԼ. Է

(1) Մի գատէք՝ զի մի գատիցիք. (2) Ձի որով գատաստանաւ գատէք՝
 30 գատելոց էք. և որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ: (3) Ձի տեսանես զչիւղ

² Zu իւրում s. § 206.



4
 յական եղբոր քո և ՚ի քում ականդ զգերանդ ո՛չ տեսանես : (4) Կամ զխարդ
 ասես ցեղբայր քո, Թո՛ղ հանից զչիւղդ յականէ քումմէ. և ահաւազիկ
 ՚ի քում ականդ գերան կայ : (5) Կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ
 քումմէ, և ապա հայեսցես հանել զչիւղն յականէ եղբոր քո : (6) Մի տայք
 զսրբութիւն շանց. և մի արկանէք զմարգարիտս ձեր տռաջի խոզաց,
 զի մի առ ոտն կոխեսցեն զնոսա, և դարձեալ երգիծուցանիցեն զձեզ : (7)
 Խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտջիք, բախեցէք և բացցի ձեզ : (8)
 Զի ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի
 նմա : (9) Ո՛ր իցէ ՚ի ձէնջ մարդ՝ ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քանր
 տայցէ նմա : (10) Եւ կամ խնդրիցէ ձուկն, միթէ ծձ տայցէ նմա : (11) Արդ՝
 եթէ դուք որ չարդ էք՝ գիտէք պարզես բարիս տալ որդուց ձերոց, ինչպիսի
 ևս առաւել Հայրն ձեր որ յերկինս է՝ տացէ բարիս այնոցիկ որ խնդրն
 զնա : (12) Զամենայն որ միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ,
 այնպէս և դուք արարէք նոցա. զի այն իսկ են օրէնքն և մարգարէք : (13)
 Մտէք ընդ նեղ դուռն. քանզի ընդարձակ է դուռնն՝ և համարձակ ճանա-
 պարհն՝ որ տանի ՚ի կորուստ. և բազումք են որ մտանեն ընդ նա : (14)
 Քանզի անձուկ է դուռնն՝ և նեղ ճանապարհն՝ որ տանի ՚ի կեանս, և սա-
 կաւք են որ գտանեն զնա : (15) Զգո՛յճ լերուք ՚ի սուտ մարգարէիցն՝ որ
 գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և ՚ի ներքոյ են գայլք յափշտակողք :
 (16) ՚ի պտղոյնոցա ծանիջիք զնոսա : միթէ քաղիցէն ՚ի փշոց խաղող՝ կամ ՚ի
 տատասկէ թուզ : (17) Այսպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ,
 և ծառ չար՝ պտուղ չար առնէ : (18) Ո՛չ կարէ ծառ բարի պտուղ չար առ-
 նել՝ և ո՛չ ծառ չար պտուղ բարի առնել : (19) Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ
 պտուղ բարի, հատանի և ՚ի հուր արկանի : (20) Ապա ՚ի պտղոյ նոցա
 ծանիջիք զնոսա : (21) Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր Տէր, մտցէ յարքա-
 յութիւն երկնից. այլ որ առնէ զկամս Հօր իմոյ որ յերկինսն է : (22) Բա-
 զումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ. Տէր Տէր՝ ո՛չ յանուն քո մարգարէա-
 ցաք, և յանուն քո դես հանաք, և յանուն քո զօրութիւնս բազումս արա-
 րաք : (23) Եւ յայնժամ ասացից ցնոսա՝ եթէ Ո՛չ երբէք գիտէի զձեզ. ՚ի
 բնց կացէք յինէն ամենեքեան՝ ոյք գործէիք զանօրէնութիւն : (24) Ամե-
 նայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և առնէ զսոսա, նմանեսցի առն իմաստ-
 նոյ՝ որ շինեսց զտուն իւր ՚ի վերայ վիմի : (25) Իջին անձրեք՝ և խաղացին
 գետք, շնչեցին հողմք՝ և բախեցին զտունն, և ո՛չ կործանեցաւ. քանզի
 ՚ի վերայ վիմի հաստատեալ էր : (26) Եւ ամենայն որ լսէ զբանս իմ՝ գայ-

սոսիկ՝ և ոչ առնէ գտոսս, նմանեսցի առն յիմարի՝ որ շինեաց գտուն իւր ՚ի վերայ աւագոյ: (27) Իջին անձրեք՝ յարեան գետք, շնչեցին հողմք՝, հարին գտունն, և անկաւ. և էր կործանումն նորա մեծ յոյժ: (28) Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա: (29) Ձի իբրև իշխանութեամբ ուսուցանէր՝ և ոչ որպէս զպիրքն:

ԳԼԸ

(1) Այլ իբրև էջ ՚ի լեռնէ անտի, գնացին զինի նորա ժողովուրդք բազումք: (2) Եւ ահա մատուցեալ բորոտ մի, երկիրպագանէր նմա, և ասէր. Տէր՝ եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել: (3) Ձգեաց զձեռն իւր և հասոյց ՚ի նա Յիսուս՝ և ասէ. Կամիմ՝ սրբեաց. և վաղվաղակի սրբեցաւ ՚ի նմանէ բորոտութիւնն: (4) Եւ ասէ ցնա Յիսուս. Ձգոյ՛ լեր՝ մի ումեք ասիցես. այլ երթ ցոյց զանձն քո քահանային, և մատո՞ զպատարագն, զոր հրամայեաց Մովսէս ՚ի վկայութիւն նոցա: (5) Եւ մտեալ³ ՚ի Կափառնաուս մատեաւ առ նա հարիւրապետ մի, աղաչէր զնա, Եւ ասէր. (6) Տէր՝ մանուկ իմ անկեալ կայ ՚ի տան անդամաւոյ՞ չարաչար տանջեալ: (7) Ասէ ցնա Յիսուս. Ես եկից՝ և բժշկեցից զնա: (8) Պատասխանի ետ հարիւրապետն՝ և ասէ. Տէր՝ չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ իմով մտցես. այլ ասս՝ բանիւ, և բժշկեսցի մանուկն իմ: (9) Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինև զինուորս. ասեմ սմա Երթ՝ և երթայ, և այլում թէ Եկ՝ և գայ, և ծառայի իմում թէ Արո՞ զայս՝ և առնէ: (10) Իբրև լուաւ Յիսուս՝ զարմացաւ, և ասէ ցայնոսիկ՝ որ զհետն երթային. Ամէն ասեմ ձեզ՝ և ոչ յիարայէլի այսպիսի հաւատս զտի երբէք: (11) Բայց ասեմ ձեզ Ձի բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն՝ և բազմեսցին ընդ Աբրահամու և ընդ Սահակայ և ընդ Յակովբու յարքայութեան երկնից: (12) Եւ որդիքն արքայութեան ելցեն ՚ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց: (13) Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն. Երթ՝ և որպէս հաւատացերդ եղիցի քեզ. և ողջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ: (14) Եւ եկեալ Յիսուս ՚ի տուն Պետրոսի, ետես զի զոքանչ նորա անկեալ դնէր տապալցեալ. (15) Կալաւ զձեռանէ նորա՝ և եթող զնա ջերմնն. յոտն եկաց՝

³ Zum Partizip vgl. § 355 bb.

և պաշտէր զնոսա : (16) Իբրև եղև երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բազումս, և եհան զայսոն բանիւ. և զամենայն հիւանդսն բժշկեաց : (17) Զի լցցի բանն՝ որ ասացաւ ՚ի ձեռն Եսայեայ մարգարէի. Նա զհիւանդութիւնս մեր վերացոյց, և զցաւս մեր եբարծ :

(18) Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս զիւրև, հրամայեաց երթալ յայնկոյս : (19) Եւ մատուցեալ զպիր մի ասէ ցնա. Վարդապետ՝ եկից և ես զկնի քո յոր վայր և երթիցես : (20) Ասէ ցնա Յիսուս. Աղուեսուց որջք գոն՝ և թռչնոց երկնից բոյնք, այլ Որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր գիցէ զզուլիւ իւր : (21) Եւ մի ոմն յաշակերտացն նորա ասէ ցնա. Տէր՝ տո՛ւր ինձ հրաման՝ զի երթայց նախ թաղեցից զհայր իմ : (22) Ասէ ցնա Յիսուս. Եկ զկնի իմ, և թո՛ղ տուր մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց : (23) Եւ իբրև եմուտ ՚ի նաւն, զնացին զկնի նորա աշակերտքն նորա : (24) Եւ ահա շարժումն մեծ եղև ՚ի ծովուն՝ մինչ նաւին ծածկել յալեաց անտի, և ինքն ննջէր : (25) Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա և ասեն, Տէր՝ փրկեա՛ զմեզ՝ զի կորնչիմք : (26) Եւ ասէ ցնոսա. Ընդէր վատասիրտք էք սակաւահաւատք. յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոցն և ծովուն, և եղև խաղաղութիւն մեծ : (27) Եւ մարդիկն զարմացան՝ և ասէին. Ո՞րպիսի ոք իցէ սա՛ զի և հողմք և ծով հնազանդին սմա : (28) Եւ իբրև անց յայնկոյս յերկիրն Գերգեսացուց, պատահեցին նմա դիւահարսք երկու՝ ելեալք ՚ի գերեզմանացն, չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ : (29) Եւ ահա աղաղակեցին և ասեն. Զի կայ մեր և քո Յիսուս Որդի Աստուծոյ, եկիր տարաժամ տանջել զմեզ : (30) Եւ էր հեռագոյն ՚ի նոցանէ երամակ մի խոզից արօտական : (31) Եւ զևքն աղաչէին զնա և ասէին. Եթէ հանես զմեզ աստի, հրամանն տուր մեզ երթալ յերամակ խոզիցն : (32) Եւ ասէ ցնոսա. Երթայք. և նոքա ելեալ զնացին յերամակն խոզից. և զիմեաց ամենայն երամակն ՚ի դարէ անտի ՚ի ծով, և մեռան ՚ի ջուրսն : (33) Եւ խոզարածքն փախեան, և երթեալ ՚ի քաղաքն պատմեցին զամենայն, և զիրս դիւահարացն : (34) Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի. իբրև տեսին զնա՝ աղաչեցին զի զնասցէ ՚ի սահմանաց նոցա :

ԳԼԹ

(1) Եւ մտեալ 'ի նաւ անց յայնկոյս և եկն 'ի քաղաք իւր: (2) Եւ ահա մատուցին առ նա անդամաւոյժ մի, որ դնէր 'ի մահիճս. և տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամաւոյժն. Թողեալ լիցին քեզ մեղք քո: (3) Եւ ահա ոմանք 'ի դպրացն ասեն ընդ միտս. Հայհոյէ դա: (4) Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. Ընդէր խորհիք դուք չարիս 'ի սիրտս ձեր: (5) Զի՛նչ դիւրին է. ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել Արի՛ և շրջեաց: (6) Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն սւնի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեզս. յայնժամ ասէ ցանդամաւոյժն. Արի՛ ա՛ռ զմահիճս քո՛ և երթ 'ի տուն քո: (7) Եւ յարուցեալ զնաց 'ի տուն իւր: (8) Իբրև տեսին ժողովուրդքն, զարմացան, և փառաւոր առնէին զԱստուած զտուիչն այնպիսի իշխանութեան մարդկան:

(9) Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՛ ետես զայր մի, զի նստէր 'ի մաքսաւորութեան Մատթէոս անուն, և ասէ ցնա: Ե՛կ զկնի իմ. և յարուցեալ զնաց զկնի նորա: (10) Եւ եղև իբրև բազմեալ էր նա 'ի տան, և ահա բազում մաքսաւորք և մեղաւորք եկեալ և բազմեալ էին ընդ Յիսուսի՛ և ընդ աշակերտս նորա: (11) Իբրև տեսին փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս նորա. Ընդէր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր: (12) Իսկ Յիսուս իբրև լուա՛ւ ասէ ցնոսա. Ո՛չ է պիտոյ բժիշկ կարողաց՝ այլ հիւանդաց: (13) Երթ՛այք՝ ուսարո՛ւք զի՛նչ է. Զողորմութիւն կամիմ, և ո՛չ զգոհ. զի ո՛չ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս: (14) Յայնժամ մատեան առ նա աշակերտքն Յովհաննու՛ և ասեն, Ընդէր մեք և փարիսեցիքն պահեմք յաճախ, և քո աշակերտքդ ո՛չ պահեն: (15) Ասէ ցնոսա Յիսուս. Միթէ մարթ ի՛նչ իցէ մանկանց առազաստի սուզ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նոսա իցէ. այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի 'ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն: (16) Ոչ ո՛ք արկանէ կապերտ անթափ 'ի վերայ հնացեալ ձորձոյ. զի առնու ելանէ զլրութիւնն նորա 'ի հանդերձէն, և ևս չար պատառումն լինի: (17) Եւ ո՛չ արկանեն գինի նոր 'ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ տիկքն պատառին՝ և գինին հեղու, և տիկքն կորնչին. այլ արկանեն զգինի նոր 'ի տիկս նորս, և երկոքին պահին:

(18) Մինչդեռ նա զայս իօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիրպագանէր նմա՝ և ասէր. Դուստր իմ արդ ևս վախճանեցաւ. այլ

եկեալ զիցես զձեռն քո՝ ի վերայ նորա՝ և կեցցէ: (19) Յարեաւ Յիսուս՝ և զնաց զինի նորա աշակերտօքն հանդերձ: (20) Եւ ահա կին մի տեռատես երկոտասանամեայ՝⁴ մատուցեալ յետոյ մերձեցաւ ՚ի զրօշակ հանդերձի նորա: (21) Քանզի ասէր ՚ի մտի իւրում. թէ միայն մերձենամ ՚ի հանդերձս նորա՝ փրկիմ: (22) Իսկ Յիսուս իբրև դարձաւ և ետես զնա՝ ասէ. Քաջալերեանց դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ. և փրկեցաւ կինն ՚ի ժամէն յայնմանէ: (23) Իբրև եկն Յիսուս ՚ի տուն իշխանին, և ետես զփողարան և ամբօխ յոյժ, Ասէ ցնոսա. (24) ՚ի բաց զնացէք, զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ: (25) Եւ ծաղր առնէին զնա. և իբրև ել ամբօխն ՚ի բաց, եմուտ կալաւ զձեռանէ նորա, և յարեաւ աղջիկն: (26) Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն:

(27) Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք երկու աղաղակէին՝ և ասէին. Ողորմեանց մեզ Որդի Դաւթի: (28) Եւ իբրև եկն ՚ի տուն, մատեան առ նա կոյրքն. և ասէ ցնոսա Յիսուս. Հաւատանք՝ եթէ կարօղ եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա՝ Այո՛ Տէր: (29) Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՝ և ասէ. Ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ: (30) Եւ բացան աչք նոցա. և սաստեաց նոցա Յիսուս և ասէ. Չզոյճ կացէք՝ մի ոք զիտասցէ: (31) Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն: (32) Եւ յեղանեին նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի համր դիւահար: (33) Եւ յեղանել զիւին՝ խօսեցաւ համրն. և զարմացան ժողովուրդքն՝ և ասեն. Թէ եւ ոչ երբէք երևեցաւ այսպիսի ինչ յիսրայէլի: (34) Իսկ փարիսեցիքն ասէին, թէ Իշխանաւն դիւաց հանէ դա զդես:

(35) Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և ընդ գիւղս. ուսուցանէր ՚ի ժողովուրդս նոցա, և քարոզէր զաւետարանն արքայութեան. և բժշկէր զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւնս ՚ի ժողովուրդեանն: (36) Եւ տեսեալ զժողովուրդսն՝ զթացաւ ՚ի նոսա՝ զի էին աշխատեալք և ցրուեալք իբրև զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ: (37) Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր. Հունձք բազում են՝ և մշակք սակաւ: (38) Արդ աղաչեցէք զՏէր հնձոց՝ զի հանցէ մշակս ՚ի հունձս իւր:

⁴ Zu երկոտասանամեայ vgl. § 100.

Umschrift

Die Umschrift ist die gleiche wie in meiner Altarmenischen Grammatik. Zu bemerken ist nur, daß das armenische Zeichen *o*, das in der Grammatik durch die ältere Form *u* ersetzt worden ist, hier dem Original gemäß beibehalten worden ist (= *ō*).

Evangelium des Matthäus, cap. 5

(1) Ew tesimal zžoovurdsn el i learn; ew ibrew nstaw and matean. ar na ašakertk' nora. (2) Ew bačeał zberan iwr usučanēr znosa ew asēr: (3) Erani ałk'ataç hogwov, zi noça ē ark'ayut'iwn erkniç. (4) Erani sgaworaç, zi nok'a mxit'aresçin. (5) Erani hezoç, zi nok'a žařangesçen zerkir. (6) Erani or k'alčeał ew carawi ičen ardarut'ean, zi nok'a yagesçin. (7) Erani ołormacaç, zi nok'a olormut'iwn gtčen. (8) Erani aynoçik or surb en srtiwk', zi nok'a zAstuac tesçen. (9) Erani xałalararaç, zi nok'a ordik' Astucoy koçesçin. (10) Erani or halaceał ičen vasn ardarut'ean, zi noça ē ark'ayut'iwn erkniç. (11) Erani ē jez yoržam naxatičen zjez ew halacesçen, ew asičen zame-nayn ban čar zjēņ sut vasn im. (12) Čncaçēk' ew urax leruk', zi varjk' jer bazum en yerkins; zi aypēs halaceçin zmargarēs or yařaj k'an zjez ēin. (13) Duk' ēk' ał erkri; apa t'ē ałn anhami iw yaliçi; oç imik' azdiçē aynuhe-tew bayç et'ē ənkenul artak's, ew koxan linel i mardkanē. (14) Duk' ēk' loys ašxarhi; oç karē k'alak' t'ak'čel or i veray lerin kayçē. (15) Ew oç lučanen črag ew dnen ənd druanaw, ayl i veray aštanaki, ew loys tay ame-neçun or i tann ičen. (16) Aynpēs lusaworesçē loys jer ařaji mardkan, orpēs zi tesçen zgorcs jer baris, ew p'ařaworesçen zHayr jer or yerkins ē.

(17) Mi hamarik' et'ē eki lucanel zōrēns kam zmargarēs; oç eki lucanel ayl lnul. (18) Amēn asem jez: Minčew ançčen erkink' ew erkir, yovt mi or nšana-xeç mi ē oç anççē yōrinaçn ew i margarēiç, minčew amenayn eliçi. (19) Or ok' luccē mi inç i patuiranaçs yaysçanē i p'ok'unç, ew ususçē aynpēs zmardik, p'ok'r koçesçi yark'ayut'ean erkniç; isk or arasçē ew ususçē, na mec koçesçi yark'ayut'ean erkniç. (20) Bayç asem jez: Zi et'ē oç ařaweluçu ardarut'iwn jer aweli k'an zdpraçn ew zp'ariseçwoç, oç mtaniçēk' yark'ayut'iwn erkniç. (21) Luaruk' zi asaçaw ařajnoçn t'ē Mi spananer; zi or spananiçē, partakan liçi datastani. (22) Ayl es asem jez: Et'ē amenayn or barkanay elbōr iwrum tarapartuç, partawor liçi datastani; ew or asiçē çelbayr iwr yimar, partawor liçi ateni, ew or asiçē çelbayr iwr moros, partawor liçi i gehen hroy. (23) Et'ē matuçaniçes zpatarag k'o i veray selanoy, ew and yišes-çes et'ē elbayr k'o uni inç xēt' zk'ēn. (24) T'ol zpataragn k'o ařaji sela-noyn; ert' nax hašteaç ənd elbōr k'um, ew apa ekeal matusjir zpataragn

k'o. (25) Ler irawaxoh ənd osoxi k'um valagoyñ, minçdeñ içes ənd nma i çanaparhi; guçē matniçē zk'ez osoxn datawori, ew dataworn dahçi, ew arkaniçis i bant. (26) Amēn asem k'ez: oç elaniçes anti minçew hatuçaniçes zyetin nak'arakitn. (27) Luaruk' zi asaçaw: Mi šnar. (28) Bayç es asem jez: T'ē amenayn or hayi i kin mard ar i çankanaloy nma, andēn šnaçaw ənd nma i srti iwrum. (29) Et'ē akn k'o aļ gayt'akleçuçanē zk'ez, xlea zna ew ənkea i k'ēn; zi law ē k'ez et'ē mi yandamoç k'oç koriçē, ew mi amenayn marmind k'o ankaniçi i gehen. (30) Ew et'ē aļ jeñ k'o gayt'akleçuçanē zk'ez, hat zna ew ənkea i k'ēn; zi law ē k'ez et'ē mi yandamoç k'oç koriçē, ew mi amenayn marmind k'o arkaniçi i gehen. (31) Apak'ēn asaçaw: Et'ē or arjakiçē zkin iwr taçē nma zarjakmann. (32) Bayç es asem jez: Et'ē amenayn or arjakē zkin iwr arañç bani poñkut'ean, na tay nma šnal, ew or zarjakealn arñē šnay. (33) Darjeal luaruk' zi asaçaw araññoçn. Mi erdnuçus sut, bayç hatuşçes Tearñ zerdmunş k'o. (34) Ayl es asem jez: Amenewin mi erdnul, mi yerkins, zi at'or ē Astucoy, (35) Ew mi yerkir, zi partuandan ē otij nora, ew mi yErusalēm zi k'alak' ē meci Ark'ayi. (36) Ew mi i glux k'o erdnuçus, zi oç kares maz mi spitak arnel kam t'ux. (37) Ayl eliçi jer ban ayon ayo, ew oçn oç, zi awelin k'an zayn i çarēn ē. (38) Luaruk' zi asaçaw: Akn ənd akan, ew atamn ənd ataman. (39) Ayl es asem jez: Mi kal hakařak çarin; ayl et'ē ok' aciçē aptak yaļ enōt k'o, darjo nma ew zmiwsn. (40) Ew or kamiçi ok' datel ew arñul zšapiks k'o, t'oł i na ew zbaçkon k'o. (41) Ew or taraparhak variçē zk'ez mlon mi, ert' ənd nma ew erkus. (42) Orum xndrē i k'ēn tur; ew or kami p'ox arñul i k'ēn, mi darjuçaner zeress. (43) Luaruk' apak'ēn zi asaçaw: Siresçes zənker k'o, ew atesçes zt'šnamin k'o. (44) Ayl es asem jez: Sireçēk' zt'šnamis jer, orhneçēk' zaniciş jer, bari ararēk' ateleaç jeroç, ew alōt's ararēk' i veray aynoçik or llkenn zjez ew halacen. (45) Zi elijik' ordik Hōr jeroy or yerkinsn ē; zi zaregagn iwr cagē i veray çaraç ew bareaç, ew acē anjrew i veray ardaroç ew meławoraç. (46) Zi et'ē siriçēk' zaynosik or sirenn zjez zinç varjk' içen; oç apak'ēn ew mak'sawork' znoyn gorcen. (47) Ew et'ē tayçēk' miayn oljoyn barekamac jeroç zinç aweli arñēk'; oç apak'ēn mak'sawork' ew meławork' znoyn gorcen. (48) Ard eleruk' duk' katarealk' orpēs ew Hayrn jer erkñawor katareal ē.

Evangelium des Matthäus, cap. 6

(1) Zgoyš leruk' olormut'ean jerum mi arnel arañi mardkan, orpēs t'ē i çoyç inç noça; guçē ew varjs oç ənduniçik' i Hōrēn jermē or yerkinsn ē. (2) Ayl yoržam arniçes olormut'iwn, mi harkaner p'ol arañi k'o, orpēs

kelcawork'n ainen i žolovurds ew i hraparaks, orpēs zi p'araworesčin i mardkanē; amēn asem jez, ayn isk en varjk' noča. (3) Ayl du yoržam olormut'iwn ariņes, mi gitascē jax k'o zinč gorcē aĵ k'o. (4) Orpēs zi eliçi olormut'iwn k'o i cacuk ew Hayrn k'o or tesanē i cacuk hatuscē k'ez yaytnapēs. (5) Ew yoržam yalōt's kayčes, mi liničis orpēs kelcawork'n, zi siren i žolovurds ew yankiwns hraparakač kal yalōt's; orpēs zi erewesčin mardkan; amēn asem jez, ayn isk en varjk' noča. (6) Ayl du yoržam kayčes yalōt's, mut i seneak k'o, ew p'akea zdurs k'o, ew kač yalōt's ar Hayr k'o i cacuk; ew Hayrn k'o or tesanē i cacuk, hatuscē k'ez yaytnapēs. (7) Ew yoržam kayčēk' yalōt's, mi šataxōsk' linik' ibrew zHet'anossn, zi hamarin et'ē i bazum xōsič iwreanč lseli liničin. (8) Ard mi nmaničēk' noča, zi gitē Hayrn jer zinč pitoy ē jez, minččew jer xndreal inč ičē i nmanē. (9) Ew ard aypēs kačēk' duk' yalōt's. Hayr mer or yerkins, surb eliçi anun k'o. (10) Ekesčē ark'ayut'iwn k'o; eličin kamk' k'o orpēs yerkins ew yerkri. (11) Zhač mer hanapazord tur mez aysōr. (12) Ew t'ol mez zpartis mer, orpēs ew mek' t'olumk' meroč partapanaç. (13) Ew mi tanir zmez i p'orjut'iwn, ayl p'rkea zmez i čarē; zi k'o ē ark'ayut'iwn ew zōrut'iwn ew p'ark' yawiteans amēn. (14) Zi et'ē t'olučuk' mardkan zyančans noča, t'olčē ew jez Hayrn jer erkawor. (15) Apa t'ē oč t'olučuk' mardkan zyančans noča, ew oč Hayrn jer t'olčē jez zyančans jer. (16) Ew yoržam pahičēk' mi linik' ibrew zkelcaworsn trtmealk'; or apakanen zeress iwreanč, orpēs zi erewesčin mardkan t'ē pahičen; amēn asem jez: Ayn isk en varjk' noča. (17) Ayl du yoržam pahičes: Oc zglux k'o ew lua zeress k'o. (18) Zi mi erewesčis mardkan ibrew zpahōl; ayl Hōrn k'um i cacuk; ew Hayrn k'o or tesanē i cacuk, hatuscē k'ez yaytnapēs. (19) Mi ganjēk' jez ganjs yerkri; ur čeč ew utič apakanen, ew ur golk' akan hatanen ew golanan. (20) Ayl ganječēk' jez ganjs yerkins, ur oč čeč ew oč utič apakanen, ew oč golk' akan hatanen, ew golanan. (21) Zi ur ganjk' jer en and ew sirtk' jer eličin.

EVANGELIUM DES MARCUS

ԳԼ. Զ

(1) Եւ ել անտի եկն 'ի գաւառ իւր. և երթային զհետ նորա աշակերտքն իւր: (2) Եւ եղև 'ի շաբաթուն՝ սկսաւ ուսուցանել 'ի ժողովրդեանն. և բազումք իբրև լսէին՝ զարմանային ընդ վարդապետութիւնն նորա՝ և ասէին. Ուստի է սմա այս՝ կամ զինչ է իմաստութիւնս որ տուեալ է սմա, զի զօրութիւնք այսպիսիք 'ի ձեռաց սորա լինին: (3) Ո՞չ սա է մանուկ հիւսանն, և որդին Մարեմայ, եղբայր Յակոբայ և Յովսեայ և Յուդայի և Սիմոնի, և չիցեն քորք դորա աստ առ մեզ. և գայթաղէին 'ի նա: (4) Եւ ասէ ցնոսա. Ո՞չ է մարգարէ անարգ, բայց եթէ 'ի գաւառի իւրում և յազգատոհմի և 'ի տան իւրում: (5) Եւ ոչ կարէր անդ և ոչ մի ինչ զօրութիւն առնել, բայց սակաւ հիւանդաց ձեռն եղեալ բժշկէր զնոսա: (6) Եւ զարմանայր վասն անհաւատութեան նոցա:

(7) Եւ շրջէր շուրջ զգաւառօքն, և ուսուցանէր: Եւ կոչեաց առ ինքն զբերկոտասանն, և սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս, և տայր նոցա իշխանութիւն 'ի վերայ այսոց պղծոց: (8) Եւ պատուիրեաց նոցա զի մի ինչ բարձցեն 'ի ճանապարհ, բայց միայն գաւազան. մի պարկ, մի հաց, մի պղինձ 'ի գօտիս. (9) Այլ ազանել հողաթափս, և Մի զգենուցուք, ասէ, երկուս պարեգօտս: (10) Եւ ասէր ցնոսա. Յոր տուն մտանիցէք, անդէն օթեանս կալջիք մինչև ելանիցէք անտի: (11) Եւ որ ոչ ընկալցին զձեզ, և ոչ լուիցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց 'ի վկայութիւն նոցա: (12) Եւ ելեալ քարոզէին զի ապաշխարեացեն: (13) Եւ դևս բազումս հանէին. և օժանէին իւրով զբազում հիւանդս և բժշկէին զնոսա:

(14) Եւ լուաւ արքայ Հերովդէս, քանզի յայտնի եղև անուն նորա, և ասէր. Թէ Յովհաննէս մկրտիչ յարեաւ 'ի մեռելոց, և վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ: (15) Այլք ասէին թէ Եղիա է, իսկ այլքն թէ Մարգարէ է, կամ թէ իբրև զմի 'ի մարգարէից: (16) Իբրև լուաւ Հերովդէս, ասէ. Զորոյ ես զգլուին հատի զՅովհաննու, սա է նա, յարեաւ 'ի մեռելոց: (17) Զի ինքն Հերովդէս առաքեաց կալաւ զՅովհաննէս, և կապեաց զնա

և եղ 'ի բանտի վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբոր նորա, զի նա կին արար զնա: (18) Քանզի ասէր Յովհաննէս ցձերովդէս, թէ Ո՛չ է օրէնքեզ ունել զկին եղբոր քո: (19) Եւ Հերովդիա ռխացեալ էր ընդ նմա, և կամէր սպանանել զնա, և ո՛չ կարէր: (20) Ջի Հերովդէս երկնչէր 'ի Յովհաննէ. քանզի զիտէր զնա այր արդար և սուրբ, և սպասէր նմա, և լուեալ 'ի նմանէ բազում ինչ առնէր, և քաղցրութեամբ լսէր նմա: (21) Իբրև օր մի լինէր պարապոյ, յորժամ ընթրիս տայր Հերովդէս յաւուր ծննդոց իւրոց՝ նախարարաց իւրոց և հազարապետաց և մեծամեծաց Գալիլեացոց. (22) Եւ 'ի մտանել զստերն Հերովդիայ և 'ի կաքաւել, հաճոյ եղև Հերովդի և բազմականացն: Ասէ թագաւորն ցաղջիկն. Խնդրե՛ս յինէն զոր ինչ կամիս, և տաց քեզ: (23) Եւ երդուաւ նմա բազում անգամ, թէ Չոր ինչ և ինդրեսցես դու յինէն՝ տաց քեզ, մինչև ցկէս թագաւորութեան իմոյ: (24) Նա ելեալ ասէ ցմայր իւր. Ձինչ խնդրեցից, և նա ասէ, Չգլուխն Յովհաննու մկրտչի: (25) Եւ մտեալ անդրէն փութանակի առ թոգաւորն՝ ասէ. Կամի՛մ զի այժմ տացես ինձ վաղվաղակի 'ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի: (26) Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն. այլ վասն երդմանցն և կոչնականացն, ո՛չ կամեցաւ անարգել զնա. (27) Եւ առաքեաց վաղվաղակի թագաւորն դահիճ, և հրամայեաց բերել զգլուխն նորա. և չոքաւ գլխատեաց զնա 'ի բանտին, (28) Եւ եբեր զգլուխն նորա սկտեղը՝ և ետ ցաղջիկն, և աղջիկն տարաւ ետ մօր իւրում: (29) Իբրև լուան աշակերտքն նորա, եկին բարձին զմարմինն և եղին 'ի գերեզմանի:

(30) Ժողովեցան առաքեալքն առ Յիսուս, և պատմեցին նմա զամենայն ինչ զոր արարին և զոր ուսուցին: (31) Եւ ասէ ցնոսա Յիսուս. Եկն՛յք դուք առանձինն յանապատ տեգի, և հանգիջիք սակաւ մի. զի էին բազումք որ երթային և գային, և հաց անգամ չժամանէին ուտել: (32) Եւ զնացին նաուու յանապատ տեղի առանձինն: (33) Եւ տեսին զնոսա զի երթային, և զղացին բազումք. և հետի յամենայն քաղաքաց խուռն ընթանային անդր, և մերձենային⁵ առ նոսա. (34) Եւ ելեալ ետես ամբոխ բազում, և գթացաւ 'ի նոսա, զի էին իբրև ոչխարք՝ որոց ո՛չ իցէ հովիւ. և սկսաւ ուսուցանել զնոսա յոյժ: (35) Եւ իբրև բազում ժամ եղև⁶, մատուցեալ

⁵ մերձենամ „sich nähern“. Im griechischen Original steht προσήλθον „sie kamen zuvor“. Doch bietet die Θ-Textgruppe die Variante προσήλθον (αὐτοῖς), die offenbar der armenische Übersetzung zugrunde liegt.

⁶ Der armenische Ausdruck stimmt nicht zum griechischen Original (καὶ ἤδη ὥρα πολλή). Die Petersburger Bibel (1817) hat մինչ օր (աւր) կայ, was auch nicht stimmt.

16

X 2019



աշակերտքն ասէին. Տեղիս անապատ է, մինչդեռ աւուր կայ, (36) Արձակեան գոգոզովուրդսդ, զի երթեալ շուրջ յագարակս և ՚ի գեօղս՝ գնեսցեն իւրեանց զինչ ուտիցեն, զի աստ ուտել ինչ ոչ ունին: (37) Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. Դուք տուք զոցա ուտել. ասեն ցնա. Երթիցուք գնեսցուք երկերիւր դահեկանի հաց, և տացուք զոցա ուտել: (38) Ասէ ցնոսա. Քանի նկանակ ունիք՝ երթայք տեսէք. իբրև գիտացին, ասեն ցնա. Հինգ՝ և երկուս ձկուս: (39) Եւ հրամայեաց նոցա բազմել երախանս երախանս ՚ի վերայ դալար խոտոյ: (40) Եւ բազմեցան դասք դասք՝ ուր հարիւր և ուր յիսուն. (41) Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկուսն, հայեցաւ յերկինս, օրհնեաց՝ մանրեաց զնկանական և ետ ցաշակերտան զի արկցեն նոցա, և զերկուս ձկուսն բաշխեաց ամենեցուն: (42) Կերան և յագեցան. (43) Եւ բարձին զնշխարսն երկոտասան սակառի լի, և ՚ի ձկանց անտի: (44) Եւ էին որ կերանն՝ իբրև արք հինգ հազար.

(45) Եւ նոյն ժամայն ճեպեաց զաշակերտան մտանել ՚ի նաւ, և յառաջագոյն քան զնա երթալ յայնկոյս ՚ի Բեթսայիդա, մինչ ինքն զգոգոզովուրդսն արձակիցէ: (46) Եւ հրաժարեալ ՚ի նոցանէ ել ՚ի լեանն կալ յաղօթս: (47) Եւ իբրև երեկոյ եղև, էր նաւն ՚ի մէջ ծովուն, և ինքն ՚ի ցամաքի: (48) Եւ ետես զնոսա հողմակոծեալս ՚ի վարելն, զի էր հողմն ընդդէմ նոցա. և զչորրորդ պահու գիշերոյն գայ առ նոսա զնալով ՚ի վերայ ծովուն. և կամէր զանց առնել առ նոքօք: (49) Նոքա իբրև տեսին զի գնայր ՚ի վերայ ծովուն, համարեցան թէ առաջօք ինչ լինիցի, և զաղաղակ բարձին: (50) Քանզի ամենեքեան տեսին զնա՝ և խոռվեցան. և նա անդէն վազվազակի խօսեցաւ ընդ նոսա և ասէ. Քաջալերացարո՛ւք, ես եմ՝ մի երկնջիք: (51) Եւ ել ՚ի նաւն առ նոսա, և դադարեաց հողմն: Եւ առաւել ևս յիմարեալ էին ՚ի միտս իւրեանց, և զարմանային յոյժ: (52) Քանզի և ՚ի վերայ հացին ոչ իմացան, զի էր սիրտ նոցա թմբրեալ: (53) Եւ իբրև անցին յայնկոյս, եկին յերկիրն Գեննեսարէթ: (54) Եւ իբրև ելին ՚ի նաւէ անտի, իսկ և իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ: (55) Եւ ընթացեալ այսր անդր ընդ ամենայն գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս, ուր լսէին թէ անդ իցէ: (56) Եւ ուր և մտանէր ՚ի գեօղս կամ ՚ի քաղաքս կամ յագարակս, ՚ի հրապարակս զնէին զախտաժէտս, և աղաչէին զնա. զի գոնէ ՚ի քղանցս հանդերձից նորա մերձենայցեն. և որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան:

ԳԼ. Է

(1) Եւ ժողովեցան առ նա փարիսեցիքն և ոմանք՝ ՚ի դպրացն՝ որ եկեալ էին յԵրուսաղէմէ: (2) Եւ տեսեալ զոմանս յաշակերտացն անտի, զի խառնակ ձեռօք, այսինքն է, անլուայ ուտէին հաց, բամբասեցին. (3) Զի փարիսեցիքն և ամենայն Հրէայք՝ եթէ ոչ բռնալիր լուանան զձեռս, հաց ոչ ուտեն. քանզի ունին զաւանդութիւն ծերոցն. (4) Եւ ՚ի հրապարակէ մտեալ՝ եթէ ոչ նախ մկրտիցին, ոչ ուտեն. և այլ ինչ բազում է՝ զոր ընկնլան ունել, մկրտութիւնս բաժակաց և ստոմանաց և պղնձեաց և մահճաց: (5) Ապա հարցանեն ցնա փարիսեցիքն և դպիրք՝ թէ Ընդէր աշակերտքն քո ոչ զնան ըստ աւանդութեան ծերոցն, այլ խառնակ ձեռօք հաց ուտեն: (6) Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. թէ Բարեռք մարգարէացաւ Եսայի վասն ձեր կեղծաւորաց, որպէս ասաց. Ժողովուրդս այս չըթամբք մեծարէ զիս, և սիրտք նոցա հեռացեալ ՚ի բացեայ են յինէն: (7) Զուր պաշտեն զիս. ուսուցանեն վարդապետութիւնս զմարդկան պատուիրեալս: (8) Թողեալ զպատուիրանն Աստուծոյ, ունիք զմարդկան աւանդութիւն, մկրտութիւնս ստոմանաց և բաժակաց, և այլոց նմանեաց սոցին առնէք բազումս: (9) Եւ ասէ ցնոսա. Բարեռք խոտէք զպատուիրան Աստուծոյ, զի զձեր աւանդութիւնն հաստատիցէք: (10) Զի Մովսէս ասէ, Պատուեմ զհայր քո և զմայր. և որ չարախօսեցէ զհօրէ կամ զմօրէ, մահու վախճանեսցի: (11) Եւ դուք ասէք. Եթէ ասիցէ ոք ցհայր կամ ցմայր կորբան. որ է պատարագ, զոր յինէն օգտեսցիս. (12) Եւ ոչ ևս տայք թոյլ նմա առնել ինչ հօրն կամ մօր: (13) Եւ անարգէք զբանն Աստուծոյ ձերով աւանդութեամբն, զոր աւանդեցիք, և բազում ինչ այլ որ այսմ նման է առնէք: (14) Եւ կոչեալ առ ինքն զամենայն ժողովուրդն, ասէ ցնոսա. Լուարո՞ւք ինձ ամենքեան և ՚ի միտ առէք: (15) Ոչինչ արտաքուստ ՚ի մարդ մտեալ՝ եթէ կարիցէ պղծել զնա, այլ որ ելանէ ՚ի նմանէ, այն է որ պղծէ զմարդն: (16) Որ ունիցի ահանջս լսելոյ՝ լուիցէ:

(17) Եւ իբրև եմուտ ՚ի տուն յամբոխէ անտի, հարցանէին զնա աշակերտքն վասն առակին: (18) Եւ ասէ ցնոսա. Այդպէս և դուք անմիտ էք. ոչ իմանայք եթէ ամենայն որ արտաքուստ ՚ի ներքս մտանէ ՚ի մարդ, ոչ կարէ զնա պղծել. (19) Զի ոչ եթէ ՚ի սիրտ նորա մտանէ, այլ յորովայն՝ և արտաքս ելանէ. և սրբէ զամենայն կերակուրան: (20) Եւ ասէր, թէ Որ

ինչ 'ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ: (21) Զի 'ի ներքուստ 'ի սրտէ մարդկան խորհուրդք չարութեան ելանեն, (22) Նութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սպանութիւնք, ազահուութիւնք, չարութիւնք, նենգութիւնք, զիջութիւնք, չարակնութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն: (23) Այս ամենայն չարիք 'ի ներքուստ ելանեն, և պղծեն զմարդ:

(24) Եւ անտի յարուցեալ՝ եկն 'ի սահմանս Տիւրոսի և Սիդոնի. և մտեալ 'ի տունն ո՛չ ումեք կամէր յայտնել, և ո՛չ կարաց ծածկել: (25) Լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր յայտոյ պղծոյ. եկն անկաւ առաջի նորա: (26) Եւ կինն էր հեթանոս՝ Փիւնիկ Ասորի յազգէ. և աղաչէր զնա՝ զի զղեն հանցէ 'ի դստերէ նորա: (27) Եւ Յիսուս ասէ ցնա. Թո՛ղլ տուր նախ յազեսցին մանկունք, զի ո՛չ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց: (28) Նա պատասխանի ետ և ասէ. Տէր՝ և շունք 'ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին: (29) Եւ ասէ ցնա. Վասն այդր բանի երթ, ել զեն 'ի դստերէ քումմէ: (30) Գնաց 'ի տուն իւր, և եգիտ ելեալ զղեն, և զդուստրն, զի անկեալ զնէր 'ի մահիծս: (31) Եւ ելեալ միւսանգամ 'ի սահմանացն Տիւրոսի և Սիդոնի, և եկն 'ի ծովեզրն Գալիլէացոց 'ի մէջ սահմանացն 'ի Դեկապոլիս: (32) Եւ բերին առաջի նորա խուլ մի և համր. և աղաչէին զի ձեռն զիցէ 'ի վերայ նորա: (33) Եւ առեալ զնա մեկուսի յամբօխէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս նորա և եթուք անդր. և կալաւ զլեզուէ նորա, (34) Հայեցաւ յերկինս՝ յողոց եհան՝ և ասէ. Եփփաթայ՝ որ է բացիւր: (35) Եւ նոյն ժամայն բացան լսելիք նորա, և լուծան կապանք լեզուի նորա, և խօսէր ուղիղ: (36) Եւ պատուիրեաց նոցա զի մի ումեք ասիցեն. և որչափ նա պատուիրէր նոցա, նոքա ևս առաւել քարոզէին. (37) Եւ ևս քան զևս զարմանային և ասէին. Չամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի իլից լսել տայ և համերց խօսել:

ԳԼ. Ժ

(1) Եւ անտի յարուցեալ գայ 'ի սահմանս Հրէաստանի յայնկոյս Յորդանանու. և երթայր դարձեալ խոնեալ ժողովուրդն առ նա, և որպէս սովոր էր՝ միւսանգամ ուսուցանէր զնոսա: (2) Իսկ փարիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին զնա՝ և ասէին, եթէ Արթան իցէ առն զկին իւր արձակել: (3) Նա պատասխանի ետ նոցա և ասէ. Չինչ պատուիր-

եաց ձեզ Մովսէս : (4) Եւ նոքա ասեն . Մովսէս հրաման ետ գիր մեկնելոյ գրել , և արձակել : (5) Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա . Վասն խստասրտութեան ձերոյ գրեաց ձեզ զպատուիրանն զայն : (6) Այլ 'ի սկզբանէ արարածոց , արու և էգ արար զնոսա Աստուած , և ասէ : (7) Վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր , և երթիցէ զհետ կնոջ իւրոյ : (8) Եւ եղիցին երկուքն 'ի մարմին մի . և այնուհետև ո՛չ են երկու՝ այլ մարմին մի : (9) Արդ զոր Աստուած զուգեաց , մարդ մի մեկնեսցէ : (10) Եւ 'ի տան դարձեալ աշակերտքն զնոյն հարցին ցնա : (11) Եւ ասէ ցնոսա . Եթէ այր արձակեսցէ զկին իւր՝ և արասցէ այլ , չնայ : (12) Եւ կին եթէ ելցէ յառնէ իւրմէ՝ և եղիցի առն այլում , չնայ :

(13) Եւ մատուցանէին առ նա մանկտի՝ զի ձեռն գիցէ նոցա . իսկ աշակերտքն սաստէին այնոցիկ՝ որ մատուցանէին : (14) Իբրև ետես Յիսուս , բարկացեալ սաստեաց նոցա և ասէ . Թո՛ղ տուք մանկտոյդ զալ առ իս , և մի արգելուք զդոսա . զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ : (15) Ամէն ասեմ ձեզ . Որ ո՛չ ընկալցի զարքայութիւն Աստուծոյ իբրև զմանուկ՝ ո՛չ մտցէ 'ի նա : (16) Եւ առեալ զնոսա 'ի գիրկս ձեռն եղ 'ի վերայ և օրհնեաց զնոսա : (17) Եւ ընդ ելանէն նորա անտի 'ի ճանապարհ , ահաւասիկ ոմն մեծատուն ընթացեալ 'ի ծուկն իջանէր , հարցանէր ցնա՝ և ասէր . Վարդապետ բարի՝ զի՛նչ արարից զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից : (18) Եւ Յիսուս ասէ ցնա . Ձի ասես զիս բարի . չի՛ք ոք բարի բայց մի Աստուած : (19) Չպատուիրանս գիտես . Մի շնար , Մի ոք սպանաներ , Մի դողանար , Մի սուտ վկայեր . Պատուեա՞ զհայր քո և զմայր : (20) Նա պատասխանի ետ և ասէ ցնա , Վարդապետ՝ զայդ ամենայն արարի 'ի մանկութենէ իմմէ , արդ զի՛նչ ևս պակաս իցեմ : (21) Եւ Յիսուս հայեցեալ 'ի նա սիրեաց զնա , և ասէ ցնա . Մի ինչ պակաս է 'ի քէն . Եթէ կամիս կատարեալ լինե՛լ , երթ զոր ինչ ունիս վաճառեա՛ և տո՛ւր աղքատաց , և ունիցիս գանձս յերկինս , և ա՛ռ զխաչն՝ և եկ զկնի իմ : (22) Եւ նա խոթուեալ ընդ բանն՝ գնաց տրտում . զի ունէր ինչս բազումս : (23) Եւ հայեցեալ յայսկոյս յայնկոյս Յիսուս , ասէ ցաշակերտսն . Չի՞՞րդ դժուարին է որ զինչսդ ունին , մտանել յարքայութիւն Աստուծոյ : (24) Եւ աշակերտքն զարմացեալ էին 'ի վերայ բանիցն նորա . իսկ Յիսուս դարձեալ պատասխանի ետ նոցա և ասէ . Ո՛րդեակք ձրչափ դժուարին է յուսացելոց յինչս մտանել յարքայութիւն Աստուծոյ : (25) Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել , քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել : (26) Եւ նոքա

առաւել ևս զարմանային՝ և ասէին ընդ միմեանս. Իսկ քն կարասցէ ապրել :
(27) Հայեցեալ ընդ նոսա Յիսուս՝ ասէ. Առ ՚ի մարդկանէ այդ անհնարին է. այլ ոչ առ յԱստուծոյ :

(28) Սկսաւ ասել ցնա Պետրոս. Ահաւասիկ մեք թողաք զամենայն, և եկաք զկնի քո : (29) Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Ամէն ասեմ ձեզ՝ Ոչ ոք է որ եթող զտուն կամ զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ զմայր կամ զորդիս՝ կամ զազարակս վասն իմ կամ վասն աւետարանին. (30) Եթէ ոչ առնուցու հարիւրապատիկ այժմ յայսմ ժամանակի՝ տունս և եղբարս և քորս և մարս և որդիս և ազարակս հալածանօք հանդերձ, և յաշխարհին որ գալոց է զկեանսն յաւիտենականս : (31) Զի բազումք եղիցին առաջինք յետինք՝ և յետինք առաջինք : (32) Եւ էին ՚ի ճանապարհի մինչդեռ ելանէին յերուսաղէմ. և երթայր Յիսուս առաջի քան զնոսա, և զարմացեալ էին որ զհետն երթային՝ և երկնչէին :

Եւ առեալ միւսանգամ զերկոտասանն առանձինն, սկսաւ ասել նոցա զինչ անցք անցանելոց իցեն ընդ նա : (33) Թէ ահաւասիկ ելանեմք յերուսաղէմ, և Որդի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն և զպրաց, և դատեսցեն զնա ՚ի մահ, և մատնեսցեն զնա հեթանոսաց. (34) Եւ կատակեսցեն զնովաւ, և հարկանիցեն զնա, և թքանիցեն ՚ի նա, և սպանցեն. և յերիւր աւուր յարիցէ : (35) Եւ երթային առ նովաւ Յակովբոս և Յովհաննէս որդիքն Զերեղեայ, և ասեն ցնա. Վարդապետ կամիմք զի զոր ինչ խնդրեսցուք ՚ի քէն՝ արասցես մեզ : (36) Եւ նա ասէ ցնոսա. Զինչ կամիք յինէն զի արարից ձեզ : (37) Եւ նոքա ասեն ցնա. Տ՛ուր մեզ զի նստցուք մի յաջմէ քումմէ և մի յահեկէ՝ ՚ի փառսն քում : (38) Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Ո՛չ գիտէք զինչ խնդրէք. կարէք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոց եմ. կամ զմկրտութիւնն մկրտիլ՝ զոր ես մկրտելոց եմ : (39) Եւ նոքա ասեն ցնա, Կարեմք. և Յիսուս ասէ ցնոսա. Զբաժակն զոր ես ըմպելոց եմ ըմպիցէք, և զմկրտութիւնն զոր ես մկրտելոց եմ մկրտիցիք. (40) Այլ նստուցանել ընդ աջմէ իմմէ և ընդ ահեկէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց պատրաստեալ իցէ : (41) Եւ լուեալ զայն տասանցն, սկսան բարկանալ Յակովբայ և Յովհաննու : (42) Եւ Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն, և ասէ ցնոսա. Գիտէք զի որ յանուան իշխանքն են հեթանոսաց, տիրեն նոցա. և մեծամեծք նոցա, իշխան նոցա : (43) Ո՛չ նոյնպէս իցէ և ՚ի ձերում միջի. այլ որ կամիցի ՚ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. (44) Եւ որ կամիցի ՚ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ամենեցուն ծառայ : (45) Քանզի և Որդի

մարդոյ ի՛չ եկն անուղ պաշտօն՝ ալլ պաշտել, և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց :

(46) Եւ զան յԵրիքով. և ընդ ելանելն նորա յԵրիքովէ աշակերտօքն՝ և բազում ժողովրդով, որդի Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ յանցս ճանապարհի: (47) Իբրև լուաւ թէ Յիսուս նազովրեցի է, սկսաւ աղաղակել և ասել. Որդի Դաւթի Յիսուս ողորմեաց ինձ: (48) Եւ սաստէին նմա բազումք զի լռեսցէ. և նա առաւել ևս աղաղակէր. Որդի Դաւթի ողորմեաց ինձ: (49) Չտեղի առ Յիսուս՝ և հրամայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա. Քաջալերեաց, արի, կոչէ զքեզ: (50) Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր, յարեաւ և եկն առ Յիսուս: (51) Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ, Չինչ կամիս թէ արարից քեզ. ասէ ցնա կոյրն. Ռ՛աբբունի՛ զի բացայց⁷: (52) Եւ Յիսուս ասէ ցնա, Երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ. և վաղվաղակի բացաւ, և երթայր զհետ նորա՝ ի ճանապարհին:

ԳԼ. ԺԱ.

(1) Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ՝ ի Բեթփաքէ և ի Բեթանիա մօտ ՚ի լեառն Չիթենեաց, առաքէ երկուս յաշակերտաց անտի, (2) Եւ ասէ ցնոսա. Երթայք դուք ՚ի գեօղդ՝ որ ընդդէմ ձեր կայ. և նոյն ժամայն իբրև մտանէք ՚ի նա, գտանէք յաւանակ մի կապեալ. յորոյ վերայ ոչ ի՛ք ՚ի մարդկանէ նստաւ, լուծէք զնա և ածէք: (3) Եւ եթէ ոք ասացէ ձեզ՝ եթէ Չի լուծանէք զյաւանակդ, ասասջիք եթէ Տեառն իւրում պիտոյ է. և վաղվաղակի առաքեսցէ զնա այսր: (4) Չոքան և գտին զյաւանակն կապեալ առ դուրս արտաքոյ ՚ի փողոցի անդ, և լուծին զնա: (5) Եւ ոմանք յորոց անդն կային, ասեն ցնոսա. Չի գործէք, զի լուծանէք զյաւանակդ: (6) Եւ նոքա ասեն ցնոսա որպէս ասացն Յիսուս. և թոյլ ետուն նոցա: (7) Ածեն զյաւանակն առ Յիսուս. և արկանեն ՚ի վերայ նորա հանդերձս, և նստաւ ՚ի վերայ նորա: (8) Եւ բազումք զհանդերձս իւրեանց տարածանէին ՚ի վերայ ճանապարհին, և այլք ոստս ՚ի ծառոց հատանէին՝ և արկանէին զճանապարհաւն: (9) Եւ որ առաջին և զկնի երթային, աղաղակէին և ասէին. Ովսանայ բարձրելոյն: (10) Օրհնեալ որ գասդ յանուն Տեառն. Օրհնեալ թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի. խաղաղու-

⁷ ἵνα ἀναβλέψω, dem das Armenische (զի բացայց) nicht genau entspricht.



Թիւն յերկինս և փառք ՚ի բարձունս : (11) Եւ եմուտ Յիսուս յերուսաղէմ ՚ի տաճարն, և հայեցաւ շուրջ զամենեքումբք. և զի էր երեկոյացեալ ժամն, ել ՚ի Բեթանիա երկոտասանիւքն հանդերձ :

(12) Եւ ՚ի վաղիւ անդր մինչդեռ ելանէին ՚ի Բեթանիա, քաղցեաւ : (13) Եւ ետես թղենի մի ՚ի բացուստ տերևալից. և եկն՝ թէ դտանիցէ ինչ ՚ի նմա. և իբրև եկն ՚ի նա՝ ոչինչ եգիտ, բայց միայն տերև. զի ոչ իսկ էր ժամանակ թողոյ : (14) Պատասխանի ետ և ասէ ցնա. Մի ևս ոք յաւիտեան ՚ի քէն պտուղ կերիցէ. և լսէին աշակերտքն նորա : (15) Գան յերուսաղէմ. և մտեալ ՚ի տաճարն՝ սկսաւ հանել զվաճառականն և զգնօղս որ էին ՚ի տաճարին. և զսեղանս հատավաճառացն ցրուեաց. և զաթոս աղանեվաճառացն կործանեաց. (16) Եւ ոչ թողոյր՝ եթէ ոք անօթ ինչ անցուցանիցէ ընդ տաճարն. (17) Եւ ուսուցանէր և ասէր ցնոսա. Գրեալ է, Տուն իմ տուն աղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց, և դուք արարիք զգա այրս աւագակաց. (18) Լուան քահանայապետքն և զպիրք. և խընդրէին՝ թէ ձրպէս կորուսցեն զնա. բայց երկնչէին ՚ի նմանէ. զի ամենայն ժողովուրդն զարմացեալ էր ընդ ուսումն նորա : (19) Եւ իբրև երեկոյ լինէր՝ արտաքոյ քան զքաղաքն ելանէին : (20) Եւ մինչդեռ այգուցն առ նովաւ անցանէին, տեսին զթղենին ցամաքեալ յարմատոց : (21) Յիշեաց Պետրոս՝ և ասէ ցնա. Ռճբբի՝ ահաւասիկ թղենին զոր անիծեր, ցամաքեցաւ : (22) Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Եթէ ունիցիք զհաւատսն Աստուծոյ, Ամէն ասեմ ձեզ. (23) Որ ոք ասիցէ լերինս այսմիկ՝ Բարձիւր և անկիւր ՚ի ծով, և ոչ երկմտիցէ ՚ի սրտի իւրում, այլ հաւատայցէ թէ զոր ասէն լինի, եղիցի նմա զոր ինչ և ասիցէ : (24) Վասն այսորիկ ասեմ ձեզ. Չամենայն ինչ վասն որոյ աղօթս արարեալ խնդրիցէք, և հաւատայցէք թէ առնուցուք, եղիցի ձեզ : (25) Եւ յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք, եթէ ունիցիք ինչ զումեք⁸. զի և Հայրն ձեր որ յերկինս է, թողցէ ձեզ զյանցանս ձեր : (26) Չի եթէ դուք ոչ թողուցուք, և ոչ Հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր :

(27) Գան միւսանդամ յերուսաղէմ. և մինչդեռ ՚ի տաճարի անդ զգնայր, քան առ նա քահանայապետքն և զպիրք և ծերք, Եւ ասեն ցնա. (28) Որձվ իշխանութեամբ առնես զայդ, և ձվ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ : (29) Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Հարցից և ես զձեզ բան մի, տիւր

⁸ Zu *զումեքէ* s. § 230.

ինձ պատասխանի, և ես ասացից ձեզ որով իշխանութեամբ անեմ զայս : (30) Մկրտութիւնն Յովհաննու յերկնից էր եթէ 'ի մարդկանէ, տնւք ինձ պատասխանի : (31) Խորհէին ընդ միմեանս՝ և ասէին. Եթէ ասեմք եթէ Յերկնից, ասէ ցմեզ. Իսկ ընդէր ոչ հաւատացէք նմա : (32) Այլ եթէ ասեմք 'ի մարդկանէ, երկնչիմք 'ի ժողովրդենէն. զի ամենեքին գիտէին զՅովհաննէս՝ թէ մարգարէ էր : (33) Պատասխանի ետուն և ասեն ցՅիսուս. Չգիտեմք : Եւ Յիսուս ետ նոցա պատասխանի և ասէ. Եւ ոչ ես ասեմ ձեզ, որով իշխանութեամբ անեմ զայս :

ԳԼԺԲ

(1) Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք՝ և ասել : Այր մի տնկեաց այգի, և ած շուրջ զնովաւ ցանդ, և գուր հնձան փորեաց, և շինեաց աշտարակ, և ետ զնա ցմշակս, և զնաց՝ 'ի տար աշխարհ : (2) Եւ առաքեաց առ մշական 'ի ժամանակի ծառայ մի, զի 'ի մշակաց անտի առցէ 'ի պտղոյ այգւոյն : (3) Եւ նոցա կալեալ զան հարին զնա, և արձակեցին ունայն : (4) Դարձեալ առաքեաց առ նոսա այլ ծառայ, և զնա կառափնատեցին և առձակեցին անարգեալ : (5) Եւ դարձեալ այլ առաքեաց, և զնա սպանին. և զբազումս այլս՝ զոմանս հարկանէին և զոմանս սպանանէին : (6) Ապա որդի մի էր իւր սիրելի, զնա առաքեաց առ նոսա յետոյ, և ասէ. Թերևս ամաչեսցեն յորդոյ աստի իմմէ : (7) Իսկ մշակքն իբրև տեսին զնա թէ գայ՝ ասեն ցմիմեանս. Մ'ա է ժառանգն, եկնյք սպանցուք զսա. և մեր լիցի ժառանգութիւնն : (8) Եւ կալեալ զնա սպանին, և հանին արտաքոյ այգւոյն : (9) Արդ զինչ արասցէ տէր այգւոյն. եկեսցէ և կորուսցէ զմշական, և տացէ զայգին 'ի ձեռս այլոց : (10) Եւ ոչ զգիրն զայն իցէ ընթերցեալ ձեր, թէ Չվէմն զոր անարգեցին շինողքն, նա եղև զլուխ անկեան : (11) 'ի Տեառնէ եղև այս, և է սքանչելի յաչս մեր : (12) Եւ խնդրէին զնա ունել, և երկեան 'ի ժողովրդենէ անտի, զի գիտացին թէ առ նոսա ասաց զառակն. և թողին զնա և զնացին : (13) Եւ առաքեն առ նա զոմանս 'ի փարիսեցւոց անտի՝ և 'ի Հերովդիանոսաց, զի զնա որսասցեն բանիւ : (14) Եւ նոքա եկեալ հարցանէին զնա նենդութեամբ՝ և ասէին, Վնրդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես, և ոչ ինչ փոյթ է քեզ զումեքէ. զի ոչ հայիս յերեսս մարդկան, այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես.

արդ՝ աստ մեզ, արժան է հարկս տալ կայսեր՝ թէ՛ ոչ. տացո՞ւք եթէ՛ ոչ տացուք: (15) Եւ Յիսուս գիտաց զկեղծաւորութիւն նոցա: ասէ ցնոսա. Չի՛ փորձէք զիս կեղծաւորք. բերէք ինձ դահեկան մի զի տեսից: (16) Եւ նոքա բերին. և ասէ ցնոսա. Ո՞յր է պատկերս այս կամ գիր. և նոքա ասեն ցնա. Կայսեր: (17) Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Երթայք տո՞ւք զկայսերն՝⁹ կայսեր, և զԱստուծոյն Աստուծոյ. և զարմացան ընդ նա:

(18) Գան առ նա սաղուկեցիքն որ ասեն՝ թէ Չի՛ք յարութիւն. հարցանէին ցնա և ասէին: (19) Վարդապետ, Մովսէս գրեաց մեզ. եթէ ուրուք եղբայր մեռանիցի և թողուցու կին՝ և որդի ոչ թողուցու. զի առցէ եղբայր նորա զկին նորա, և յարուսցէ զաւակ եղբօր իւրում: (20) Արդ եղբարք եօթն էին առ մեզ. առաջինն առ կին՝ և մեռաւ, և ոչ եթող զաւակ: (21) Եւ երկրորդն առ զնոյնն՝ և մեռաւ, և ոչ նա եթող զաւակ. նոյնպէս և երրորդն առ զնոյն: (22) Եւ եօթներեան իսկ. և ոչ թողին զաւակ. յետ ամենեցուն մեռաւ և կինն: (23) Արդ՝ ի յարութեանն յորժամ յառնիցեն, ո՞յր ՚ի նոցանէ լինիցի կինն. զի եօթներեան կալան զնա կին. (24) Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Ո՞չ վասն այդորիկ իսկ մոլորեալ էք. զի ոչ գիտէք զգիրս՝ և ոչ զգորութիւնն Աստուծոյ: (25) Չի յորժամ ՚ի մեռելոց յարիցեն, ոչ արք կանայս առնեն, և ոչ կանայք արանց լինին. այլ իբրև զհրեշտակս իցեն՝ որ յերկինս են: (26) Այլ վասն յարութեան մեռելոց զի յառնեն, ոչ իցէ ընթերցեալ ձեր ՚ի գիրսն Մովսէսի ՚ի մորենուջն. որպէս ասաց ցնա Աստուած. Ես եմ, ասէ՛ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ, և Աստուած Յակովբայ: (27) Եւ ոչ է Աստուած մեռելոց՝ այլ կենդանեաց. և արդ դուք յոյժ մոլորեալ էք: (28) Եւ մատուցեալ մի ոմն ՚ի դպրացն՝ լսէր նոցա մինչ վիճէինն. իբրև ետես եթէ բարուք ետ նոցա զպատասխանին, եհարց ցնա և ասէ, Ո՞ր պատուիրան է առաջին: (29) Եւ Յիսուս ասէ ցնա. Առաջին քան զամենայն՝ Լոր իսրայէլ, Տէր Աստուած մեր՝ Տէր մի է. (30) և սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն մտաց քոց, և յամենայն զօրութենէ քումմէ. այս է առաջին պատուիրան: (31) Եւ երկրորդն նման սմին. Սիրեսցես զընկեր քո՝ իբրև զանձն քո. մեծ քան զսոսա այլ պատուիրան ոչ գոյ: (32) Եւ ասէ ցնա զպիրն. Բարուք է Վարդապետ. ճշմարտութեամբ ասացեր՝ թէ մի է Աստուած, և ոչ գոյ այլ բաց ՚ի նմանէ: (33) Եւ սի-

⁹ Zu *զկայսերն* und *զԱստուծոյն* s. § 396.

րելն զնա յամենայն սրտէ և յամենայն զօրութենէ և յամենայն մտաց, և սիրելն զընկերն իբրև զանձն, առաւել է քան զողջակէզս և զզոհոս: (34) Եւ տեսեալ Յիսուսի թէ իմաստութեամբ ետ զպատասխանին՝ ասէ ցնա. Չէս հետի յարքայութենէ Աստուծոյ. և ոչ ևս ոք իշխէր ինչ հարցանել ցնա:

(35) Պատասխանի ետ Յիսուս և ասէ, մինչ ուսուցանէր ՚ի տաճարին. Չիւնրդ ասեն զպիւրքն, եթէ Քրիստոսն որդի Դաւթի է: (36) Եւ ինքն Դաւիթ Հոգւովն Սրբով ասէ. Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց: (37) Արդ եթէ ինքն իսկ Դաւիթ զնա Տէր կոչէ՞ զիւնրդ իցէ որդի նորա. և բազում ժողովուրդ լսէր նմա քաղցրութեամբ: (38) Եւ ասէր ուսուցանելով ՚ի վարդապետութեան իւրում, Չգնչ լերուք ՚ի դպրաց անտի, որ կամին ՚ի հանդերձս երևելիս շրջել, զնախողոյնս խնդրել ՚ի հրապարակս, (39) Եւ զնախաթոս ՚ի ժողովուրդս, և զգահազուխս յընթրիս: (40) Որ ուտեն զտունս այրեաց, պատճառանօք յերկարեալ զաղօթս, զի աւելի ևս դատաստանս ընկալցին: (41) Կայր Յիսուս ընդդէմ զանձանակին, տեսանէր թէ զիւնրդ ժողովուրդն արկանէր պղինձ ՚ի զանձանակն, և բազում մեծատունք արկին բազում ինչ: (42) Եկն այրի մի և արկ երկուս լումայս, որ է նաքարակիտ մի. (43) Եւ կոչեցեալ առ ինքն զաշակերտսն, ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ՝ զի այրին այն տառապեալ շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին ՚ի զանձանակն: (44) Քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին. այլ նա ՚ի չբաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր ունէր արկ գոյիւ չափ զկեանս իւր:

ԳԼԺԳ

(1) Եւ յեկանելն նորա ՚ի տաճարէ անտի, ասէ ցնա մի յաշակերտացն նորա. Վնրդապետ, տես որպիսի են քարինքս, և որպիսի շինուածք: (2) Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. Տեսանէս զայդ ամենայն շինուածս, ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ թողցի այգը քար ՚ի քարի վերայ որ ոչ քակտեսցի: (3) Եւ մինչ նստէր նա ՚ի լերինն Չիթենեաց յանդիման տաճարին, հարցանէին ցնա առանձինն՝ Պետրոս և Յակոբոս և Յովհաննէս և Անդրէաս: (4) Ասո՞ մեզ Էրբ լինիցի այդ. և զմինչ նշան է՝ յորժամ կատարելոց իցէ այդ ամենայն: (5) Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցնոսա. Չգնչ

կացէք, մի ոք զձեզ խաբեսցէ : (6) Ձի բազումք եկեսցեն յանուն կմ, և ասիցեն՝ թէ Ես եմ Քրիստոսն. և զբազումս մոլորեցուցեն : (7) Այլ յորժամ լսիցէք պատերազմունս և համբաւս պատերազմաց՝ մի խոռվիցիք, զի պարտ է լինել. բայց չև է կատարածն : (8) Ձի յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ՚ի թագաւորութեան վերայ. և եղիցին շարժմունք ՚ի տեղիս տեղիս, սովք և սրածութիւնք և խոռվութիւնք. այլ այն ամենայն սկիզբն է երկանց : (9) Եւ զձեզ իսկ մատնեսցեն յատեանս, և ՚ի ժողովուրդս տանջիցիք, և առաջի դատաւորաց և թագաւորաց կայցէք վասն իմ ՚ի վկայութիւն նոցա, (10) Եւ ամենայն Հեթանոսաց. բայց նախ պարտ է աւետարանիս քարոզել : (11) Այլ յորժամ տանիցին զձեզ մատնել, մի յառաջագոյն հոգայցէք, և մի զմտաւ ածիցէք՝ թէ զինչ խօսիցիք. այլ որ ինչ տացի ձեզ ՚ի ժամուն յայնմիկ՝ զայն խօսիցիք. զի ոչ դուք էք որ խօսիցիքն՝ այլ Հոգին Սուրբ : (12) Մատնեսցէ եղբայր զեղբայր ՚ի մաս՝ և հայր զորդի. և յարիցեն որդիք ՚ի վերայ հարց, և սպանանիցեն զնոսա : (13) Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ. այլ որ համբերեսցէն ՚ի սպառ՝ նա կեցցէ : (14) Եւ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածին, զի կայցէ ՚ի տեղոջ ուր չիցէ արժան. որ ընթեռնուն ՚ի միտ առցէ : Յայնժամ որ ՚ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ՚ի լերինս. (15) Եւ որ ՚ի վերայ տանեացն իցէ՝ մի իջցէ ՚ի տուն, և մի մտցէ բառնալ ինչ ՚ի տանէ իւրմէ. (16) Եւ որ յազարակին իցէ՝ մի դարձցի յետս առնուլ զձորձս իւր : (17) Բայց վայ իցէ յղեաց և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ : (18) Յազոթս կացէր զի մի ձմերանի լինիցի այն : (19) Եղիցին աւուրքն այնքիկ նեղութեանց՝ որպիսի ոչ եղեն երբէք այնպիսիք ՚ի սկզբանէ արարածոց մինչև ցայժմ, և մի այլ լիցի : (20) Եւ եթէ ոչ էր կարճեալ Աստուծոյ զաւուրսն զայնոսիկ վասն ընտրելոց իւրոց, ոչ ապրէր ամենայն մարմին. այլ վասն ընտրելոցն զորս ընտրեաց՝ կարճեաց զաւուրսն զայնոսիկ : (21) Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ, եթէ Ահաւասիկ է Քրիստոսն՝ կամ աւանիկ, մի հաւատայցէք : (22) Ձի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարդարէք, և տացեն նշանս և արուեստս՝ առ ՚ի մոլորեցուցանելոյ եթէ հնար ինչ իցէ և զընտրեալն : (23) Բայց դուք զգոյճ լերուք՝ ահաւասիկ յառաջագոյն ասացի ձեզ զամենայն : (24) Այլ յաւուրսն յայնոսիկ յետ նեղութեանն այնորիկ, արեգակն խաւարեցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր : (25) Եւ աստեղք յերկնից թօթափեսցին, և զօրութիւնք յերկինս շարժեսցին : (26) Եւ յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ամպովք՝ զօրու-

Թեամբ և փառօք բազմօք: (27) Եւ յայնժամ առաքեսցէ զհրեշտակս իւր, և ժողովեսցէ զընտրեալս իւր՝ ի չորից հողմոց՝ ՚ի ծագաց երկրի մինչև ՚ի ծագս երկնից: (28) Բայց դուք ՚ի թզենուոյ անտի ուսջիք զառական. յորժամ տակաւ ոստքն նորա կակղանայցեն և տերև արձակիցի ՚ի նմա, գիտէք թէ մերձ է ամառն. (29) Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք թէ մերձ է առ դուրս: (30) Ամէն ասեմ ձեզ, թէ Ո՛չ անցցէ ազգս այս՝ մինչև այս ամենայն եղիցի: (31) Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցանիցեն: (32) Այլ վասն աւուրն այնորիկ և ժամու՛ ոչ ո՛ք գիտէ՝ ո՛չ հրեշտակք յերկինս՝ և ո՛չ Որդի, բայց Հայր միայն: (33) Չգնչ եղերուք. սկեցէք և կացէք յաղօթս. զի ո՛չ գիտէք Երբ ժամանակն իցէ: (34) Որպէս այր մի գնացեալ ՚ի տար աշխարհ՝ թողուցու զտուն իւր. և տայցէ ծառայից իւրոց իշխանութիւն, և իւրաքանչիւր զգործս իւր, և զոնապանին պատուէր տայցէ, զի արթուն լինիցի: (35) Արդ արթնն կացէք. զի ո՛չ գիտէք Երբ տէր տանն գայցէ՝ յերեկորեայ՝ եթէ ՚ի մէջ գիշերի՝ եթէ ՚ի հաւախօսի՝ եթէ ընդ առաւօտս: (36) Գուցէ եկեալ յանկարծակի՝ գտանիցէ զձեզ ՚ի քուն: (37) Բայց զոր ձեզդ ասեմ՝, ամենեցուն ասեմ Արթնն կացէք:

MOSES VON CHOREN

Moses von Choren (*Մովսէս Խորենացի*) lebte, wenn wir der Nachricht des um 1200 lebenden armenischen Chronisten Samuel von Ani Glauben schenken wollen, von 370 bis 480 (?). Sein wichtigstes Werk, die Geschichte Armeniens (*Պատմութիւն Հայոց*), die von der sagenhaften Urzeit bis zum Sturz der arsakidischen Dynastie (428) reicht, ist uns nur in einer gewisse Einschübe aufweisenden späteren Bearbeitung erhalten. Der erste Auszug aus diesem Werk enthält die vielgenannte Legende von der Korrespondenz des Königs Abgar mit Jesus Christus, die in griechischem Gewande sich auch in Eusebius, *Historia ecclesiastica* I, 13, 6–10, findet. Nach Eusebius sind seine Briefe eine Übersetzung aus dem Syrischen (... ἐκ τῆς Σύρων φωνῆς μεταβληθεισῶν).

Der Inhalt des 2. Auszuges ist in aller Kürze folgender: Nach der Teilung Armeniens im Jahre 387 (s. die historische Übersicht im Anhang) wurde Chosrov (IV.) Herrscher des östlichen (persischen), Aršak des westlichen (byzantinischen) Teils. Chosrov machte den Ritter Sahak zum Befehlshaber der Truppen, schlug mit dessen Hilfe den Aufstand der Vernandier nieder und besiegte seinen Nebenbuhler Aršak. Er wurde daraufhin wieder Alleinherrscher von Armenien. – Die drei letzten Kapitel haben die Erfindung der armenischen Schrift (Daniel, Mesrop) zum Inhalt.

Eine alte, mit zahlreichen Anmerkungen und einer lateinischen Übersetzung versehene Textausgabe, die auch noch heute ihren Wert hat, ist die der Gebr. G. u. G. Whiston, London 1736. Neuere Ausgaben: Venedig 1827 und 1865, ferner, mit nicht immer genauer französischer Übersetzung versehen, P. E. Vaillant de Florival, Moïse de Khorène, 2 tomes, Venedig 1841. Eine neuere Ausgabe ist 1940 in Erewan erschienen. Die Armenische Chrestomathie von M. Lauer, Wien 1881, enthält nur das zweite Buch von den dreien der Geschichte. (Vgl. dazu die negative Kritik von A. Baumgartner, Dr. M. Lauer und das 2. Buch des Moses Chorenaçi. Leipzig 1885.)

Deutsche Übersetzung: M. Lauer, Moses von Chorene, Geschichte Armeniens. Regensburg 1869 (nicht immer einwandfrei).

Eine neuere, russische Übersetzung gibt es von N. O. Emin, Moskau 1893, eine italienische von N. Tommaseo, Venedig 1850, und von Cappelatti, Venedig 1850.

Պատմութիւն Հայոց

Buch II

ԳԼ. Լ

Ընդ այն ժամանակս եկաց ՚ի գործ հազարապետութեան կայսեր ՚ի վերայ Փիւնիկեցւոց և Պաղեստինացւոց, Ասորւոց և Միջագետաց, Մա-
 ուրնոս որդի Ստորգեայ. առ որ առաքեաց Աբգարոս երկուս ՚ի գլխաւո-
 րաց իւրոց, զՄարիհար բղէշին Աղծնեաց, և զՇամշադրամ նահապետ
 Ապահունեաց տոհմին, և զԱնան հաւատարիմ իւր՝ ՚ի քաղաքն Բեթթու-
 րին, զգացուցանել նմա զպատճառս երթալոյն իւրոյ յարևելս, ցուցա-
 նելով նմա զգիր ուխտին՝ որ ընդ Արտաշէս և ընդ եղբարս իւր, և առնել զնա
 թիկունս օգնականութեան: Որոց եկեալ գտին զնա յԵրևութրոյսօլիս: Եւ
 նորա ընկալեալ զնոսա խաղաղութեամբ և մեծարանօք, առնէ պատաս-
 խանի Աբգարու. Մի կասկածեր ՚ի կայսերէ սակս այնր, միայն զի հար-
 կելն լիով փութասցիս:

Եւ նոցա դարձեալ անտի, ելին յԵրուսաղէմ տեսանել զՓրկիչն մեր Քրիս-
 տոս վասն լրոյ համբաւոց սքանչելագործութեանցն. որում և ահա-
 նատես եղեալ, պատմեցին Աբգարու: Ընդ որ գարմացեալ Աբգարու, հաւա-
 տաց ճշմարտապէս իբր արդարեւ որդի Աստուծոյ, և ասէ. Այն գորու-
 թիւնք ոչ մարդոյ են, այլ Աստուծոյ. զի չիք ոք ՚ի մարդկանէ որ կարէ
 զմեռեալս յարուցանել, բայց միայն Աստուած: Եւ քանզի սպականեալ էր
 մարմինն իւր ՚ի չարաչար ցաւոց, որ պատահեցին նմա ՚ի Պարսից աշխար-
 հին յառաջ քան զեւթն ամ, որ ՚ի մարդկանէ ոչ եղև նմա հնար բժշկու-
 թեան, ետ տանել նմա թուղթ աղաչանաց, գալ և բժշկել զնա ՚ի ցաւոցն,
 օրինակ զայս:

ԳԼ. ԼԱ

Աբգար Արշամայ իշխան աշխարհի, առ Յիսուս Փրկիչ և բարերար,
 որ երևեցաւ յաշխարհի երուսաղէմացւոց, ողջոյն:

Լուեալ է իմ վասն քո և վասն բժշկութեանդ, որ լինին ՚ի ձեռս քո առանց
 դեղոց և արմատոց. զի որպէս ասի, տաս դու կուրաց տեսանել և կաղաց
 զնալ և զբորոտս սրբել, և զայսս պիղծս հանես, և որ միանգամ չարչա-

րեալ են երկար հիւանդութեամբք՝ բժշկես. դու և զմեռեալս յարուցանես :
Եւ իբրև լուայ վասն քո գայս ամենայն, եղի՝ ՚ի մտի իմում մի յերկուց ան-
տի. կամ թէ դու Աստուած իցես, իջեալ յերկնից դործես զայդ. կամ թէ
որդի իցես դու Աստուծոյ, և գայդ առնես : Արդ վասն այնորիկ գրեցի ես
առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեսցես առ իս և բժշկեսցես
զհիւանդութիւնս, զոր ունիմ ես : Նա և լուայ զի Հրեայք տրտնջեն զքէն
և կամին չարչարել զքեզ. բայց քաղաք մի փոքրիկ և գեղեցիկ է իմ, և բաւա-
կան է մեզ երկոցունցս¹ :

Որոց տարեալ զթուղթն, պատահեցին նմա յերուսաղէմ : Չայս վկայէ
աւետարանական բանն, եթէ էին ոմանք ՚ի հեթանոսաց ելելոց առ նա.
վասն որոյ ոչ համարձակին, որք լուանն, ասել ցՅիսուս, այլ ասեն ցՓի-
լիպպոս և ցԱնդրէաս. և նոքա ասեն ցՅիսուս : Իսկ ինքն Փրկիչն յայնմ
ժամանակի յորում կոչեացն զնա, ոչ առ յանձինն². Բայց թղթոյ արժանի
արար զնա, որ ունի այսպէս :

ԳԼ ԼԲ

Երանի իցէ այնմ, որ հաւատայ յիս՝ իբրև ոչ իցէ նորա տեսեալ զիս.
զի գրեալ է վասն իմ այսպէս. Չի որք տեսանեն զիս՝ ոչ հաւատացեն
յիս, և որք ոչն³ տեսանեն զիս՝ նոքա հաւատացեն և կեցցեն : Իսկ վասն այնր
զի գրեցեր դու առ իս դալ ինձ առ քեզ, արժան է ինձ կատարել աստ զամե-
նայն ինչ վասն որոյ առաքեցայ ես : Եւ իբրև կատարեցից գայս, ապա
համբարձայց առ այն՝ որ առաքեացն զիս. և յորժամ համբարձայց, առա-
քեցից զմի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ, և կեանս
քեզ և որոց⁴ ընդ քեզ են շնորհեսցէ :

Չայս թուղթ եբեր Անան սուրհանդակ Արգարու, ընդ որում և զկեն-
դանագրութիւն փրկչական պատկերին, որ կայ յեղեսացւոց քաղաքին)
մինչև ցայսօր ժամանակի :

¹ երկոցունցս vgl. § 187.

² առ ի vgl. § 321.

³ ոչն vgl. § 214.

⁴ որոց vgl. § 559.

Buch III

ԳԼ. ԽԴ

Բայց Խոսրով մեծապէս ուրախ եղև ընդ գալն Սահակայ ասպետի, և սպարապետ զնա՝ ի վերայ զօրաց իւրոց կարգեաց. և դարձոյց ՚ի նա զկալուածս հայրենիս, և այլ աւանս հանդերձ ագարակօք պարգևեաց նմա յայնոցիկ ՚ի ժառանգութենէ, որք ՚ի բաժնոյն Պարսից առ Արշակայ փնացին:

Չայտու աւուրբք ոմանք ՚ի յագգէն Վանանդացւոց ապստամբեցին ՚ի Խոսրովայ. և ոչ յոք ապաւինեցան, այլ միայն ՚ի մայրիս լերանց իւրեանց և յանձուկս Տայոց քարանց. յերուզակաբար արշաւանօք յիշխանութիւն երկոցունց թագաւորացն Հայոց, խոովէին զաշխարհս և անհանգիստ պահէին: Յորոց վերայ չոգաւ սպարապետն Խոսրովայ Սահակ ասպետ, և զբազումս ՚ի նոցանէ սատակեաց, և զբազումս փախստական արար ՚ի կողմանս չորրորդ⁵ Հայոց: Չի ոչ յերկիրն Խաղտեաց անկան՝ ՚ի Յոյնս ապաւինելով, և ոչ առ թագաւորն Արշակ անցին. այլ իբր զաւգալս ոմանս, որ ՚ի կողմանս չորրորդ Հայոց էին՝ ՚ի սահմանս Ասորւոց, զիմեցին ապաստան առնել: Քանզի Վանանդացիք զաւազակութեան գործ մեծ ցանկութեամբ գործէին, և որպէս ուղիղ իբք ախորժելի թուէին նոցա: Չորոց ձիք զհետ մտեալ Սահակայ, վարէ յերկար մինչև ՚ի սահմանս Մանանաղւոյ:

ԳԼ. ԽԵ

Սուրենայ խոսրոուսուոյ և Վահանայ Առաւելիւնի և Աշխադարայ Դիմաքսենի գտեալ ժամ պատեհ, զի էր հանեալ զգանձան Արշակայ յամրոցէն Հանուոյ՝ տանել յաշխարհն Ծոփաց. զոր յափշտակեալ, և կամեցեալ անցանել առ Խոսրով, ոչ ժամանեցին: Քանզի աճապարեալ Սամուելի Մամիկոնենի մտերմի Արշակայ, յորովածեոն զնդաւ զհետ մտեալ, փախստեայտ արկանէ յամուր այրս ՚ի գաւառին Մանանաղւոյ, յոր մուտ ոչ գտանէր, բայց ՚ի կողմանէ դոյզն ելք էին առ ՚ի թաւալ. Վասն որոյ տարակուսեալ Սամուէլ վարանէր առ անհնարութիւն տեղեացն: Եւ ազգ արարեալ

⁵ չորրորդ Հայոց „Armenia quarta“. Die Einteilung Armeniens in vier Bezirke wird in Buch I cap. 13 erwähnt.

Արշակայ, հրամայեաց արկղ գործել երկաթակապ, և քաջ արանց ՚ի ներքս մտանել, և այնպէս շղթայատող կարիւք ՚ի վերուստ ՚ի վայր իջուցանել ՚ի դուրս այրին: Սակայն և ոչ այն ինչ վնասեաց. քանզի յոյժ ՚ի բացեայ ջատ պահէր ցիրոն:

— Եւ մինչ դեռ նոքա յայնմ էին, լինէր իմն լըստ դիպուածոյ բախտի հասանել անդր ասպետին Սահակայ բովանդակ գնդաւն իյոսրովայ, որով հետամուտ յեղուզակացն էր: Թողեալ զնոսա, դիմէ ՚ի վերայ այնոցիկ՝ որք ընդ այրին մարտնչէին, և հալածական արարեալ, հանէ զՍուրէն և զՎահան և զԱշխարար հանդերձ գանձիւքն. փոյթ ընդ փոյթ հասուցանէ առ իյոսրով: Իսկ իյոսրով առեալ ՚ի գանձուցն, հանէ և մասն Շապհոյ. և հրամանաւ նորա տալ նոցա գելդս և դաստակերտս ընտիրս և յամոհրս՝ յայնոցիկ ժառանգութենէ, որք ՚ի բաժնոյն Պարսից փնացին առ Արշակայ: Եւ այս եղև սկիզբն պատերազմին Արշակայ և իյոսրովայ:

5
1 F

77 11a

ԳԼ. ԽՁ

— Թէպէտ և ոչ եղեն ձեռնտու Շապուհ և Արկաղ իյոսրովայ և Արշակայ, լինել զօրավիգն օգնականութեան՝ առ ՚ի տալ ընդ միմեանս պատերազմ, սակայն և ոչ արգելին զնոսա: Եւ սպառեալ պատգամաւորութեանն, ժողովեալ Արշակայ զգօրս իւր՝ խաղայ ՚ի վերայ իյոսրովայ: Գնաց և իյոսրով ՚ի բանակէն իւրմէ առ ծովուն Գեղամայ, զոր Մուրան կոչեն, ընդ առաջ Արշակայ, զի մի ՚ի սահմանս իւր իջցէ. և ոչ այնչափ ատակեաց աճապարել՝ մինչև եգիտ զԱրշակ իջեալ յիւր սահմանն, ՚ի գաւառին Վանանդայ: Եւ պատահեն միմեանց ՚ի դաշտին՝ որ կոչի Երևել. և տան պատերազմ ընդ միմեանս սաստիկ յոյժ: Հարկանի զօրն Արշակայ, մեռանի և սպարապետն նորա Դարա Սիւնի ՚ի պատերազմին, և փախստական լինի Արշակ սակաւուք: Եւ զհետ նորա մտեալ քաջին Սահակայ ասպետի, սպարապետին իյոսրովայ, վարէր սաստկապէս: Ուրանօր անագին նահատակութիւնս ցուցեալ Գազաւոնի՝ որդւոյ Սպանդարատայ, բազում անգամ դարձեալ յարձակմամբ՝ ցրուէր զհետամուտսն, և տայր պարապ ժամ զնալոյ Արշակայ:

12

— Եւ դարձաւ իյոսրով ՚ի տեղի իւր, և գնաց Արշակ յեկեղեց. և հիւանդացեալ անդ մաշարայական ախտիւք՝ ջերանի հիւծմամբ: Թագաւորէ ամենայն Հայոց ամս հինգ, և կիսոցն Հայոց ամս երկուս և կէս: Եւ այնուհետև

ոչ ևս կացուցին Յոյնք 'ի բաժնի իւրեանց թագաւոր, այլ առաջնորդէր նախարարացն այնր կողման Քաջն Գազաւոն. և աշխարհին իւրեանց մասինն կացուցին Յոյնք կոմէսս իշխանս :

†

ԳԼ. ԽԷ

Տեսեալ թէ 'ի վերջ հասեալ է թագաւորութիւնն Հայոց, և զխոռովութիւնն նիւթ իւրոյ համբերութեանն գտեալ Մեսրոպայ, որ էր 'ի Հացեկաց Տարոնոյ, անեալ և ուսեալ առ մեծին Ներսիսի, և յետ ելից նորա յաշխարհէ 'ի դրան արքունի կարգեալ քարտուղար. սա սիրեաց զմիայնակեցութեան զվարս. որպէս ասաց ոմն, ի նաւահանգիստ փութայ նաւ խոռովեալ, և անձն ժուժկալ ինդրէ զանապատ, նոյնպէս և նորա փախուցեալ յաշխարհական զբաղմանց, և ընկեցեալ յետս զմարմնական պատիւն, զհետ ընթանայր երկնաւորին : Եւ երթեալ 'ի գաւառն Գողթան ընակէ, զմիայնակեցութեան վարս ստացեալ : Եւ որ 'ի նմա ղօղեալ աղանդն հեթանոսական, թաքուցեալ յաւուրսն Տրդատայ մինչև ցայն ժամանակս, և ապա յայտնեցաւ 'ի վատթարել թագաւորութեանն պրշակունեաց, զայն եբարձօղնականութեամբ իշխանի գաւառին, որու՞մ անուն էր Շաբիթ : Ուր նշանք աստուածայինք լինէին՝ որպէս առ սրբոյն Գրիգորիւ. հալածական լեալ զեք մարմնաւոր տեսեամբ անկանէին 'ի կողմանս Մարաց : Եւ ոչ ինչ պակաս յայնցանէ արարեալ գտանի և Սիւնեաց աշխարհին, օղնականութեամբ նորին իշխանին, որ կոչէր Վաղինակ :

10

W

20

Եւ 'ի վարդապետել երանելոյն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող և թարգմանիչ. և եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ հանդիպէր, զանխուլ 'ի ժողովրդոցն լինէր՝ յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ : Վասն որոյ եղ 'ի մտի հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուիս. և արկեալ զանձն 'ի ջանս, պէս պէս փորձիւք տաժանէր :

ԳԼ. ԽԸ

Տեսեալ նախարարացն Հայոց, եթէ ոչ կացուցին Յոյնք 'ի վերայ նոցա թագաւոր, և դժուարին վարկուցեալ անառաջնորդն լինել, խորհեցան կամաւ հնազանդել թագաւորին իոսորովու : Նմին իրի գրեն առ նա թուղթօրինակ զայս :

43,4

30



Ստրատելատն Գազաւոնն և ամենայն նախարարք Հայոց մասինն Յունաց, տեառն մերում ինսորովայ արքայի կողմանն Այրարատոյ խնդալ:

Ինքնին, տէր, գիտես զմտերմութիւն մեր առ յիշեցեալ թագաւորին մերում Արշակայ, զոր մինչև ցօր վախճանին անշրջելի պահեցաք. և արդ — խորհեալ եմք նոյնպէս ծառայել քեզ միամտութեամբ, եթէ հաստատեսցես առ մեզ դաշամբք զերիսս զայսոսիկ: Առաջին, չյիշել զյանցանս մեր, զոր պատերազմեցաք ընդ քեզ ՚ի հարկէ և ոչ ՚ի կամաց: Երկրորդ, զի դարձուցես ՚ի մեզ զամենայն ժառանգութիւնս մեր՝ որ ՚ի մասինդ Պարսից, զոր հատէք յարքունիս: Երրորդ, հնարել թափել զմեզ ՚ի կայսերէ, զի մի 10 վրդովեսցեն զբնակութիւնս մեր, որք ունիմք իշխանութիւն յայսմ բաժնի: Եւ զայս պայման ուխտի գրեալ և խաչ հաստատեալ⁶ կնքեսցես. զորս տեսեալ՝ փութասցուք ՚ի ծառայութիւն ձեր: Ողջ լեր տէր մեր:

Քաջ արանց ինսորով Հայոց արքայ, ստրատելատի Գազաւոնի և ամենայն նախարարաց ողջոյն:

— Շատ ուրախ լերուք, զի և մեք ողջ եմք, և ուրախացաք ընդ լուր ողջունի ձերոյ. և առաքեցաք ըստ խնդրոյ ձերոյ զայս պայման ուխտի: Առաջին, չյիշել զյանցանս ձեր, զոր չունէաք առ յանցանս իսկ, այլ երախտաւորս զմիամտելն առ թագաւորին արշակունւոյ՝ զոր պաշտէիքն. զի և առ մեզ զնոյն յուսամք լինել: Երկրորդ, դարձուցանել ՚ի ձեզ զժառանգութիւնս 20 ձեր, զոր ունիմք յարքունիս. բայց ՚ի յայնմանէ՝ զոր ունեք ումեք պարզեցաք, և ոչ չըջին պարզեք թագաւորաց առանց վրասու. մանաւանդ զի ՚ի դիւան հօրն մերոյ տեառն Շապհոյ արքայից արքայի եմուտ. այլ փոխանակ ընդ այնր և յարքունուստ⁷ ընումք և զձերոյն պակասութիւնն: Երրորդ, թափեմք զձեզ ՚ի դործակալացն Յունաց, թէպէտ պատերազմաւ ընդ կայսեր, թէպէտ խաղաղութեամբ:

Եւ զքեզ, Գազաւոն, արիւն իմ և հարազատութիւն, ոչ ըստ վաղնջուց ազգականութեանն, այլ ըստ արդեանս՝ որ ՚ի մօրէ քումմէ Արշանուշայ արշակունւոյ, հանեալ զքեզ ՚ի հայրենեաց քոց Կամսարականաց, և ՚ի մայրենիս քո յիմս առեալ ազգ, արշակունի անուամբ պատուեցից:

30 Զայս տեսեալ Գազաւոնի, ընդ հուպ դարձուցանէ զբնաւ նախարարսն առ ինսորով, և բարբրաստիկ եղեալ քաջափառութեամբ, հանդիպի ամենայն խնդրոցն և խոստմանցն: Բայց Սամուէլի մամիկոնենի յինքն ըմբռնե-

⁶ խաչ հաստատեմ „mit einem Kreuz versiegeln“.

⁷ յարքունուստ vgl. § 160.

ալ զթուղթն իոսորովու և զպատճէն թղթոց նախարարացն. զատուցեալ 'ի նոցանէ՝ զնաց առ կայսրն Արկադ: Քանզի էր սպանեալ նորա զհայր իւր Վարդան՝ յաղագս ուրացութեանն, և զմայր իւր Տաճատուհի, երկնչելով 'ի Պարսից և 'ի քեռեաց իւրոց Արծրունեաց, ոչ իշխէր զատչել 'ի Յունաց: Իսկ Արկադայ բարի արարեալ նմա, հրամայէ զհաւասար թղթոցն հելլէն գրով 'ի գիւանի իւրում զնել, զի պահեսցին յիշատակք ազգաց ապստամբողաց. որ կայ մինչև ցայսօր:

ԳԼ. ԽԹ

Իբրև տիրեաց իոսորով բոլոր ամենայն նախարարացն Հայոց՝ որում ցանկայրն, յլէ առ Արկադ և խնդրէ 'ի նմանէ հաւատալ յինքն զմասն 10 Յունաց՝ որ 'ի Հայս, զոր շէն կալեալ՝ հարկեսցին նմա անսխալ, որպէս նորին գործակալացն: Եւ կասկածեալ Արկադայ 'ի միաբանութենէ նախարարացն Հայոց, թէ միաբանութեամբ հանիցեն 'ի նմանէ և տացեն 'ի Պարսս զբաժինն զայն, կատարէ զխնդիրս իոսորվայ:

ԳԼ. Ծ

Բայց Շապուհ էր ցամամբ ընդ իոսորվայ բարեկամանալն Արկադեայ անձամբ, և յանհրաման կարգել յեպիսկոպոսութիւն զմեծն Սահակ. վասն որոյ յղեալ մեղադրութիւն՝ հանդերձ սպառնալեօք, ըմբոստացաւ իոսորով, և խորխտով վեսական պատասխանեաց, արձակեաց զպատգամաբերսն անարգանօք: Եւ իսկոյն խօսեցաւ ընդ Արկադայ, զի լուծեալ զհաշտու- 20 թիւնն ընդ Շապուհոյ՝ օգնեսցէ նմա զօրու, և սա դարձուցէ առ նա զբոլոր աշխարհս: Այլ Շապուհ, 'ի հրապուրելոյ դուշակութեան նահապետացս մերոց, նոյն հետայն առաքէ զորդի իւր զԱրտաշիր զօրու մեծաւ 'ի Հայս: Եւ 'ի հրաժարել Արկադայ 'ի կուսակցելոյն իոսորվայ, և ոչ զոք յօտար ազգաց գտեալ 'ի սատարութիւն, անկարացեալ ընդգիւմանալ կամ խուսափել 'ի նմանէ, չոքաւ առ նա:

Եւ Արտաշրի ընկեցեալ զնա 'ի տէրութենէն, փոխանակ կացուցանելով զՎռամշապուհ եղբայր նորին, ոչ զմեծն Սահակ և ոչ զոք 'ի նախարարացն

կարգելոցն ինսորովայ եթող, այլ վրդովեաց⁸ ՚ի պատուոյ իւրաքանչիւր. նա և հրամայեաց ևս ընդ Յոյնս զնոյն կարգ ունել: Եւ թողեալ գունդ ստուար, ինքն ՚ի Տիւրոն փութայր հասանել, ՚ի ծերութենէ հօրն ակն ածելով. ընդ իւր ունելով զինսորով՝ զնել յԱնուշն կոչեցեալ բերդի. որոյ թագաւորեալ ամս հինգ: Ընդ նմա տարաւ զԳագաւոն, կասկածեալ յառնն քաջութենէ. և զտուն նորա հրամայէ ունել յարքունիս, նոյնպէս և զեղբոր նորա Շաւարշայ, և զՊարզեայ Ամատունուոյ: Քանզի նոքա երկոքեանն հանդերձ զինուորօք իւրեանց եւթն հարիւրովք նկատեալ որսացան զաջողութիւն ժամու ՚ի ճանապարհի կարաւանին՝ զերծուցանել զարքայն իւրեանց ինսորով, և ոչ յաջողեցան ՚ի պարաւանդելոյ ստից նորա ՚ի շղթայս: Եւ հզօր մարտի եղելոյ՝ սպանաւ Շաւարշ և Մանուէլ որդի Պարզեայ, և բազումք ընդ նոսա. իսկ Պարզե ՚ի կալանս ըմբռնեալ, ածաւ առաջի Արտաշրի. և տիկտեսակ զործեալ ուռուցմամբ, հրամայեաց զնել յանդիման ինսորովայ հանապազ:

ԳԼ. ԾԱ.

Սուրբք ոմանք երևելիք առաջինք ՚ի նախահարցն և ՚ի վերադիտաց աշխարհիս, լուսաւորութեան պատճառք, որդեծնութեամբ իջեալ ՚ի մեծն Սահակ, զազարունմն եղև ուստերաց նորա. ունելով զուստր մի Սահակ Անոյշ կոչեցեալ, որ տուաւ յամուսնութիւն Համագասպայ Մամիկոնենի: Եւ ՚ի մեռանել քաջ սպարապետին Հայոց Սահակայ ասպետի՝ ՚ի տեղի նորա զնա աղաչէր կարգել ինսորովայ արքայի, և զկնի կապանաց՝ եղբօր նորա Վասաշայ. Այլ սա հրաժարէր առանց արքայից արքայի առնել զայն. յիշելով, թէ սակս այսպիսի իրաց կրեաց վիշտս եղբայր նորին ինսորով: Վասն որոյ առեալ ՚ի սմանէ թուղթս, ՚ի թախանձելոյ դատերն՝ ինքնին չողաւ առ Արտաշիր Պարսից արքայ, որ յետ եւթանասուն ամի թագաւորութեան հօրն՝ կալաւ զտէրութիւնն ամս չորս:

⁸ Der Text ist nicht ganz klar. Im Whiston'schen Text fehlen nach (Ի) *ինսորովայ* die Wörter *եթող, այլ*; seine lateinische Übersetzung lautet: „... *nece quemquam de satrapis . . . de gradu dejecit*. Dadurch wird das Gegenteil von dem Text der Ausgabe von Vaillant behauptet. Der Ausdruck *վրդովեաց ի պատուոյ* bedeutet „entfernte sie aus ihren Würden“ (*պատիւ*).



Եւ մեծարի՝ ի նմանէ յոյժ. նախ վասն քաջատոհմիկ ազգին Պահլաւկաց, դարձեալ և զի առաջի անհաւատից արգոյ և պատուական ցուցանէ Աստուած զծառայս իւր: Որոյ զբնան կատարեալ խնդիրս, նախ վասն փեսայի նորա Համազասպայ, դարձեալ և վասն մնացելոցն մեղուցեալ նմա ազգացն Կամսարական և Ամատունի, որ սուգեալ զօղեալ էին յանյայտ տեղիս. վասն որոյ մաղթեաց զթալ, իբր յաստուածային հրամանէ՝ ոչ համարել որդւոց զյանցանս հարց. մանաւանդ զի և հարքն որք մեղանն, նոքին սակս այնր և մեռան: Որոց մնացելոցն պարգեւեալ զկեալն, հրամայեաց զտունս իւրաքանչիւրոցն զկալեալն յարքունիս՝ դարձուցանել ՚ի նոսա. բայց միայն ՚ի գահ հայրենի ոչ հաստատել, այլ ՚ի խոնարհ քան զբազումս մատուցեալ նախարարս, ՚ի կարգ կրտսերագունից պատրաստել: Իսկ զազգն Համազասպայ, որ է տոհմ Մամիկոնեան, ՚ի վեր մատուցանել, զի կարգեսցին ունել զհինգերորդ գահ նախարարացն Հայոց. և ՚ի զիւանի իւրում գրել:

Զի զերկուս զայս այսպէս պահէին սովորաբար. զի յորժամ նստէր արքայ նոր, նոյն ժամայն փոխէին զգրամ գտեալ ՚ի գանձս արքունի, զնորային տպաւորեալ պատկեր. և գիր զիւանին՝ յայլ փոխեալ նորա անուամբ, սուղ ինչ զանագանեալ, ոչ բառնալով զհինն: Իսկ եթէ յամիցէ ՚ի տէրութեանն ամս բազումս, և արասցէ աշխարհագիր նոր, թողուն զայն որ ՚ի հնոյն փոխեցաւ, զի միայն ՚ի նորոյն վերագրեսցի անուն: Արդ Արտաշիր ոչ ժամանէ ՚ի կարճութենէ աւուրցն այլ առնել աշխարհագիր. յայնմ՝ որ յառաջնոցն փոխեաց, իւր անուամբն հրամայեաց գրել զայդ ամենայն, և տալ գահու և պատուոյ՝ հանդերձ իշխանութեամբ գիւղից և զաստակերտաց Համազասպայ, որում ցանկայրն սպարապետութեան Հայոց, հրովարտակ առ Վռամշապուհ մեր թագաւոր գրեալ զայս:

Մազգեզանց քաջ Արտաշիր արքայից արքայ, առ եղբայր Վռամշապուհ թագաւոր Հայոց ողջոյն շատ:

Ընկալայ զգրեալսս քո, որ ինչ վասն եպիսկոպոսիս Սահակայ, և յիշեցի զերախտիս նախնեաց զորա, որք էին նահապետք Սուրենեան Պահլաւոյ, և կամաւ յանձն առին զտէրութիւն իմոյ նախնւոյն և համանուանն Արտաշրի. և այնչափ սիրեալ զնա քան զիւրեանց ազգայինսն, մինչ զի ոչ շատացան միայն ՚ի Պարսից աշխարհիս մարտնչել ընդ նոսա, այլ և ՚ի ձերդ⁹ եկեալ նորին ազգաւ, սպանին զիմսորով զքո նախնին. և գտոյժս

⁹ ձերդ — „das eurige (sc. Land)“.

12. 2. 80

սպանութեանն իւրեանց հատուցին մահուամբ: Իսկ որդի սպանողին Գրի-
գոր զկեանս և զթագաւորութիւն կորուսեալ հիւանդութեամբ Տրդատայ,
վերստին ետ իւրով բժշկութեամբ. և առաւել առ ձեզ եղև երախտաւոր:
Վասն որոյ զորդիացեալդ դորա զՀամագասպ կացուցես՝ ի վերայ զօրացդ
սպարապետ՝ մեր հրամանաւ, և ազգի դորա տացես զգահ հինգերորդ՝
պատուոյ նախարարացդ. և զգեւղս և զգաստակերտս, զոր տուեալ է
նախնեացն քոց հարց դոցա, կալցին դոքա: Սապէս և գտունս վնասակարաց
ազգացդ, զոր կալաք յարքունիս, թողցես՝ ի բաց՝ աներկիւղաբար ժառ-
անգել նոցին մնացորդաց. բայց գահուց հայրենականաց պատուոյն մի
10 արասցես արժանի. զի և մեք՝ ի մերում դիւանի հրամայեցաք գրել: Ողջ
լեր:

Բայց յորժամ եկն մեծն Սահակ և զամենայն պարզեալսն յԱրտաշէրէ
հաստատեաց, մեռաւ արքայն Պարսից Արտաշէր, և փոխանակ նորա թա-
գաւորեաց Վուամ, որ և Կրմանն կոչեցաւ, ամս տասն: Եւ զնոյն բարեկա-
մութիւն կալաւ ընդ աշխարհս Հայոց և ընդ թագաւորին մերոյ Վուամ-
շապհոյ և ընդ մեծին Սահակայ. և էր խաղաղութիւն ՚ի մէջ Վուամայ և Արկա-
ղեայ: Եւ Վուամշապուհ ունէր զաշխարհս մեր, և ծառայէր երկոցունց
թագաւորացն՝ տալով զհարկս, զմասինն Պարսից՝ Վուամայ, և զմասինն
Յունաց՝ Արկաղեայ:

ԳԼ. ԾԲ

X 20

Դի

Յայնմ ժամանակի հիւանդացեալ Արկաղ, և շարժմանց ահագնից և
հրնկիզութիւն եղեալ ՚ի Բիւզանդիոն, որ յաղագս մեծին Յովհաննու, շփո-
թեալ լինէր թագաւորութիւնն Յունաց. և զօրքն ընդ միմեանս պատե-
րագմէին և ընդ Պարսս: Վասն որոյ Վուամ հրամայեաց Վուամշապհոյ
մեր թագաւորին իջանել ՚ի Միջագետս, զի խաղաղացուցեալ կարգեսցէ
զնոսս: Եւ իջեալ նորա և կարգեալ զայս ամենայն, ոչ փոքր ինչ կրէ աշխա-
տութիւն յաղագս քարտուղարի. զի մինչև գնաց Մեսրոպ յարքունական
դրանէն՝ ոչ զոք ՚ի ճարտարաց գտանէր անդ ՚ի դպրաց, քանզի պարսկա-
կանաւն վարէին գրով. վասն որոյ մատուցեալ առ արքայն քահանայի
20 Հարէլ անուն կոչեցեալ, խոստանայր հայկականացս լեզուաց առնել
նշանագիր, յարմարեալ ՚ի Դանիէլէ եպիսկոպոստ՝ յիւրմէ մերձաւորէ: Չո-

րով¹⁰ անփոյթ արարեալ արքային, և ելեալ 'ի Հայս, գտանէ ժողովեալ առ մեծն Սահակ և Մեսրոպ զամենայն եպիսկոպոսունս՝ հողալ զգլխտ դպրութեան Հայոց, զոր զգացուցին արքային. և նա պատմեաց զասացեալն վանականին: Չոր իբրև լուան, թախանձէին զնա՝ փոյթ զայնպիսեացն¹¹ առնել պիտոյից:

Վասն որոյ յաշխարհէս մերոյ առաքեաց հրեշտակութեամբ զայր մի պատուական և հաւատարիմ իւր, խաղունի ազգաւ՝ Վահրիճ անուն, յոյժ փափազող նորին գործոյ, առ Հարէլն այն: Չոր առեալ, և երթեալ նովաւ հանդերձ քաջ հմտացեալ 'ի Դանիէլէ, կարգեալ ըստ ձևոյ օրինակի յունականին զվազնջուց գտեալ նշանագիր տառից, եկեալ ետուն ցմեծն Սահակ և Մեսրոպ: Որոց ուսեալ, և թեաքելով ընդ նոսա տղայոց զամս սակաւս, տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրօք ստոյգ հօլովել զհեզեանայ բառից հայկականաց հազներգաբար՝ մուրացած իւն այնուիկ¹² գծագրութեամբ:

ԳԼ. ԾԳ

Չկնի այսորիկ ինքնին Մեսրոպ իջեալ 'ի Միջագետս՝ հանդերձ աշակերտօք առ նոյն Դանիէլ, և ոչ աւելի ինչ գտեալ քան զառաջինն, անցանէ և յԵդեսիայ առ Պղատոն ոմն ճարտասան հեթանոս՝ իշխան զիււանին: Եւ նորա խնդութեամբ ընկալեալ, և զոր ինչ միանգամ 'ի միտ առնոյր բան հայերէն յինքն առեալ, և շատ ջանացեալ և ոչ օգտեալ, զտղիտութիւն խոստովանեաց հոխորն: Եւ զայլ ոմն ասելով յոյժ հասու, վարդապետ իւր եղեալ յառաջագոյն, և ապա առեալ զճարտարացն գրեան 'ի նոյն գիււանէն Եդեսիայ, և գնացեալ քրիստոնէութեան հաւատաց. որոյ անուն Եպիփանոս. զոր խնդրեալ գտցես լցուցանել զփափաքդ քո:¹³

Յայնժամ Մեսրոպայ օգնականութիւն 'ի Բարբիլոսէ եպիսկոպոսէ գտեալ, և անցեալ ընդ Փիւնիկէ 'ի Սամոս գիւմէ. քանզի Եպիփանոս վճարելով զկենցաղս՝ թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հոտիանոս, հրաշալի արուեստիւ Հելլէն գրչութեամբ, որ 'ի Սամոս էր միայնացեալ: Առ սա

¹⁰ զորով vgl. § 341.

¹¹ զայնպիսեաց vgl. § 340.

¹² այնուիկ s. § 217.

¹³ Der letzte Satz dieses Abschnittes ist natürlich direkte Rede.

երթեալ Մեսրոպայ, և յայսմ ևս անշահ մնացեալ, յաղօթս ապաւինի. և տեսանէ ոչ ՚ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ՚ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ՚ի վերայ վիմր Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ի. զի, որպէս ՚ի ձեան վերջք գծին կուտեալ ունէր քարն: Եւ ոչ միայն երևութացաւ, այլ և հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ՚ի միտս նորա հաւաքեցաւ: Եւ յարուցեալ յաղօթիցն, ստեղծ զնշանագիրս մեր՝ հանդերձ Հոսիանոսիւ կերպածեալ զգիրն առ ձեռն պատրաստ. փոխատրելով զհայերէն աթուրթայսն ըստ անսայթաքութեան սիւղորայից Հելլենացոց: Եւ իսկոյն ՚ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսանելով յԱռակաց, բովանդակ զքսան և երկու յայտնին և զնոր կտակ յեղով ՚ի Հայ բան, նա և աշակերտք նորա Յոհան Եկեղեցային և Յովսէփ Պաղնացի. միանգամայն և զարուեստ գրչութեան ուսուցանել տարով իւրոց մանկագոյն աշակերտացն:

24.7.80

ԳԼ. ԾԴ

(395-408)
 — Վախճանեալ Արկաղայ, փոխանակ թագաւորէ նորին որդի, որ կոչեցան Թէոդոս փոքր. և զնոյն բարեկամութիւն կալաւ ընդ մերում աշխարհիս, և ընդ արքային մերում Վոամշապհոյ. բայց զմասն իւր նմա ոչ հաւատաց, այլ ինքեան գործակալօք կալաւ. և խաղաղութիւն արար ընդ Յագկերտի արքայի Պարսից: Ընդ այն ժամանակս եկեալ Մեսրոպայ, և բերեալ զնշանագիր մերոյ լեզուիս, և հրամանաւ Վոամշապհոյ և մեծին Սահակայ՝ ժողովեալ մանկունս ընտրեալս, ուշեղս և քաջասունս, փափկաձայնս և երկարոզիս, և զպրոցս կարգեաց յամենայն գաւառս, և ուսոյց զբնաւ կողմանս բաժնին Պարսից՝ բայց ՚ի Յունաց մասնէն, որք ընդ ձեռնադրութեանն տուգանեցան՝ վիճակեալք յաթոռն Կեսարու, վարել Յունական պարութեամբ և ոչ Ասորւով:

(408-450)

(395-408) (327-414) (299-420)

Իսկ Մեսրոպայ երթեալ յաշխարհն Վրաց, առնէ և նոցա նշանագիրս տուեցելովն¹⁴ ՚ի վերուստ շնորհաւն, հանդերձ Զաղայիւ ոմամբ թարգմանաւ Հելլէն և Հայ լեզուի. ձեռնտու լինելոյ արքայի նոցա Բակրոյ, և եպիսկոպոսին Մովսիսի: Եւ ընտրեալ մանկունս, և յերկուս բաժանեալ

172

¹⁴ տուեցելովն Instrum. sg. vom Infinitiv des Passivs von տամ „geben“ (regelmäßige Form!).

5273

դասս, և վարդապետս թողու նոցա յաշակերտաց իւրոց զտէր Խորձենացի, և զՄուշէ Տարօնեցի:

15

Եւ ինքն յԱղուանս իջեալ առ Արսւլաղէն թագաւոր նոցա և առ եպիսկոպոսապետն Երեմիայ. որոց կամաւ յանձն առեալ զվարդապետութիւն նորա, ետուն մանկունս ընտիրս: Եւ կոչեալ զԲենիամին ոմն շնորհաւոր թարգման, զոր անդանդալ արձակեաց մանուկն Վասակ Սիւնեաց տէր՝ ՚ի ձեռն Անանիայի եպիսկոպոսի իւրոյ. որովք ստեղծ զնշանագիրս կոկորդախօս աղխազուր խժական խեցբեկազունին այնորիկ դարգարացւոց լեզուին: Եւ վերակացու թողեալ զաշակերտ իւր զՅովնաթան, միանգամայն և քահանայս կացուցեալ զրանն արքունի, ինքն դառնայ ՚ի Հայս. և գտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ Յասորւոյն՝ յոչ լինելոյ¹⁵ Յունի: Քանզի նախ ՚ի Մերուժանայ այրեալ լինէին ընդ հանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ ՚ի բաժանել զաշխարհս Հայոց՝ չտային Պարսիկ վերակացուքն յոյն ուսանել զպրութեան ումեք յիւրեանց մասինն, այլ միայն Ասորի:

10

17

Th

¹⁵ ՚ի ոչ լինելոյ „während (da) nicht vorhanden war“, vgl. § 493.



FAUSTUS VON BYZANZ

Über Faustus von Byzanz (*Φαυστος Βυζαντινός*) wissen wir nichts Genaueres. Die unter seinem Namen überlieferte „Geschichte Armeniens“ (*Պատմութիւն Հայոց*) in vier Büchern behandelt den Zeitraum von ca. 350 bis ca. 400. Die Geschichte ist als eine Fortsetzung der Geschichte des Agathangelos zu betrachten, die die Zeit von 286 bis 332 in zwei Büchern schildert. Aus diesem Grunde werden die vier Bücher des Faustus als III–IV gezählt.

Die Kapitel 5–13 des IV. Buches schildern das Zusammentreffen des armenischen Katholikos Nerses des Großen mit dem oströmischen Kaiser Valens (364–378) und seine Verbannung; ferner den Streit zwischen Ariern und Orthodoxen und die Verfolgung der Christen durch Valens und dessen Tod. Nerses kehrt aus der Verbannung zurück und gewinnt Einfluß auf den armenischen König Aršak. Der Inhalt von Kap. 37–39 des V. Buches ist kurz folgender: Dem vom persischen König Šapuh gefangenen Manuel gelingt die Flucht nach Armenien. Er wird oberster Heerführer. Ein Zwist zwischen ihm und dem König Varazdat führt zu einem blutigen Kampf. Varazdat wird besiegt und aus Armenien vertrieben. Manuel übernimmt zunächst die Herrschaft, erklärt aber den noch jungen Sohn Aršak von Varazdats ermordeten Vorgänger Pap zum König, erzieht ihn jedoch zunächst noch. Infolge von Neid und Hinterlist des Ardzruniers Merušan kommt es zum Kampf zwischen Manuel und den persischen Garnisonstruppen, die völlig vernichtet werden, ebenso ein großes vom Perserkönig gesandtes Heer. Darauf genießt Armenien sieben Jahre lang Frieden.

Unserem Text liegt eine Venediger Ausgabe von 1914 zugrunde. Die nicht wenigen in ihr enthaltenen Fehler sind verbessert worden. Frühere Ausgaben sind Venediger Drucke von 1832, 1859, eine russische (Petersburg) von 1833.

Deutsche Übersetzung: M. Lauer, Faustus von Byzanz, Geschichte Armeniens. Köln. 1879.

Պատմութիւն Հայոց

Buch IV

Գլ. Ե

Ապա վասն խաղաղութեան ուխտին միաբանութեան դաշինն, որ էր աշխարհին Հայոց ընդ կայսերն Յունաց, դէպ եղև առաքել անդր կազմութեամբ մեծաւ արքային Հայոց. զի ինքնին մեծ կաթողիկոսն Հայոց Ներսէս, և ի մեծամեծացն Հայոց սատրապս տասն ընդ նմա առնել, զի երթիցէ, ի մէջ կայսերն և ի մէջ իւրեանց զուխտն հաւանութեան և խաղաղութեան նորոգեսցեն: Ապա չոգան գնացին հասին ի կայսերական պալատն թագաւորացն Յունաց:

Չայնու ժամանակաւ թագաւորն մեծ Յունաց վաղէս ի խոտորութեան հերետիկոսութեան աղանդութեանն արիանոսաց էր ի հաւատս: Արդ իբրև ետես զնոսա թագաւորն, գառաջինն մեծապայծառ փառօք մեծաւ շքով մեծարեաց զնոսա: Ապա դէպ եղև զի որդի միամօր կայսերն, այն իսկ գտանէր նորա զաւակ, անդեալ դնէր յախտս սաստիկ հիւանդութեան. ապա թագաւորն վասն աղօթս առնելոյ ի վերայ մանկանն ստիպէր զտուրբ կաթողիկոսն Հայոց զՆերսէս: Իսկ նա ի մէջ մատուցեալ, խօսել սկսաւ և ասէ.

Es folgt eine sehr lange Rede des Nerses, in der er den Inhalt des orthodoxen Glaubens auseinandersetzt und die Heilung des Sohnes von der Annahme dieses Glaubens seitens des arianischen Kaisers Valens abhängig macht.

Եւ իբրև լուաւ թագաւորն զայս ամենայն, զի մինչ դեռ խօսէրն առաջի նորա՝ նա լուռ և եթ կայր, ոտն զոտամբ արկեալ, արմուկն ի ծունդ և ձեռն ի ծնօտի՝ նստաւ այնպէս, մինչև կատարեաց խօսեցաւ զամենայն զբանս իւր: Եւ զրէին զայս սեմիարք նոտարացի արքային, որք կայինն առաջի թագաւորին: Ապա մեծապէս ի ցասումն բրդեալ լինէր թագաւորն, և

13.7. տայր հրաման՝ երկաթի կապանօք մեծապէս կապել զսուրբ եպիսկոպոս-
 սապեան Հայոց զՆերսէս, և արկանել ի փիւղակէ. զի մինչև տեսեալ ուշ
 ունիցի մանկանն, եթէ կեցցջ՝ եթէ ոչ. ապա յետ այնորիկ տեսցէ զինչ
 արժան իցէ առնել: Ապա յետ ընու աւուրցն հնգետասանիցն անցելոցն,
 սատակեցաւ մանուկն որդի կայսերն, և ընդ ամենայն՝ այն ժառանգ գտա-
 նէր նորա: Իբրև ելաց և կոծեցաւ որչափ կոծեալն էր, ապա ետ հրաման
 և ածին առաջի իւր զսուրբն Ներսէս: Մօտ առ ինքն կոչեալ հարցանէր,
 եթէ ի ձէնջ քրիստոնէից եղև մանկանն մեռանել: Իսկ նա ետ պատաս-
 խանի և ասէ. Հնգետասան օր յետ բանիցն եղելոյ երկարեաց Քրիստոս,
 10 թերևս դարձջիք. իսկ իբրև ոչ դարձայք, սատակեցայք: Իսկ դու այժմ
 եթէ հաւատասցես, կարող է Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս յարու-
 ցանել զնա, և հանդերձ որդւոյն քո և ամենայն ընդանեօքն:

Ապա զայրացեալ ընդ բանսն թագաւորն, կամեցաւ զնա շարմահ
 առնել. ապա մատուցեալք առ թագաւորն աւագք իւրոյ դրանն և խորհր-
 դականք, և ասեն ցկայսրն՝ եթէ յօտար և ի հեռաստան երկրէ վասն որոյ
 յղեալ զդոսա հզօր թագաւորի, և մեծի տեսան հրեշտակք են, մի ինչ
 լիցի դոցա փրաս ի մէնջ. եթէ ոչ, մեծ պատերազմ յառնելոց է ընդ մեզ
 և ընդ մեծ թագաւորն Հայոց, և մեծ թշնամութիւն ի մէջ անգանելոց է.
 զի ոչ ³⁰¹եթէ նորա բանիւ մանուկն կեայր կամ մեռանէր: Եւ թէպէտ այս-
 20 պիսի բազում ինչ ասէին, ոչ կարէին զարտմտութիւն բարկութեանն
 շիջուցանել զթագաւորին:

Ապա իբրև յանհնարին մտանէին իրքն, և պնդեալ յամառէին ամենայն
 բազմութիւնքն՝ զի մի զայրն սպանցէ, ապա ուրեմն հազիւ հազիւ կարա-
 ցին իւր զօրքն ի հաւան ածել զթագաւորն՝ այնչափ առնել, դոնեայ մի
 սպանցէ: Բայց սակայն արձակել տալ ոչ կարացին. այլ արկին յայն չափս,
 զի աքսորեսցի միայն: Չի այսպէս մեծապէս ճգնեալ խորհեցան իմաս-
 տունքն, զի առ դամ միայն աքսորելոյն ապրեսցի, դոնեայ ապա առ յապա
 դարձ լիցի առնն, զի մի ի խոռվութիւն և ի պատերազմ ի մէջ թագաւորու-
 թեանցն երկուցունց լինիցի: Չի ասէին. Ոչ երբէք ուրեք եղեալ է, ոչ ի
 30 մէջ թշնամեաց ուրեք, և ոչ ի մէջ պատերազմի թարմատար հրեշտակաց
 ինչ կարևկապ և ոչ բանք, թող թէ մահ. զի ոչ երբէք ուրեք ի հնոց ժամա-
 նակաց հետէ, թող թէ այր մեծ և աւագ և աշխարհի միոյ գլուխ: Չի թա-
 դաւորն դոցա աշխարհին և դա, որպէս ասեն, ընդ մի համար են. և ասեն՝

թէ աշխարհն այն, ուստի դոցա եկեալ են¹⁾, սիրեն դայրդ գայդ. և երևելի է դա անդ: Եւ որպէս ետուն զրոյց որք ընդ նմա եկեալ էին, թէ ազգակից համարին զսա և մերձաւոր թագաւորին. և իւրեանց աշխարհն սիրեն²⁾ դայրդ գայդ:

12.2.81

582

Իսկ թագաւորն տայր նոցա պատասխանի. Բարիոք ասացէք՝ եթէ այդ — այդպէս իցէ, ով արք իմաստունք. զի եթէ տէր նորա տուեալ էր ինձ ի ձեռն նորա զանարգութեան թշնամանս, ոչ գոյր նորա մեղ զնել բանբերին, և ոչ պատիժ և ոչ բանք: Իսկ նա իւրովք կամօք թշնամանեաց զիս, և իւրովք կամօք եղև երաշխաւոր մահու որդւոյն իմոյ. և ասաց՝ բայ՝ ես իսկ սպանի զնա: Իսկ եթէ նորա թագաւորն զնա առ սէր յղեաց, նա եկն³⁾ կոտորել զմեզ, վասն այտորիկ առ իւր թագաւորն իսկ է վնասակար: Բայց փոխանակ զի ինքն անձամբ զանձն իւր կալաւ³⁾, պարտ ինչ է այնմ իմիք. ես ինձէն գիտեմ թէ չեղև ի նմանէ, մահապարտ է:

10

Ապա ոչ ինչ անսաց նոցա թագաւորն, այլ հրաման ետ աքսորել զերանելին Ներսէս, և տանել ընկենուլ զնա ի կղզի մի ի ծովուն մեծի, յայնպիսի — յանապատ տեղի՝ ուր ոչ մարդ կայցէ, և ոչ ջուր ըմպելոյ, և ոչ կերակուր. բայց սոսկ միայն անապատ իցէ, զի սովամահ սատակեսցէ զնա: Եւ ժողովեալ զամենայն իւրոյ իշխանութեանն քաղաքաց զամենայն որթողոքս զեպիսկոպոսս զերիցունս զսարկաւազունս, որ միանգամ յուղղութեանն էին և ի հաւատս. և մեծ ժողով առ հասարակ իշխանութեանն ժողովեցան: 20 Եւ խօսէր ընդ նոսա, զի ամենքեան յանձն առցեն դառնալ ի խոտորութեան հաւատն ազանդութեանն արիանոսաց, և դարձցին անդրէն երթալով յիւրաքանչիւր վիճակս, և շրջեսցեն զիւրաքանչիւր ժողովուրդս յարիանոսաց հաւատն: Իսկ իբրև ոչ ոք ի նոցանէն այսմիկ յանձն առնուլ հաւանեցան, ապա աքսորեաց զնոսա, և ընկէց յաշխարհս օտարս, զի մի — ոք ի նոցանէն դարձցի յիւր տեղիս: Եւ փոխանակ նոցա՝ զանօրէնութեան հովիւսն կացուցանէր, յամենայն քաղաքս արիանոսս չեպիսկոպոսս յղէր. և եղև մեծ շարժումն և խռովութիւն և հերձուածք յամենայն եկեղեցիս տիեզերաց:

20.12

Եւ մեծ եղև ընդ ամենայն տիեզերք փորձութիւնք ներդութեանց վտանգի 30 քան զառաջին թագաւորացն. ևս չար⁴⁾ որ ի հեթանոսացն պատերազմն

1 են ist Plural statt Singular, vgl. § 379.
2 Zu բայ vgl. § 499.
3 զանձն իւր ունիմ muß wohl bedeuten „sich (so) verhalten, benehmen“.
4 Nach չար ist քան zu ergänzen.

124



և խոռովութիւնքն յառաջագոյն յառնէր առ այլովք զիցապաշտ մեհենասէր
 թագաւորօք: Ամենայն ճշմարիտ ուղղափառհաւատք վարդապետք մեր-
 ժեցան յիւրաքանչիւր ժողովրդոց, և զնոցա տեղիսն կալան մշակք սատա-
 նայի. և ամենայն հաւատացելոց ի Քրիստոս հասանէին բազում նեղու-
 թիւնք, և առ հասարակ ամենայն ժողովրդոցն լինէր սուգ և տրամու-
 թիւնք: Զի կալան զեկեղեցիսն ամենայն պաշտօնեայքն սատանայի, և
 հեռացան հովիւքն յիւրաքանչիւր հօտից, և եղեն խաշինք ցրուեալք. զի
 ոչ գոյր նոցա առաջնորդ, և ոչ մնաց տեղի աղօթից հաւատացելոց ժողով-
 րդոց: Այլ զի մի հրեշտակացն սատանայի հաւանեսցին, նոքա ի բացատ
 յանյարկ տեղիս՝ արտաքս և քաղաքաց և շինաց ասէին կալ յաղօթս. և ի
 կատարել զաղօթսն իւրեանց՝ խնդրէին ուխտիւք յԱստուծոյ, զի փոխեսցէ
 զանցուցէ զչար ժամանակն, և դարձուցէ զճշմարիտ իւրաքանչիւր
 վերակացուս յիւրաքանչիւր ժողովուրդսն. և յիւրեանց վաստակս ի
 շինեալ եկեղեցիսն՝ ուստի մերժեցանն, թերևս դարձ լիցի նոցա այսրէն:
 Իսկ յայն յիշխանաց՝ որ ընդ սրբոյն Ներսէսի երթեալ էին յերկրէն
 Հայոց, զնոսա բազում գանձիւք լցեալ արծակէր, կաշառակուրծս կաշա-
 ռաբեկս առնէր առ հասարակ՝ որ միայն անդ էին. և բազում գանձս ոսկւոյ
 և արծաթոյ, և ականց պատուականաց ի ձեռն նոցա՝ արքային առաքէր,
 իբրև այնու կամէր հաճել զմիտս թագաւորին: Զի ոչ գոյր չափ և ոչ թիւ,
 զի անհամար գանձս առաքէր արքային Հայոց. գրէր առ նա գիր ամբաս-
 տանութեան զսրբոյն Ներսիսէ, իբրև թէ սպան զորդի նորա: Եւ արձա-
 կեաց ևս զպանդանդսն զԱրշակունիսն թագաւորին Հայոց, որ կային ևս
 ի կայսերական պալատանն. զի են նոքա եղբորորդիք արքային Արշակայ,
 զի միումն անունն ճանաչէր Գնեւ, և միւսումն անունն Տիրիթ, ետ ի ձեռս
 սատրապացն Հայոց, և զնոսա զայս օրինակ անգուստ յուղարկէր:

ԳԼ. Զ

Ապա իբրև սրամտեալ թագաւորն Վաղէս՝ յարոյց հալածանս ի վերայ
 եկեղեցեաց սրբոց ընդ ամենայն կողմանս իւրոյ իշխանութեանն, և զամե-
 նայն եպիսկոպոսս մեկնեաց եհան յիւրաքանչիւր ժողովրդոց և ընկէց⁵
 զնոսա յօտարութիւն, առաւելիւր⁶ նիւթեալ մեծաւ բարկութեամբ ի վերայ

⁵ Zu ընկէց vgl. § 43.

⁶ Zu առաւելիւր vgl. § 244, Anm. 3.



սրբոյն Ներսէսի. վասն զի պատճառք մահուան միամօր որդւոյն սիրելոյ
 իւրոյ եղև նա, ապա չարապէս չարութեամբ դառնութեամբ մահուան
 կամէր վճարել զնա: Որում մեծամեծքն և ամենայն խորհրդականք թագա-
 ւորին չհաւանեալք չառնուին յանձն, այլ հազիւ հազիւ կարացին թափել
 ի մահուանէ: Ապա ետ հրաման ընդենուլ զնա ի կղզին մի մեծ ուվկիանոս
 ասագին ծովու, յանապատ յանջուր տեղի մի՝ ուր ոչ բոյս ինչ դալար, և
 ոչ արմատ ինչ, և ոչ այլ ինչ ամենևին՝ որ ինչ ի պէտս մարդկան լինիցի.
 բայց միայն քար և աւազ ապառաժ, և ոչ ճանապարհ ուրեք ընդ այն, և
 ոչ գնացք ինչ նաւաց:

Ապա անցուցին զնա ի տեղին հրամայեալ, և ընդ նմա արս եւթանասուն. 10
 այլ արքն որք կէսքն եպիսկոպոս էին յայլոց քաղաքաց, կէսք կղերի-
 կոսք յայլոց եկեղեցեաց: Իսկ նա խնդայր և ուրախ էր ընդ այն, զի եհաս
 նմա կրել չարչարանս վասն անուան տեառն Յիսուսի Քրիստոսի Որդւոյն
 Աստուծոյ: Եւ էին նորա այն որք ընդ նմայն աքսորեցան յիւրոցն՝ երկու.
 անուն միոյն Ռաստոմ սարկաւազ, և երկրորդին՝ Տիրանամ. և այլքն եւթա-
 նասունքն որ ընդ նոսա, զորս ուստեք ուստեք ընդ նոսա ամացեալ ի
 նաւն՝ ի կղզին խաղացուցին: Եւ գնաց մեկնեցաւ նաւն՝ որ զնոսայն տանէր,
 և ըստ հողմոյն յաջողութեան ի հնգետասան օր հասանէր ի հրամայեալ
 տեղին. և թափեաց զնոսա նաւն ի կղզին, և ինքն այսրէն դարձաւ:

Եւ յայնմ կղզուջ ոչ գտանէր ոչ ջուր ըմպելոյ և ոչ դոյզն ինչ արմատ, 20
 զի անարմատ աւազ միայն էր. զի վասն այնորիկ իսկ տարեալ էր զնոսա
 անդր, զի սովամահ արասցեն զնոսա ըստ խստութեան թագաւորին
 հրամանին: Եւ եղև իբրև եհաս նոցա յամել ամսօրեայ մի ժամանակս, որ
 տկարագոյնքն էին ի նոսա՝ սկսան նքողել ծարաւել նուաղել և ներգեւել
 դորսովել ի քաղցոյ կամ ի ծարաւոյ: Ապա մխիթարել և քաջալերել սկսաւ
 զամենեսեան Ներսէս, և ասէ. Պինդ կացէք, հաստատուն լերուք, և մի
 երկնչիք. զի այն տէր մեր Յիսուս Քրիստոս՝ որ հրամայեաց ծառոյն սաբե-
 կայ բերել զխոյն պտուղ, և ընկալաւ զիսահակ կենդանի զոհ, և օրհնեաց
 զՅակոբ ի պանդխտութեան, և ապրեցոյց զՅովսէփ ի ծառայութենէն և տի-
 րացոյց, հրամայեաց և մորենւոյն հրով տերեւել ծաղկել, և օղոցն հրամա- 30
 յեաց քաղցրութեանն հացին կերակրոյ ի վերուստ ցօղել, և զլորամարզին ի
 թիչնոց տալ ապստամբող և դառնացող ժողովրդեանն, և ինքն Քրիստոս վէմ
 եղեալ՝ ընդ նոսա շրջեր յանապատին յանջրդին, և զքաղցրութիւն ջուրցն
 ի ծարաւ նոցա մատուցանէր, և խորհուրդ հանդերձելոցն՝ որ առ յապա 1ւ

լինելոցն էր՝ գուշակէր գաւազանաւն ի ձեռն Մովսէսի, վէմն խոցեալ՝
 հոսէր նոցա ջուր, զնոսա անդ գառաջինսն օրինակօքն կեցուցանէր, և
 ինքն կերակրեաց ի սակաւ հացէ զժողովուրդն յանապատի անդ, և ըստ
 ծառոյն՝ որ զխոյն եբեր՝ ինքն զխաչէն պրկեալ կախեալ խաչեցաւ, և
 օրինակաւն ըստ նմանութեան ի կողսն խոցեցաւ⁷, և եհան մեզ անտի
 ջուր փրկութեան ի լուացունմն սրբութեան ասպաշխարութեան՝ յաղագս
 կենաց մերոց, և ինքն վասն մեր հաց եղև, և զարիւնն իւր ըմպել ետ մեզ,
 զի գմարմինն ի մարմինն խառնեցցէ և արիւնն յարիւն, զի զաստուածու-
 թիւնն յօգիս մեր միացուցեալ, զմեզ ընդ սուրբ Հոգւոյն, և ի վախճանի զմեզ
 10 բնակիցս աստուածութեանն արասցէ. արդ որ այսչափ երախտիս առնէր
 մեզ, մինչև մեք անգամ բանս գոհացողութեան փոխարէն չնորհս ոչ հա-
 տուցանէաք նմա, իսկ արդ զիմրդ վասն անուան նորա արժանի եղեալք
 սակաւիկ մի թշնամանաց՝ սովամահ ինչ կարծիցէք լինել: Ոչ այդպէս. այլ
 հաւատով խնդրեսցուք, և տացի մեզ կերակուր: Իսկ արդ նշան խնդրեմք,
 20 ոչ. այլ նշան թերահաւատից պիտոյ է, և առ զչարան զարձուցանելոյ
 յուղղութիւն. այլ մեզ, գիտէ տէր զպիտոյան մեր և զօգտակարսն, և ըստ
 այնմ պատրաստէ զինչ և պիտոյ է մեզ: Իսկ մեք ոչ այնպէս, որ քաւ մի
 լիցի, որպէս ասացաւ. ասէ, «Ազգ չար նշան խնդրէ»: Իսկ տէրն կարող
 է և առանց կերակրոյ պահել զմեզ կենդանիս, և կարող է տալ կերակուր.
 և արդարացուցանել կարող է, և արժանիս առնել՝ վասն իւրոյ անուանն
 պատրաստել մեզ մեռանել. տալ մեզ զսովորական ընդունելութիւն բնու-
 թեան մահուն, որ չերթայ ուրեք ի մարդկանէ, այլ պատճառս միայն
 առնէ զանուն իւր ի վերայ աներևոյթ մարմնոյն. մահէ, և իւրոյ արքայու-
 թեանն զմեզ բազորդս բաժանորդս առնէ: Կարող է և ի խաղաղութեան
 30 վախճանել, և առնել արժանիս արքայութեան կարգացն:

207.32 Չայս և այսպիսի և որ երթայր զհետ սորին՝ իբրև խօսեցաւ, արդ՝ ասէ՝
 զիք ծունր ամենեքեան, զի արժանի միայն լիցուք մարդասիրութեանն
 Քրիստոսի: Եւ ի դնել նոցա երիցս անգամ ծունր և կալ յաղօթս, և յարեալ
 ի ծովու անդ հողմ սաստիկ, և սկսաւ ընկենուլ ի կղզի անդր ձուկն սաստիկ
 30 յոյժ, մինչև շեղջս շեղջս կուտէր ի ցամաքի կղզւոյն. և ընդ նմին փայտ

⁷ Der Text ist hier zweifellos nicht in Ordnung. Die Lauersche Übersetzung: „er selbst . . . ist wie der Widder, den das Gebüsch brachte, selbst am Kreuze als Retter hangend gekreuzigt, wie das Vorbild, in den Seiten verwundet worden und hat uns von dort das Wasser . . . fließen lassen“ entspricht nicht dem Text.

աստիկ յոյժ: Իբրև հանին կուտեցին զփայտն, խորհէին թէ հուր պիտոյ է, որով զփայտն լուցցուք: Յանկարծակի ինքնին լուցեալ փայտն հրով վառէր. և նոքա յարուցեալք զոհացեալ, զաղօթսն կատարելոյ՝ մատեան արկին ի խորովս, և բազմեցան և մատեան յուտել: Եւ իբրև կերան յագեցան, և պէտք եղեալ ըմպելոյ ջուր՝ յոտն եկաց սուրբն Ներսէս, և մատուցեալ փորեաց զաւազն ի կղզւոջ, և բղխեաց աղբեր՝ ջուր քաղցր անոյշ, և անտի ըմպէին որք հանապազորդք էին ի կղզւոջն:

Յայնմ կղզւոջ զայս օրինակ կերակրեալ լինէին ի ծովէ անտի. և հանապազ մխիթարէր զնոսա սուրբն Ներսէս, և ասէր. Այսպէս յիշեցէք և ի մտի կալարուք զբանն տեառն զոր ասաց, թէ «Խնդրեցէք զարքայութիւնն Աստուծոյ և զարդարութիւն նորա, և այն ամենայն տացի և յաւելցի»: Տեսէք, եղբարք, զի ահաւասիկ իբրև հայր յորդիս մատուցեալ է առ մեզ Աստուած՝ խրատել զմեզ, զի զմեզ պիտանիս արասցէ, և զանունն քաջութեան ժառանգեցուցէ մեզ, և զմեզ մեծաց վարձուց արժանիս արասցէ: Զի զպատճառս սակաւիկ առաքինութեան ի մէնջ խնդրէ. այնչափ միայն, զի սիրեսցուք զնա. և ապա զանթիւ զանչափ զանկշիռ զանհամեմատ բարեացն առնէ զբարերարութիւնս սքանչելեաց իւրոց. և ցուցանէ զբարիատուր զերախտապարզ և հատուցմունս վասն իւրոյ մարդասիրութեանն: Քանզի և զանձն իւր ոչ խնայեաց զնել ի վերայ մեր, այլ կերակուր և ըմպելի ևս եղև մեզ:

Եւ այսպէս հանապազ հանդերձ եղբարք զոհանալ և օրհնել զտէր Յիսուս Քրիստոս, զցայդ և զցերեկ կային ի պաշտաման տեառն անդադար: Արեգական մտանելոյ կային եղբարքն, և ապա տէրունատուր կերակրոյն ուրախ լինէին, յընդենուլ ալեացն ի պատրաստել զկերակուր: Իսկ սուրբն Ներսէս յեւթն աւուրն ի կիրակէին հասեալ միայն, ապա ճաշակէր: Այլ զայս օրինակ համակ տայր նոցա զքաջարութիւն սուրբն Ներսէս ամս ինն, որ եղեն յայն կղզւոջ:

ԳԼ. Է

Իսկ եպիսկոպոսն Կեսարու Եւսեբիոս յորժամ ետես զզարմանալիսն զնախ իջանել զաղաւնոյն՝ որ եկն ի յերկնից, և հանգչել նախ յերիցապետն Կեսարու սուրբն Բարսիլիոս, ի դժկամակ միտս լինէր ընդ նմա. և տեսանէր զնա իբրև զօր հակառակորդ և զթշնամի: Քանզի հռչակ հարեալ էր

ընդ երկիր ամենայն. ասէին և պատմէին՝ թէ յորժամ ձեռնադրէին զսուրբ
կաթողիկոսն Ներսէս, էջ հանգեալ ի նմանութիւն աղաւնոյ ի վերայ՝
նախ յերիցապետն ի սուրբն Բարսիլիոս. և ապա յարուցեալ նստաւ ի
քահանայապետն Ներսէս: Եւ այս հռչակ հարկանէր զնոցանէ. մանաւանդ
— յաշխարհն Գամրաց: Մեծապէս թուէին մարդկանն սքանչելիքն ամե-
նայն. և ամենայն մարդ պատուէին զսուրբն Բարսիլիոս: Մանաւանդ
վասն սրբութեան վարուցն նորա, և կարգացն ճշմարտութեան, և բազում
խոնարհութեան նորա, և վասն աստուածախօս ջերմեռանդն աղօթիցն
նորա, և վասն վարուց կարգաց պարկեշտութեանն. և կամ վասն աղքատ-
10 սիրութեանն և վասն տառապելասէր վարուցն, և պատուիրանակատար
մշտակիր հանապազորդութեան նորա, կամ վասն բազում գիտութեանն,
զի աղբեւր էր անպախաս իմաստութեամբն. և վասն ուսուցիչ հաւատարիմ
վարդապետութեան նորա, (զի փիլիսոփայական արուեստին խնոյր ար-
կանէր հանապազ ամենայն զուր բացեալ զբերանս հերետիկոսացն, և
— զհաւատս ճշմարիտ ամենասուրբ Երրորդութեանն ամենեցուն հաստատէր):
Վասն այսր ամենայնի նայէին ընդ նա իբրև ընդ առաքեալ Քրիստոսի,
իբրև զհրեշտակ երկնաւոր. և ամենայն ոք վկայէր՝ թէ արժանի իսկ էր
նա Հոգւոյն Աստուծոյ:

Իսկ նա զանձն կարի ի խոնարհութեան ունէր, և անարժան համարէր,
20 թէպէտ և ամենայն ոք վասն գիտութեան արուեստին կարօտէր առ նա
գալ. մանաւանդ արտաքինքն իսկ ճարտարապետք փիլիսոփայիցն առ
նա ընթանային վասն իւրեանց արուեստին: Այլ նա զբազումս դարձու-
ցանէր ի պէսպէս յիւրաքանչիւր կարծեացն խոտորութենէ ի ճշմարտու-
թեանն հաւատս, երկրպագուս Քրիստոսի անթիւս մարդկան կացուցանէր:
— Եւ ամենայն երկիր սկսան ի նա նայել, որպէս թէ անդուստ յերկնից ի վե-
րուստ իջեալ իցէ. այնչափ՝ որպէս զի թէ կամիցի ոք պատմել, ոչ կարասցէ:
Այլ յորժամ խոժոռադէմ երեսօք տեսանէր զիւր եպիսկոպոսն ընդ ին-
քեան, սուրբն Բարսիլիոս տեղի տայր նմա, թողոյր զքաղաքն, և գնայր
նա անտի, ելեալ բնակէր մի ի շինացն՝ ուր և նմա պատշաճ իցէ կալ անդ:

ԳԼ. Ը

Ընդ այն ժամանակս անօրէն կայսրն Վաղէս մեծաւ բարկութեամբ
 դատէր ընդդէմ ճշմարտութեանն մշակացն. այս ինքն որ միանգամ
 զհաւատն Քրիստոսի արժանապէս հաւատասցեն՝ թէ ճշմարիտ արդարև
 Որդի Աստուծոյ իցէ, և ծնունդ ի բնութենէն Հօրն Աստուծոյ: (Վասն այ-
 սորիկ կամէր հալածանս տանջանս չարչարանս միահաղոյն՝ յարուցանել,
 և սաստիւ իշխանութեամբ առ ամենեսեան գրեալ տալ հրաման:)

Ապա ի մի վայր եղեալ՝ խորհեցան մոլեկան արիանոսացն աղանդոյն
 վարդապետք. զի ասէին, թող ընդ նոսա պայքար յանդիմանութեան
 հակառակութեան լիցի, արքայ. և որ կողմն յաղթեսցէ, յայտ լիցի. զի
 մի գնա բռնադատ արարեալ, զրադատ ինչ երևեսցի յաղթութիւնն: Եւ
 թագաւորն Վաղէս զայս լուեալ խնդալից լինէր. ընտրեաց իւր արս ճար-
 տարս և պատրաստարանս, զորս կարծէր զպիրս բանիբունս, որ անու-
 նեալք էին չեպիսկոպոսունս աղանդոյն արիանոսաց: Եւ յղեաց առ եպիս-
 կոպոսն Կեսարու Եւսեբիոս. և ժամ խնդրէր ի նոցանէ բանիցն քննու-
 թեան, զի ի հանդէս ածիցէ առ նա գնովաւ, և որ ճշմարիտն իցէ՝ յայտնի
 երևեսցի: Ապա իբրև սահմանեցաւ ժամադրութիւն, առեալ եպիսկոպոսն
 Եւսեբիոս զկղերն զամենայն, և ի մեծ հոգս մտանէր. ուստի կարծիցես
 բանիցն պատասխանիս պատրաստել. զի և բանիւ ոչ ինչ կարի էր առա-
 ւել: Ապա հաստատեցաւ այս բան ի խորհրդեանն, զի յղեսցեն հաւանե-
 ցուսցեն գերանելին Բարսիլիոս, զի եկեսցէ նա: Ձի նա, ասէ, կարող է
 բանիւ զօրութեանն. նա մեծ է, ասեն, ի նմա շնորհքն խափանել կարեն
 զնենգութիւն դաւաճանութեանն սատանայի. զի խորհի նա ի վերայ
 սրբոյ եկեղեցւոյ նորա, զոր ինքն արեամբն ստացաւ:

Գրեաց թուղթ աղաչանաց եպիսկոպոսն Եւսեբիոս առ երիցապետն
 Բարսեղ, և մեծաւ պաղատանօք որ ինչ վասն պատուին պաշտամանն.
 զի մի դիցէ ինչ ի մտի զառաջին եղեալ բանիցն գթտութիւն. այլ վասն զի
 առ Աստուած հաւատոց են բանքն և քննութիւնքն, վաղվաղակի փու-
 թասցի գալ առանց դանդաղանաց: Արկին և կղերքն ամենայն ձեռնազիր
 աղաչանաց, զի մի ինչ դանդաղեսցի գալ, այլ յարուցեալ փութանակի
 երթիցէ: Եւ արս հաւատարիմս պատուականս յղեցին վասն վաղվաղ
 գալոյ:

10

20

30

22/6/82
7193



Եւ այն ինչ արքն յուզի անդան, որ երթայինն ամել զնա անդր. արդ մինչ դեռ յուզի անգեալ երթային արքն՝ էին ի ճանապարհի, սուրբն Բարսիլիոս ուր էրն՝ մինչ դեռ ի պաշտաման տեառն կայր, անկաւ նմա քուն ծանր թանձրամած, և տեսանէր ի տեսլեան, զի այդի մի էր մեծ և վայելուչ, քաջաբեր լի պտղով. և խողք երեք անգեալ էին յայգին, և մտեալք ի ներքս յայգին՝ ապականէին զայգին և բրէին: Պատառէին բազում ունջս որթոյ, արմատաքի խլէին և զտաշտն գլխովին և զբազուկ ընջովին, և մեծամեծ ապականութիւնս ի ներքս գործէին: Եւ մատուցեալ էին այգէգործքն, ջանային և ոչ կարէին հանել զլնասակար խողան յայգուոյ անտի: Ապա զաղաղակ հարեալ գոչէին առ Բարսիլիոս, և ասէին. Եթէ ոչ դու, Բարսիլիոս, եկեսցես, ոչ ոք կարէ հանել զխողս յայգուոյ աստի, և ոչ մեծ ապականութիւնս գաղարեցէ. աճապարեա եկ հասիր⁸, զի տակաւին աւասիկ վնասս մեծամեծս առնեն: Ապա մատուցեալ Բարսիլիոս՝ հանէր զլնասակարս զխողան յայգուոյ անտի, և կազմէր զխախտածն:

Եւ զարթեալ սքանչելին Բարսեղ, և զարմացեալ ընդ այն տեսիլն, էր մտախորհ. և խորհէր ընդ միտս իւր վասն տեսլեանն՝ թէ զինչ իցէ. և անդէն հասեալք մատուցանէին նմա զթուղթն առաքեալքն ի Կեսարիայ քաղաքէ Եւսեբի եպիսկոպոսի: Այլ իբրև ընթերցալ, խնդայր և ուրախ լինէր. զի զիտաց թէ յԱստուծոյ պատրաստեցաւ կոչել զնա ջատագով ճշմարտութեանն առ ի տալ պատասխանի: Յարուցեալ փութանակի զնաց զհետ կոչելեացն թղթին, և չողաւ առ եպիսկոպոսն Եւսեբիոս: Եւ իբրև խորհեցան ընդ միմեանս զարժանն, ասաց Բարսիլիոս ցեպիսկոպոսն Եւսեբիոս, զի խնդրեսցէ ի կայսերէ իշխանութիւն՝ զոք յերիցանց տանել ընդ իւր: Եւ մտանէր Եւսեբիոս առ կայսրն, խնդրէր ի նմանէ և ասէր. Երկուս ամեր ինձ ախոյեանս, թող եկեսցէ մի ոք ընդ իս յերիցանց իմոց: Եւ հարցանէր կայսրն ցարխանոս եպիսկոպոսն, և յանձին կայան նոքա Եւսեբի զի քանի ամցէ ընկերս ընդ ինքեան, յորժամ գայցէ յատեանն:

Իսկ իբրև ժամ ատենին հասանէր, առեալ կայսերն զեպիսկոպոսն Եւսեբիոս, և ընդ նմա⁹ երանելին Բարսիլիոս երիցապետն, և երկու ախոյեանքն հակառակութեանն՝ որք ի կողմանէն կուսէ սատանայի էին, այս ինքն արխանոսք չեպիսկոպոսքն, և մտին ի բանից ի քննութիւն հակառակութեան վասն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ,

⁸ Հասիր: Imper. des Mediopass., statt հաս, von հասանեմ, Aor. հասի.

⁹ Zu ընդ նմա ist wegen der folgenden Nominative ein էին (եին) zu ergänzen.

եթէ իցէ ճնունդ և որդի ի բնութենէ Հօր Աստուծոյ, եթէ ոչ: Ապա Հոգևով սրբով լցեալ լինէր երանելին Բարսիլիոս, որ կայր զկնիազոյն եպիսկոպոսին Եւսեբի. և սա գրէր վկայութիւնս ի գրոց յԱրարածոց ի սկզբանէ յօրինաց և ի մարգարէից և յառաքելոց և յամենայն աստուածաշունչ գրոց. յայտ առնէր և ցուցանէր, և զերկոսեան ախոյեանսն սատանայի կարկեալս ըմբռնեալս ամօթապարտեալս հանդերձ թագաւորաւն կացուցանէր:

Ապա նայեցաւ թագաւորն Վաղէս ընդ եպիսկոպոսն, և ետես զի քրտնեալ էր, սկսանէր խօսել և ասէր. Այդ զի է, զի այդչափ հոսին ի քէն քրտունքդ. զի ի բանս ճշմարտութեան քննութեան վարձկանագրչաւդ յաղթեցեր: Ետ պատասխանի Բարսիլիոս թագաւորին և ասէր. Երկուս խոզս և մի էչ վարեալ այնչափ ընդ երկար ճանապարհ, և դու ասես. Զի ես քրտնեալ այդչափ: Ապա զղջացաւ թագաւորն՝ թէ ընդէր զԲարսիլիոսն հրամայեցին օժանդակ բնաւ Եւսեբի թողուլ ի ներքս: Ապա յտն կացեալ ամօթով արիանոսքն ասացին ցթագաւորն, թէ ընդէր այս աշխատութիւն քննութեանց են. այլ տիրաբար տուր հրաման, զի որք քո կամացդ ոչ լուիցեն, անկցին ի տագնապ նեղութեան: Եւ լուծեալ զատեանն վճարեցաւ:

Եւ ետ հրաման՝ զի զԵւսեբիոս արկանել ի բանդ, և ընդ նմա զբազումս, և նեղութիւն ի վերայ ուղղահաւատ որթողոքսաց քրիստոնէից հասուցանէր. և ետ հարկս ի վերայ եկեղեցեացն տուժիւք մեծաւ ծանրութեան տուգանօք: Յայնժամ ի դառն կապանացն պատուհասէն մեռանէր եպիսկոպոսն Եւսեբիոս ի ներքս ի բանդին: Իսկ վասն սրբոյն Բարսեղի ասէին ժողովուրդքն Կեսարու. Եթէ ոչ արձակէք զդա ի բանդէդ, այրեմք զքաղաքս զամենայն: Յորժամ ամենեքեան միաձայն զայս աղաղակէին, թողացոյց թագաւորն, և արձակել հրամայէր զերանելին Բարսիլիոս:

Գլ. Թ՛

Ապա ժողովեցան ամենայն եպիսկոպոսք իշխանութեանն Կեսարու, և ընտրեցին զսուրբն Բարսիլիոս առնել արքեպիսկոպոս Կեսարու: Եւ իբրև ժողովեալք էին ի միահամուռ հասարակ միաբան ամենայն եպիսկոպոսք ի ձեռնադրել զսուրբն Բարսեղ, էջ աղաւնին յերկնից և հանգեաւ ի վերայ նորա, որպէս յառաջնումն յառնելն զեպիսկոպոսապետն Ներսէս: Եւ եղև զարմանալիք մեծապէս յաչս ամենեցուն. սկսան գոհանալ զմարդասիրէն

—

10

15.2.84

—

20

—

30



Քրիստոսէ, զի որ յանձն իւր յայտնեաց զնշանս աստուածութեանն, զայն
և ոչ ի ծառայիցն և ի սրբոցն արգելոյր: Եւ եկաց Բարսեղ յաթոռ կաթո-
ղիկոսութեանն Կեսարու:

Այլ թագաւորն Վաղէս նեղէր զքրիստոնէից ժողովուրդն. Զի, ասէ, որ
քրիստոնեայ անունն¹⁰ յիշխանութեան իմում կայցէ, մի գտցի նորա արծաթ
և ոսկի, զի տայցէ յարքունիս: Եւ սկսան ժողովել ի զօրաց և ի զօրավարաց
և ի քաղաքաց երդամբ, զի որ զայն անունն ունիցին, մի գտցի
ոսկւոյ կամ արծաթոյ զանակ առ ումեք. ապա եթէ առ ումեք գտցի,
մեռցի: Ապա ամենայն ոք խնդութեամբ բերէին տային ի դուրս վասն
անուանն Քրիստոսի, կամեցեալք խնդութեամբ կրել զպատուհաս: Ապա
ստիպել սկսան և գործակալքն թագաւորին ժողովել արծաթ և ոսկի ի
ժողովրդոցն կեսարացոց քաղաքին. ապա քաջալերել սկսաւ զնոսս
երանելին Բարսիլիոս, զի խնդամիտ սրտիւ բերցեն: Սկսաւ ասել ցնոսս
այսպէս՝ թէ Բերէք ի ձեռն իմ, ես լինիմ այդմ երաշխաւոր. զի նոյն ինքն
տէր Քրիստոս միածին Որդին Աստուծոյ, վասն որոյ նա խրոխտացեալ
է ի մարտս, սատակեսցի ի նմանէն: Այլ զուք վասն տեառն ձերոյ յափշտա-
կութիւն ընչից ձերոց խնդութեամբ ընկալարուք. զի ձեզ յերկինս պահի
գանձն՝ որ ոչ անցանէ, այլ զի զայս գանձս ես տաց ձեզ դարձուցեալ ձեռն
ի ձեռն ի հուպ ժամանակի: Ապա ամենայն ժողովուրդք քաղաքին Կեսա-
րու եկին բերին ի մի վայր ժողովեցին որ մի անգամ ոսկի կամ արծաթ
ուրուք գտաւ. լցին զեկեղեցի, և ածին զիշխանսն թագաւորին զհաւատա-
րիմս. կնքեցին զդուրս եկեղեցոյն:

Յետ այսորիկ ետ հրաման թագաւորն Վաղէս կապել կրկին զեպիսկո-
պոսապետն Բարսեղ, արկանել ի բանտ ի նեղութիւն. սոյնպէս զամենայն
եպիսկոպոսունս ընդ ամենայն քաղաքս: Այլ ամենայն ժողովուրդն յուխտս
և ի խնդրուածս լինէին վասն բարկութեանն հասելոյ, զի դադարեսցէ,
և դարձ լիցի ճշմարիտ հովուացն յիւրաքանչիւր տեղի և յիւրաքանչիւր
ժողովուրդս:

ԳԼ. Ժ

30 Ապա խնդիր հրամայէր առնել թագաւորն Վաղէս, զի տեսցեն գտցեն
այր մի ճարտար, որ կարող իցէ դնել զրով բանս զիմադարձութեան
ընդդէմ հաւատոց քրիստոնէութեան: Եւ պատմեցին նմա, զի էր այր մի

¹⁰ Zu անուն vgl. § 479.

ստփէստէս ճարտար ի քաղաքի միջ: Ապա առաքեաց կայսրն առ նա մազխատրիանոսս, զի երթիցեն փութով և անդբաղապէս զայրն առ նա ածցեն, և առեալ ածին փութապէս:

Իբրև զնացեալ դայր օթևանս երկուս, զէպ եղև նոցա զիպել այլ քաղաքի միջ. և արտաքոյ քաղաքին վկայանոց մի սուրբ տիկնոջն Թեկղի: Իբրև պատահեաց այնմ, էջ ստփէստէս, և իւր վանս ունէր ի ներքս ի վկայանոցի անդ. իսկ մազխատրիանոսքն ունէին վանս իւրեանց ի քաղաքին: Եւ իբրև կերաւ հաց ստփեստէսն, էարկ¹¹ անկողին, և փակեաց զգուրս վկայանոցին. և ինքն ի նիստ եղեալ ի վերայ անկողինն, կամէր լինել ի կողմն. մինչ զեռ արթուն էր, աչօք բացօք տեսանէր, զի յանկարծ բացան զրունք 10 վկայանոցին, և եղև ժողով մեծ բազմութեան վկայիցն, որ երևեցան մեծապէս փառօք: Եւ ելանէր ընդ առաջ նոցա սուրբ տիկինն Թեկղէս¹² զարդարեալ մեծապայծառ, զի նշոյլք որպէս ի լուսոյ հատանէին ի նմանէն. և առնէին միմեանց ողջոյն, և ասէր ցնոսա տիկինն Թեկղ՝ թէ Բարի եկիք, սիրելիք բարեկամք, և վաստակաւորք Քրիստոսի: Տուեալք միմեանց ողջոյն, արկեալք զիւրաքանչիւր զաթոռսն, նստէին կարգաւ: Ապա սկսանէին սուրբքն խօսել, և ասէին. Սուրբքն տեառն, որ չև են հրաժարեալ յերկրէս, զեռ ևս աստէն ի նեղութեան են. են որք ի կապանս են, են որք ի փիւղակէս են, են որք յաքսորս, և են որք յայլ բռնութեան են, ի զրպարտութեան, ի հարկս և ի խոշտանգանս չարչարանաց: Եւ մեք փութապէս 20 ժողովեցաք, զի մի անտեսութեամբ անփոյթ արասցուք նախանձախնդիր լինել տեառն հաւատացելոց: Վասն զի մանաւանդ բազում մշակք տեառն խափանեալ կան, և բազում անդք ի դերև ելին, և բազում այգիք խոսպանացան. պարտ է մեզ զխափանիչս մշակացն զՎաղէս խափանել, զի ամենայն մշակ ի գործ իւր կանխեսցէ: Եւ քաջ մշակն Բարսիլիոս յիւրմէ գործոյն կայր¹³ խափանեալ: Արդ եկայք առաքեսցուք ի մէնջ երկուս, որք երթիցեն վճարիցեն ի կենաց զչարագործն Վաղէս: Ապա միում անուն էր Սարգիս ի նոցանէ, և միւսումն Թէոդորոս. արձակէին զնոսա, զնէին ժամ և ասէին. Ի սոյն ժամ եկեսձիք զուք և մեք: Եւ յարուցեալ զնացին և մեկնեցան:

¹¹ Zu էարկ vgl. § 250.

¹² Թեկղէս wohl gräzisiert für das gewöhnliche Թեկղ.

¹³ Neben կայր (zu կամ) gibt es die Variante կարի „sehr“.

Եւ զայս ամենայն լուեալ սփեւտէսն, որ էր ի վկայանոցին, և տեսեալ զայս տեսիլ աչօք բացօք, և կայր զարմացեալ, և անքուն լինէր մինչև¹⁴ յառաւօտն զցայգն: Եւ ընդ այդս այգոյն եկին հասին մագիստրիանոսքն, և ասեն ցտփեստէսն. Արի գնասցուք զճանապարհս: Եւ խօթապատճառս լինէր, և ոչ կարէր ի տեղւոյն խաղալ: Իբրև սկսան նոքա ստիպել զնա, իսկ նա թալանայր, հանէր զողին, ոգի զողուվ ամէր, և ոչ կարէր բանիցն տալ պատասխանի մինչև յերեկոյ: Ապա իբրև երեկոյ եղև, թողին զնա մագիստրիանոսքն ի վկայանոցին, և գնացին ի քաղաքն ի վանս իւրեանց: Եւ սփեստէսն փակէր զղուրս վկայանոցին, և ի կողմն եղեալ յիւրում տեղուջն, յանկարծակի դարձեալ երևեցաւ նմա, զի բացան դրունք վկայանոցին, եկին կուտեցան, և լի եղև վկայանոցն նոքիւք¹⁵ վկայիւք: Եւ ելանէին միմեանց ընդ առաջ մեծաւ ուրախութեամբ, և տային միմեանց ողջոյն. ապա արկանէին զաթոռս իւրաքանչիւր կարգաւ յորինեալ բոլորէին կարգէին ի նստել: Ապա գային սուրբքն Սարգիս և Թէոդորոս երկոքեան ի գործոյն յոր առաքեալ էին, և մտանէին ի ժողովս սրբոցն: Ապա հայեցան բազմութիւն ժողովոյ վկայիցն, եթէ Ո՞րպէս յոր գործ երթեալ էիք՝ վճարեցէք: Պատասխանի տուեալ ասէին, թէ էր իսկ յորժամ ի ձէնջ գնացաք, սպանաք զթշնամին ճշմարտութեանն զվաղէս. և ի սոյն ժամ առ ձեզ դարձեալ եկեալ եմք աւասիկ առ ձեզ: Եւ յարուցեալ գոհանային ամենայն բազմութիւն ժողովոյն զտեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. և ինքեանք մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս: Եւ յահի մեծի լինէր սփեստէսն մինչև¹⁶ յայգ յառաւօտն:

30 Ապա իբրև այդ եղև, եկին մագիստրիանոսքն, ասեն ցտփեստն. Արի՛ զնասցուք առ կայսրն: Նորա պատասխանի տուեալ, ասէ. Կայսրն մեռաւ, արդ մեք առ ք երթիցուք: Եւ բազում վիճումն ի մէջ եղեալ նոցա վասն այսր բանիս, և զբաւական եղեալ ի մէջ վասն այսր բանիս մինչև յերիս աւուրս: Եթէ ոչ¹⁷, ասէ, հարցին աւար վաճառք, և քաղաքք յափշտակեցին, ես՝ եթէ կայցէ նոյն կայսրն՝ գլխատեցայց, զի իշխեցի զայս ճառել: Ապա թոյլ տային նմա մագիստրիանոսքն մինչև յերիս աւուրս. և յետ երից աւուրցն ստուգեցաւ գրոյցն, զի մեռեալ էր կայսրն:

¹⁴ ի nach մինչեւ ist seltener als g, s. § 320.

¹⁵ Statt նոքիւք ist richtiger նոքաւք zu lesen.

¹⁶ Vgl. die Bemerkung zu Note 14.

¹⁷ եթէ ոչ: wohl verkürzt für „wenn (er) nicht (mehr lebt)“.

Ապա յետ այսորիկ արձակեցան ամենայն որ միանգամ ոք կայր ի պատիժս կամ յաքսորս . և դարձան ուրուք ուրուք որ միանգամ ինչք էին յափշտակեալք : Սոյնպէս և զկեսարացւոցն հրաման ետուն տալ զիւրաքանչիւր իրաց . և կոչեցեալ սրբոյն Բարսղի, զի զիւրաքանչիւր առցեն , և ոչ կամէին հուպ լինել : Ձի թէպէտ և ասէր ցնոսա Բարսեղ՝ եթէ ահաւասիկ երաշխաւոր իմ թափեցաւ ձեզ, զի ասացի՝ թէ և տաց ձեզ ձեռն ի ձեռն ի ձեռս ձեր : Եւ ոչ ինչ կամէին ունկնդիր լինել, այլ ասէին . Այդ ի գանձ տեառն երթիցէ, որ դատեցաւ զդատաստանս մեր, և խնդրեաց վրէժ սուրբ եկեղեցւոյ ուխտի իւրոյ : Եւ ոչ ոք ի կեսարացւոց անտի հպեցաւ յարծաթ իւր, և ոչ մի ոք . բայց թողին զայն ի գանձ եկեղեցւոյն : Ապա էառ զայն արքեպիսկոպոսն, արար աւազանս մկրտութեան կնքոյ տալոյ . և կան հաստատեալ աւազանքն արծաթիք ի տուն լուսարանին մինչև ցայսօր ժամանակի :

ԳԼ. ԺԱ.

Այսօրիկ են իշխանքն, որք չոգան ի թագաւորէն մեծէ Արշակայ ի Հայոց աշխարհէն առ կայսրն Յունաց առ Վաղէս : Ինքնին մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս . և մեծ նահապետն մամիկոնեան տոհմին, որում անուն Վարդան կոչիւր . եղբայր սա մեծի ստրատելատին Հայոց որում Վասակն կոչէր, որ դայեակք և սնուցիչք էին թագաւորին Արշակայ : Եւ ընդ նմա Մեհեն նահապետն Ռշտունեաց, և Մեհառ նահապետն Անձևացեաց, և Գարջոյլ Մաղխազ նահապետն Խոռխոռունեաց, և Մուշկ նահապետն Սահառունեաց, և Դեմետ նահապետն Գնթունեաց, և Կիւղէն նահապետն Բազէնից, և Սուրիկ նահապետն Հրսիճորոյ, եւ Վրկէն նահապետն Հաբուժենից . սոքա չոգան դեսպանութեամբ ի սէր միաբանութեան առ կայսրն Վաղէս : Իսկ թագաւորն Վաղէս արգել աքսորեաց զմեծ քահանայապետն Ներսէս, և փոխանակ սորա արձակեաց զեղբօրորդի զթագաւորին Արշակայ զԳնել և զՏիրիթ . և գանձս բազումս և անթիւս վասն զմիտս հաճել թագաւորին Արշակայ, ի ձեռս Վարդանայ և որք ընդ նմա էին, առաքէր : Եկին հասին դեսպանքն երթեալք ի կայսերէն առ թագաւորն Հայոց մեծաց Արշակ, և մատուցանէին նմա զհրովարտակն կայսերն . և ընդ նմին գիր տրտնջելոյ և ամբաստանութեան : Ձի գրեալ էր կայսրն զսրբոյն Ներսիսէ առ թագաւորն Հայոց Արշակ, թէ նա սպան զորդին իւր զմիամօր, վասն այսորիկ արգելաւ աստէն . զի մի մեղադիր ինչ լինիցիս, ընկալ և զպատանեակսդ

5 Jensen, Altarmenische Chrestomathie



առաջի զարձակեալսդ զերկոսեան զեղբորորդիսդ Արշակայ, զԳնեւն և
 զՏիրիթն: Ունէին և զանթիւ կարասի զանձուցն առաջի թագաւորին:
 Իսկ թագաւորն Արշակ իբրև լուաւ և ետես զայս ամենայն, անշնորհ
 առնէր զտալիսն և զբերելիսն կարասոյն: Ի ցասունն մեծապէս բարկու-
 թեամբ ընդ կայսերն նիւթեաց, եթէ զիմորդ իշխեաց արգելուլ զայնպիսի
 այր զմեծ և զպատուական, զգլուխ և զվարդապետ զառաջնորդ աշխարհի
 և զթագաւորութեան միող: Քարինք բազումք, ասէ, ի վերայ կայսերն,
 և ձեր ի բերելդ. քարինք և մեր շատ կան ի թափել զատամունս նորա ի
 տալն, և ձեր ի բերելդ. զմեր վատթարութիւնս յի տարայց. արդ այդմ
 երախտեացդ ես դարձուցանեմ: Տայր հրաման Վասակայ իւրում զօրա-
 վարին զօր ժողովել, զգունդս (վանդակել, ելանել հարկանել և աւար
 առնուլ զկողմանս Գամրաց: Իսկ զօրավարն սպարապետն Վասակ, վազ-
 վազակի զտուեալ հրամանս նորա կատարէր. զգօրս բազումս իբրև զեր-
 կերոյր և զվաթսուն հազարաց ի մի վայր կուտէր. հարկանէր աւար
 առնոյր զկողմանս Գամրաց մինչև ի քաղաքն յանկուրացուց. զվեց ամ
 զմիմեանց զհետ աւերէր զաշխարհ սահմանացն Յունաց: Լցան աւարաւ
 բազմաւ և պէսպէս մեծութեամբ, բռնութեամբ սաստիւ մեծաւ թշնա-
 մութեամբ ընդ կողմանս ընդ այնոսիկ:

ԳԼ. ԺԲ

Այլս այս ի՞նչ բուն էր սա ի Կարին գաւառէ, ի զեղջէ Մարագայ. ձեռնա-
 սուն էր սա եպիսկոպոսապետին Ներսէսի, զառաջեալ իւրով զսա էր սնու-
 ցեալ: Այլ իբրև ի միտս աջողակս եբեր, և յառաջադէմ եղև ի հաւատս, և
 հաւատարիմ յամենայն գործս գտաւ, իսկ իբրև յայնմ ևս առաւել ի պաշ-
 տօնն՝ զոր ունէր¹⁸ զսէրն ընդ եկեղեցին Աստուծոյ, ապա աղքատաց ևս
 տեսչութիւն ի սրբոյն Ներսէսէ սմա հաւատացաւ. իսկ յայնմ ևս առաւել
 զբարեխնամութիւն ցուցանէր:

Ապա եպիսկոպոսապետն Ներսէս յորժամ երթայր յուղեղնացութիւնն
 յերկիրն Յունաց, ձեռնադրեաց զայս ի՞նչ յեպիսկոպոսութիւն Բագրա-
 ւանդայ և Արշարունեաց, եթող զսա իւր փոխանակ ետեղապահ, և զնաց:

¹⁸ Nach ունէր, das zum Relativsatz gehört, muß noch ein zweites ունէր er-
 gänzt werden, das das Prädikat zum Satz *իբրև . . .* bildet.

Իսկ աշխարհ ամենայն Հայոց լեզուին, ի գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, տեղեաց տեղեաց մեծամեծք աշխարհակալք գաւառատեարք նահապետք մեծազգեաց և ամենայն ուխտ քահանայութեան, ժողովք միարանական ժողովրդոցն, ի սուգ տխրութեան ընկղմեալ էին վասն իւրեանց հօտապետ գլխաւորին, զի հեռացաւ ի նոցանէ: Իսկ սուրբն ի՞նչ եպիսկոպոսն առ հասարակ աշխարհի տայր հրամանն ի պահս և յաղթս մտանել և ի խնդրուածս, զի դարձ լիցի սրբոյն Ներսէսի: Եւ զամենայն ժամանակս, որչափ և արդելաւ նա անդ, համակ խնդրէին պահօք ժողովուրդքն. և ամենայնի իսկ ի՞նչն առաջնորդէր նոցա, ոչ ինչ պակաս քան զիւրեանց բուն զհովուսապետն Ներսէս, մինչև ի գալուստն նորա. մինչև կատարեաց տէր զաշխարհի խնդրուածս, և դարձաւ սուրբն Ներսէս ի տեղի իւր:

Ձայնու ժամանակաւ Արշակ արքայ Հայոց ոչ ինչ կարի ի ճանապարհ Աստուծոյ գնացեալ լինէր. զի որչափ ի մատաղութեանն հասակին ըստ աստուածային իմաստութեանն գնացեալ լինէր, նոյնչափ յաւագութեանն ի լիտութեան ի շաղաշտութեան հատաւ. զոր սուրբ հովինն ի՞նչ բազում անգամ յանդիմանեալ կշտամբէր, որում ոչ ինչ անսացեալ լինէր: Ձայնու ժամանակաւ շինեաց իւր արքայն դաստակերտ մի ի հովիտն անուանեալ ի Կող գաւառի: Եւ ետ հրաման ընդ ամենայն գաւառս իշխանութեան իւրոյ, և հրամայեաց կարգել քարոզ ընդ ամենայն հրապարակսն աշխարհի իւրոյ. և ամենայն կողմանս գաւառաց իւրոց լի առնէր հրամանաւն արքունի, զի եթէ ոք ումեք ինչ պարտիցի, եթէ ոք ուրուք ուստեք ինչ վնասեալ իցէ, կամ ոք ումեք ինչ դատ պարտիցի, ամենեքեան եկեսցեն ի դաստակերտն շինեսցին: Եթէ արիւնհահան ոք իցէ, կամ վնաս ուրուք արարեալ իցէ, կամ զկին ուրուք տարեալ իցէ, կամ պարտապան իցէ, կամ ոք զուրուք կարասի ունիցի, կամ ոք յումեքէ երկիւղած ինչ իցէ, և եկեսցէ յայն տեղի, դատ և իրաւունք մի լիցին: Իսկ եթէ ոք ումեք ինչ պարտիցի, և որում պարտիցին՝ եկեալ յայն տեղին, առանց դատի և իրաւանց կալցին և ի դուրս տարցեն:

Իբրև եւ հրաման յարքայէն, ժողովեցան այնուհետև յայն տեղի ամենայն գողք և աւազակք, արիւնհահանք, սպանողք, սուտք և մարդելոյգք վնասակարք, դանձահատք, զրկողք, ստաղատք, զրախօսք, գերփողք, յափշտակողք, ժլատք: Բազում վնասս վնասս առնէին, և անդր անկանէին. բազում կանայք զարս թողուին, և անդր անկանէին. բազում արք զիւրեանց կանայս թողուին, և զայլոյ կանայս առեալ՝ անդր անկանէին. բազում

5*

10
21. 11. 25
16
30
1962/85



ծառայք զիւրեանց տերանց զգանձս ըմբոնեալ, փախուցեալք անդր անկանէին. բազում աւանդառուք զաւանդս լի զպահեստս բարձեալ, անդ անկանէին. գերիէին աւերէին զերկիրն ամենայն: Չի թէպէտ և կարի յոյժ բազմացաւ աղաղակն, դատ չկայր, և իրաւունք ումեք յարքունուստ ոչ ելանէին: Վասն այսորիկ ամենայն մարդ հառաչելով վայէին, և ասէին ի հաւանել բանիցն իւրեանց. այս բանք ըստ այսմ օրինակի պաշտէին, առ հասարակ ամենեցուն ասելով՝ — թէ իրաւունք մեռան, և վասն այսորիկ ոչ գտանէին. այլ թէ էր, և կորուսեալ էին, ուր և էր ջանայաք խնդրէաք գտանէաք:

10 Իսկ տեղին աւանանայր, քաղաքանայր. մեծացաւ բազմացաւ և ելից զհովիտն ամենայն: Ապա տայր հրաման արքայն Արշակ զնել անուն զաստակերտին յիւրակից անունն Արշակաւան. և շինեցին ևս անդ ապարանս արքունի: Եւ յայնմ հետէ ոչ ինչ երկնչէին ի տեսնէ ամենեին. և ամենայն մարդ զրկեալ էր իրօքն այնօքիւք, և բազմաց կառաչ աղաղակի տրտնջելոյն յաճախեալ բազմանայր: Վասն որոյ բազում անգամ ընդդիմանայր նմա և յանդիմանէր սուրբն Խաղ եպիսկոպոսն. մանաւանդ յորժամ ստիպէին զնա, թէ եկ ուղղեա սեղան յեկեղեցոջն յաւանն յԱրշակաւանն: Իսկ նա բազում անգամ կշտամբէր և յանդիմանէր զթագաւորն Արշակ և զամենայն մեծամեծս և զիշխանս: Բայց ես, ասէ, ետեղապահ եմ. և ոչ ինչ առանց այնորիկ, որ թողն զիս հայրն, ունիմ իշխանութիւն գործել ինչ: Ապա կամեցեալ Արշակ թագաւորն պատուաւ և ազահուլթեամբ կարաստոյն մեքենայիւ խաբել զսուրբ եպիսկոպոսն Խաղ, բազում ոսկի և բազում գանձս արծաթոյ, և բազում նժոյգս զարքունական ձիոյ՝ արքունի օճառովք¹⁹, ոսկիվարաւանդ ապրդմովք, տայր նմա. պատրել հաճել զմիտս նորա, յինքն յանգուցանել: Իսկ նա զկարասին, զոր առնոյր յարքայէն, յանդիման նորա աղքատաց բաշխէր. և զյանդիմանութիւնն ոչ ինչ թուլացուցանէր, մինչև հրամանն տայր հալածել զեպիսկոպոսն Խաղ ի բանակէ անտի:

30 Իսկ նա առ շրջել ընդ աշխարհն, կարգել և խրատել, ուսուցանել և դարմանել զաղքատսն, որպէս էր նմա յանձն արարեալ սրբոյն Ներսիսի, և իւր զնացեալ: Բազում նշանք և արուեստք և զօրութիւնք բժշկութիւնք

¹⁹ արքունի օճառովք: statt -ովք muß es -աւք heißen. Die Lauersche Übersetzung „auf königliche Kosten“ ist also zu berichtigen in „mit königlicher Ausstattung (oder: Schmuck)“.

հիւանդաց լինէին ի ձեռս նորա. բազում յոյժ առնէր սքանչելիս մեծամեծս: Բայց իբրև պաշտէր զաղքատսն, և սպառէր թափէր զամենայն յուրանս և զնորամանս և զմառանս գինւոյն, և զկարասս ամենայն մառանացն տայր բաշխել աղքատացն, երթայր յայլում աւուր տեսանէր լցեալ ինքնին իբրև ի հրամանէ Աստուծոյ. և զարձեալ օր ըստ օրէ մատակարարէր աղքատացն, և այնմ ստէպ ստէպ լցեալ լինէր:

Այսպիսի սքանչելիք մեծամեծք լինէին ի ձեռն առնս այսորիկ. էր սա զարմանալի անուանի և հոյակապ ի մէջ ամենայն Հայոց. շրջէր խրատէր և ուսուցանէր զեկեղեցիս Հայոց ընդ ամենայն տեղիս իբրև զիւր վարդապետն զՆերսէս: Բայց ի ժամանակեան միոջ եկին գողք, և գողացան զեզինս եկեղեցւոյն սրբոյ զԽաղայ եպիսկոպոսին, առին և գնացին: Իսկ ի միում աւուր աչք կուրացեալ եղեն գողոցն, և ինքեանք յանիմաստս առ խարխափս եկին անիւն ի դուրս սրբոյն Խաղայ զամենայն եզինսն: Իսկ ինքն սուրբն Խաղ ելեալ տեսանէր զնոսա, և գոհանայր զտեառնէ՝ որ այնչափ վերակացու և այցելու եղև հաւատացելոց իւրոց: Կայր յաղօթս եպիսկոպոսն Խաղ, և բժշկէր զաչս գողոցն. և հրաման տայր լուանալ զանձն նոցա, և զնէր ճաշ առաջի նոցա, և քաջ ուրախ առնէր զնոսա մեծապէս: Ապա օրհնէր զնոսա, և տայր նոցա զեզինսն՝ զոր իւրեանցն էր գողացեալ, և արձակէր զնոսա զիւրեանց ճանապարհն, և գնացին: Այսպէս բազում համբերութիւնս յամենայն գործս իւր ցուցանէր, և բազում առնէր նշանս և զսքանչելիս: Եւ էին նորա երկու դստերք. և ետ զմինն Ասրկոյ ումեմն կին. զկնի աներոյն իւր՝ նա կալաւ զաթոռն Խաղայ:

ԳԼ. ԺԳ

Այլ իբրև սատակեցաւ կայսրն, զարձան ամենայն հովիւքն եպիսկոպոսքն՝ որք աքսորեալք էին, և կեցեալք էին յիւրաքանչիւր քաղաքս: Յայնժամ զարձաւ և սուրբ կաթողիկոսն Ներսէս յանապատ ի կղզւոյ անտի, ուր էր զնոսա արգելեալ. և համաշխարհի էին խնդրուածք. միւսանգամ աշխարհի շնորհեցաւ: Իբրև եկն յաշխարհն Հայոց, ընդ առաջ երթային նմա ի գաւառաց գաւառաց եպիսկոպոսք հանդերձ իւրաքանչիւր ժողովրդովք, և նախարարք ամենայն և ամենայն գաւառակալք: Եւ բերէին առաջի նորա զիւրաքանչիւր հիւանդս, և բժշկէր զնոսա. ուր և բազում իսկ և կարի յաճախէր գոհութիւն ի փառս Աստուծոյ. և ամենայն մարդիկն առ բազում գութ հովուապետին՝ համարէին զանձինս իւրեանց թէ ինքեանք իբրև զնոսա ի գերութենէ զարձեալ իցեն:

Buch V

ԳԼ. ԼԷ

(374-298)

Ապա կացոյց թագաւորն Վարազդատ ի դործ զօրավարութեան սպարապետութեանն զԲատ նահապետն Սահառունեաց տոհմին, որ էր իւր դայեակ, բանսարկու քսուն սպանօղն Մուշեղի: Եւ էր նա սպարապետ փոխանակ նորա, զօրավար ամենայն Հայոց: Եւ ազգին մամիկոնեան տոհմին տանուտէր նահապետ կացոյց թագաւորն՝ Վաչէ անուն ի նմին տոհմէ:

Յայնմ ժամանակի դարձան ի գերութենէն եկին ի Պարսից, զոր տարեալ էր Շապհոյ արքային, որք երկու եղբարք ի մամիկոնեան տոհմէն. անուն միունն Մանուէլ, և անուն երկրորդին Կոմս: Քանզի զայն ժամանակաւ թագաւորին Պարսից սասանականին տուեալ էր պատերազմ ընդ մեծ թագաւորին Քուշանայ ընդ արշակունոյն, որ նստէր ի Բաղճ քաղաքին: Եւ իբրև երթային զօրքն Պարսից ի Քուշանացն պատերազմն, ապա և զմարդիկ գերութեանն որ ի Հայոցն էին թագաւորին Պարսից՝ յղէր ի պատերազմ ընդ իւր զօրսն. և Մանուէլս այս երթայր ընդ նոսա հանդերձ եղբարքն իւրով Կոմսիւ: Եւ իբրև եղեն խառնուրդք երկոցունց զնդացն ընդ միմեանս, ապա ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից յերեսաց զօրացն Քուշանաց. դարձան ի փախուստ անհնարին հարուածովք, հասին ի վերայ զօրացն Պարսից. զի ոչ մի ի նոցանէն ոչ ապրեցուցանէին ի զօրացն Պարսից. բանբեր անգամ ոչ ապրէր. բայց Մանուէլ որդի Արտաշինայ ի մամիկոնեան ի տոհմէն, հանդերձ եղբարքն իւրով Կոմսիւ, բազում քաջութիւնս կատարեալ ի նմին ճակատուն, սակայն հետիոտս ապրէին: Եւ գային յամենայն զօրացն Պարսիցն սոքա միայն հասանէին առ թագաւորն Պարսից ողջ ապրեալք, և բազում քաջութիւնս կատարեալ:

Սակայն թագաւորին Պարսից բազում տրտմութիւն լինէր յաղաքս իւրոյ զօրացն կատարածոյն. սակայն և զայնու զայրացեալ զակատէր, զի զնոսա միայն տեսանէր ողջ եկեալ յամենայն զօրացն իւրոց: Յասուցեալ ընդ նոսա, այլն արարեալ, հալածեաց յիւրոց սահմանացն. արձակեաց զնոսա յերկիրն իւրեանց: Եւ զնացեալք գային դէմ յանդիման յիւրեանց երկիրն: Եւ էին հետիոտք երկրքին եղբարքն. և էին երկրքեան մեծք անհեղեղք,

երկրքեան անձնեայք որպէս սկայադունք : Մինչ զեռ գային ի ճանապարհի, ոչ կարէր Մանուէլն գնալ, զի ոտիւքն ցաւած էր. ապա Կոմս եղբայր իւր ըստանձնեալ առեալ բառնայր, և տասն տասն խրատախ բերէր ըստ անձին գայնչափ այրն գանհեղեղ գանարի. եկն եբեր յերկիրս Հայոց : Եւ եղև իբրև եկն եհաս յերկիրն Հայոց Մանուէլ եղբարբն իւրով Կոմսիւ հանդերձ, իբրև ետես զնա Վաչէն՝ որ յառաջն էր լեալ նահապետն, մինչ չև եկեալ էր ի նա՝ ետ ցնա զպատիւ իշխանութեանն, զոր առեալ էր ի թագաւորէն Վարազդատայ, քանզի նա էր երէց յազգին. և Մանուէլն ունէր զնահապետութեան ազգին տանուտէրութեան պատուին, և Վաչէն լինէր երկրորդ :

Իսկ յորժամ եհաս եկաց Մանուէլն ի փառս տէրութեան իւրոյ, նախ առանց հրամանի թագաւորին Վարազդատայ յինքն յափշտակեաց զզօրավարութեանն զսպարապետութիւնն. զի այն ինչ որ իւրոց նախնեացն ի բնէն կալեալ էր ի սկզբանէ, զոր արքայն Վարազդատ շնորհ առնէր իւրում դայեկին Բատայ, զայն Մանուէլ յինքն հանեալ ունէր զիշխանութիւնն : Եղև յետ այսորիկ, պատգամ յղէր սպարապետն Հայոց Մանուէլ առ թագաւորն Վարազդատ, և ասէր՝ թէ Փոխանակ ամենայն ազգին մերոյ վաստակոցն, զոր ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ միամտութեամբ առ ձեզ Արշակունիս վաստակեալ եմք, և եղեալ գանձինս մեր ի վերայ ձեր, կեցեալ և մեռեալ եմք ի վերայ ձեր, ամենայն նախնիքն մեր առաջինքն անկան ի պատերազմունս ի վերայ ձեր, Վասակ հայր Մուշեղի կորեալ ի վերայ Արշակայ արքայի, և մեք հանապազ վաստակեալ և աշխատեալ եմք ի վերայ թագաւորութեան ազգիդ ձերոյ, և փոխանակ կեանս առներոյ ընդ վաստակոցն, արդ որք ի թշնամեացն մեռան, որք մնացին՝ զայն դուք Արշակունիքդ կոտորեցիք : Արդ Մուշեղ այր քաջ եղբայր իմ, որ ի վերայ ձեր մաշեաց գանձն իւր ի մանկութենէ իւրմէ, վանեաց կոտորեաց զթշնամիս ձեր, և ոչ կարացին թշնամիքն սպանանել, դու կալար ի բազմականի խեղդեցեր գնա : Նա դու չես իսկ արշակունի, այլ ի պոռնկութենէ եղեալ ես որդի. վասն այդորիկ ոչ ծանեար զվաստակաւորսն Արշակունեաց : Նա մեք չեմք իսկ լեալ ձեր ծառայք, այլ ընկերք ձեր և ի վերայ քան զձեզ. զի մեր նախնիքն լեալ էին թագաւորք աշխարհին ճենաց, և վասն եղբարց իւրեանց գրգռութեանն, — զի արիւն մեծ անկեալ է ի վերայ, — վասն այնր եմք գնացեալք. և վասն բարւոյ հանգստի դատներոյ՝ եկեալ դադարեալ եմք : Առաջին թագաւորքն արշակունիք, որք

գիտէինն զմեզ ո՛վ էաք կամ ուստի էաք. այլ զի դու քանզի չես արշակունի, գնա յաշխարհէս, և մի մեռանիր ի ձեռաց իմոց :

Իսկ Վարազդատ թագաւորն պատգամ յղէր պատասխանւոյն առ զօրավարն Մանուէլ, և ասէր. Եւ քանզի չեմ արշակունի, զի եդի զթագ նախնեաց իմոց Արշակունեացն, և կալայ զաշխարհ առաջնոց իմոց, և խընդրեցի զվրէժ հօրեղբօրն իմոյ Պապայ ի չարագործ յեղբօրէն քու՛մէ ի Մուշեղայ, բայց զի դու չես յաշխարհէս յայսմանէ, զի քեզն իսկ ասացեր՝ բաս²⁰ յերկրէն յաշխարհէն ձեռաց եմք, լեալք թագաւորք ի բնութենէ, և այսր պանդուխտք եմք եկեալք, արդ ըստ օրինակի եղբօրն քո մի մեռանիր: Զի իմ, առ բարերարութեան իմոյ, արձակեալ լիցի զքեզ. երթ գնա յերկիրն ձեռաց, անդ կեաց, և անդէն թագտւորես՛ջիր յերկրին քում: Ապա թէ ոչ կամիցիս գնալ, մեռանիս ի ձեռաց իմոց որպէս և Մուշեղն մեռաւ:

Իսկ յորժամ բազում անգամ երթեալք եկեալք պատգամաւորք՝ բազում խստագոյն քան զխստագոյն բանս կսկծանաց առ միմեանս յղէին, և յետ այսորիկ ժամադիր միմեանց լինէին՝ պատերազմաւ զմիմեանս տեսանել: Իսկ ի հասեալ ի ժամադիր ժամուն, եկեալ տային ընդ միմեանս պատերազմ: Եւ թագաւորն Վարազդատ առնոյր զզօրն իւրոյ բանակին, և գնայր հասանէր ի տեղի ճակատուն, վառեալ կազմեալ պատրաստեալ ի պատերազմ. սոյնպէս և սա պատրաստագոյն քան զնոսա: Եւ Մանուէլ սպարապետն հասանէր իւրով գնդաւն ի նոյն տեղի. և ի դաշտին Կարնոյ լինէին խռնուրդք երկոցունց գնդացն ընդ միմեանս բախելոցն:

Թագաւորն Վարազդատ և սպարապետն Մանուէլ զնիզակս առեալ, միմեանց յարձակեալ ախոյեանք ելանէին: Սակայն զի մանուկ մարդ էր արքայն Վարազդատ, իբրև ետես գնա այնպէս՝ զի չէր ինչ կռուոյ տեղեակ, էած զմտաւ թէ ի զրահսն ոչ ինչ կարիցէ նիզակ գործել, առ ձեռաց կորովութիւնն զնիզակն ընդ բերան արկանէր զօրավարին Մանուէլի: Իսկ Մանուէլ բուռն հարկանէր զնիզակէն. հանեալ ի նմանէ զնիզակատէգն՝ ընդ իւր թուրծն հանէր, և բազում զիւր թափէր զատամուռնսն, զնիզակն յինքն հանէր յարքայէն:

Եւ արքայն Վարազդատ ի փախուստ դառնայր յերեսաց զօրավարին Մանուէլի. և անդէն Մանուէլ զտէգ նիզակին ի ձեռինն կալեալ, և նիզա-

²⁰ Zu բաս vgl. § 499.

կաւն ի կառափն մատուցեալ ծեծէր զարքայն Վարազդատ . այնպէս տանէր իրրև ասպարէզս չորս : Եւ անդէն որդիքն Մանուէլի յարձակեցան մէն մի նիզակ ի ձեռն , Հմայեակն և Արտաշէսն , սպանանել զարքայն : Ինքն իսկ Մանուէլ աղաղակէր զկնի որդւոցն իւրոց , և ասէր . Ա՛յ մի լինիք տիրապանուք : Եւ նոցա լուեալ զձայն հօրն , վարվաղակի արագ արագ դառնային ի նմանէ . և ի պարտութիւն մատնեցաւ այն օր գունդն արքունական առաջի մանուէլեան զնդին :

Ոչ ինչ այնուհետև սակաւ սպանեալք անկանէին ընդ երեսս դաշտին , բազում խոցք և խեղք վիրաւորք . և բազում նախարարք սատակեցան . բազում փախստեայք հալածականք լինէին : Մինչ դեռ գունդն Մանուէլեան էին զկնի փախստէիցն , և դայր հասանէր Համազասպեան սեպուհ մի մամիկոնեան տոհմէն , անցանէր առ անկելովք զիակամքն և առ խոց վիրաւորքն պատերազմին . և ընդ նոսին ընկեցեալ էր և Գարեգին , տէր գաւառին Ռըշտունեաց . բայց ողջ կայր , զի ոչ խոց էր և ոչ վնասեալ ինչ : Այս Գարեգին փեսայ լեալ էր յառաջ նորին Համազասպէի , զքոյր նորին Համազասպուհի անուն ունէր կին : Եւ իրրև եկն թագաւորն Շապուհ յերկիրն Հայոց , սա եթող զկինն իւր և փախեաւ : Ապա տարան զՀամազասպուհի յերկիրն Տոսպաց , ի քաղաքն ի Վան . հանեալ կախեցին զնա Պարսիկքն զբարձր աշտարակացն՝ որ կայր ի վերայ քարանձաւին , ի կախադանի սպանին զնա :

Իսկ յայնմ աւուր իրրև անկեալ կայր այն Գարեգին ի մէջ անկելոցն , եկն Համազասպ աներ նորին անցանել առ նոքօք : Աղաղակեաց Գարեգինն և ասէ . Տէր Համազասպեան , և զիս տես . հրաման տուր նժողգ մատուցանել , թող հեծայց : Եւ ասէ ցնա Համազասպեան . Ո՞վ ես դու : Եւ ասէ . Ես եմ Գարեգին Ռըշտունի : Եւ ետ հրաման Համազասպեան վահանաւորացն , որ ընդ նմա էին , ասէ . Իջէք և դիք զվահանսդ ի վերայ նորա , և պահեցէք : Եւ ինքն էանց . ապա իջին վահանաւորքն եղեալք զվահանսն ի վերայ , և կային պահէին ըստ հրամանի տուելոյն :

Ապա յետ այսորիկ դայր Դանուն ոմն գամապետ սպարակրացն զնդին մանուէլեան զօրացն . ետես զի իջեալ էին վահանաւորք ի վերայ , և զԳարեգինն պահէին . եհարց ցնոսա՝ թէ Ո՞վ է այդ , և դուք հիմ իջեալ կայք յայդմ տեղուջ : Ասեն նոքա՝ թէ սա Գարեգին Ռըշտունեաց տէր է . և մեզ հրաման ետ Համազասպեան՝ իջանել պահել զսա : Եւ մեծաւ ցամամբ գայրանալով՝ ի բարկութիւն մեծ բորբոքէր Դանունն , և ասէր . Արդ ուրեմն

վերտաին կամի Համազասպեան զսա իւր փեսայ տոնել, և զՀամազասպուհի զքոյր իւր տալ սմա կնութեան. վասն այսորիկ անխայեաց ի դա, պահել հրամայէր: Եւ անդէն ոտն ածեալ էջ ի ձիոյն, եհան զթուրն, մատուցեալ ի նա՝ պատառ պատառ կոտորեալ, անդէն ցրեալ սատակեաց զնա:

Իսկ այլ զօրքն ամենայն դեռ դային ի կոտորածոյն, զբազումս ձերբակալ արարեալ և կալեալ ածէին: Եւ զԲատն, արքային Վարազդատայ զքսուն, զսպանօղն Մուշեղի, կալեալ իւր որդւոյն առաջի սպարապետին Մանուէլի, և զայլս՝ որք միանգամայն զործոց սատարն լեալ էին՝ ըմբռնէին զամենեսեան, առ նա ածէին: Եւ մեծաւ դատաստանօք դատեցաւ զանօրէնն Բատ սպարապետն Մանուէլ: Բայց նախ յանդիման նմա հրամայէր փողոտել զորդին նորա, ապա յետոյ զնա գլխատել. և զայսն կոտորեաց ըստ նմին օրինակի: Եւ զթագաւորն Վարազդատ հալածեցին ի յերկրէն ի սահմանացն Հայոց. չոգաւ գնաց ի յերկիրն Յունաց. անդ եկաց որչափ և եկեաց, և անդէն մեռաւ:

Եւ սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ նուաճեաց զաշխարհս, և զամենայն մեծամեծս և զնախարարն Հայոց առ ինքն ժողովէր, և էր նա առաջնորդ և գլուխ նոցա. և վարէր զիւր իշխանութիւնն, և տայր հրաման աշխարհի փոխանակ թագաւորի. և ունէր զաշխարհ ի շինութեան: Եւ զկինն Պապայ արքայի զՉարմանդուխտ տիկին, հանդերձ որդւովք արշակունովք, առեալ զնոսս՝ ի տեղի թագաւորի կալեալ ի պատիւ շրջեցուցանէր: Մեծաւ իմաստութեամբ և բազում յաջողութեամբ աշխարհին Հայոց մեծապէս առաջնորդէր, որչափ եկաց ժամանակս: Բայց անուանք պատանեկացն արշակունեացն, անուն երիցուն՝ Արշակ, և կրտսերուն՝ Վաղարշակ, զնոսս առեալ Մանուէլն սպարապետն՝ իբրև զսան սնուցանէր, և զմայրն նոցա զՉարմանդուխտ ի մեծի շքի տիկնութեան պատուէր: Բայց յորժամ տեսանէր Մանուէլն՝ զոր ինչ զործեացն ընդգէմ էր հրամանաց թագաւորին Յունաց, ածեալ զմտաւ իւրով՝ թէ արժան է նմա զէթ զմի ոք թիկունս առնել նմա, ապա խորհեցան խորհուրդ ընդ տիկնոջն, և կամեցաւ թիկունս առնել զարքայն Յունաց:

ԳԼ. ԼԸ

Ապա յետ այսորիկ առաքեցին Ջարմանդուխտ տիկինն Հայոց և սպարապետն Մանուէլ զԳարջոյլ Մաղխազ, և ընդ նմա զբազումս ի նախարարացն Հայոց, հրովարտակօք՝ ընծայիւք և պատարագօք առ թագաւորն Պարսից, զի ի նա ձեռս տայցեն և զնա պաշտիցեն, և նմա միամտութեամբ ծառայեսցեն, և տայցեն նմա զաշխարհս Հայոց: Եւ չոգան հասին Գարջոյն, և որք ընդ նմայն էին, ի դուռն թագաւորին Պարսից. մատուցին նմա զհրովարտական զտիկնոջն²¹ և զսպարապետին Հայոց, և ետուն նմա զյղեալ պատգամսն հնազանդութեան: Եւ յորժամ ետես զնոսա թագաւորն Պարսից, մեծաւ խնդութեամբ ընկալեալ զնոսա, և մեծապէս մեծարանօք պատուեաց զնոսա, և մեծաւ պարգևաւ առնէր զԳարջոյն:

Եւ ընդ նմա առաքէր յերկիրն Հայոց զՍուրէն Պարսիկ մի ճոխ ի նախարարացն իւրոց. և ընդ նմա յղեաց տասն հազար հեծեալս վառեալս սպանազէնս, զի երթիցէ Սուրէն յաշխարհն Հայոց ի թիկունս օգնականութեան զօրավարին Մանուէլի, և պահել ի թշնամեաց զտիկինն զՋարմանդուխտ: Եւ ետ թագաւորն Պարսից տանել ի ձեռն Սուրենայ թագ և պատմուճան, և զվառ թագաւորացն տիկնոջն Ջարմանդուխտոյ, և թագս մանկանցն որդւոցն երկոցունց Արշակայ և Վաղարշակայն: Ջսոյն և սպարապետին Մանուէլի սոյնպէս ետ տանել զթագաւորական պատմուճանն, սամոյր մի և զգլխոյ պատիւ գարգմանակ ոսկի արծաթ, և ի պատիւ գլխոյ ի վերայ գագաթանն ի թիկանց արծուոյն՝ հանգոյցք թագի կապեալ աշխարաւանդ հանգոյց, և լանջաց պատիւ՝ ապիզակ, որպէս օրէնք են ունել թագաւորաց. և շիկակարմիր խորան, և ի վերայ խորանին արծուի նշան, և սրահակս մեծամեծ և կապուտակ երկնագոյն հովանոցս: Եւ ոսկի սպաս տաճարին առաքէր սպարապետին Մանուէլի. և տայր նմա յիւրմէ ձեռանէ իշխանութիւն մեծ ի վերայ աշխարհին Հայոց:

Եւ եկն եհաս Գարջոյն խորխոռունի յերկիրն Հայոց. և էած զՍուրէն Պարսիկ՝ ռասն հազարաւն: Եկին բերին զպարգևսն տիկնոջն և մանկանց նորա. սոյնպէս սպարապետին Մանուէլի ունէին պարգևս իւրաքանչիւր աւագացն, և տանուտէրացն իւրաքանչիւր մեծամեծացն Հայոց: Եւ յորժամ

²¹ Zu զտիկնոջն vgl. § 396.

տեսանէին զմեծարանսն և զսէր թագաւորին Պարսից, տիկինն Չարման-
դուխտ և սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ մեծաւ խնդութեամբ
մեծարէին զՍուրէնն : Տային զաշխարհն Հայոց ի ձեռն Սուրենայ, և հնազան-
դէին հրամանաց թագաւորին Պարսից, և կարգէին թագաւորին Պարսից
յաշխարհէն Հայոց հարկս՝ տալ նծայս և պատարագս : Սոյնպէս և մարդ-
պանին Սուրենայ հասս և կօշիկս և զպիտոյս զոռճկացն, սոյնպէս և տասն
հազարացն դարման և կերակուր ըստ պիտոյիցն : Եւ սրտի մտօք արարին
իւրեանց թիկունս, և տէր գտեալ իւրեանց զարքայն Պարսից, և կային
ի ծառայութեան նորա, և ստէպ ստէպ դեսպանք թագաւորին Պարսից
երթային և գային յերկիրն Հայոց, և մեծապէս զմտերմութիւն միամտու-
թեանն, որ էրն, ցուցանէին թագաւորին, և ստէպ առաքէր պարզևս տիկ-
նոջն Չարմանդուխտոյն, սոյնպէս և զօրավարին Հայոց Մանուէլի : Յոյժ
մտերիմ և սիրելի լինէր Մանուէլ թագաւորին Պարսից և մեծապէս փառաւո-
րեալ աւագանայր ի նմանէն : Եւ Մերուժանն արծրունի իբրև տեսանէր
գայն ամենայն փառս աւագութեան, որովք շքեղացոյց զՄանուէլ արքայն
Պարսից, զի որպէս զեղբայր կամ զորդի այնպէս պատուեաց զնա, յոյժ
նախանձէր նա ընդ փառսն Մանուէլի, և խնդէր նա հնարս հնարել, հանել
զնա յաչաց թագաւորին Պարսից, զի փոխանակ նորա ինքն լիցի սիրելի :
Եւ իբրև այլ հնարս ինչ ոչ կարէր գտանել զուրս նենգութեանցն առ Պար-
սիկս, ընդ որ մտցէ, ապա խորհեցաւ նա ընդ միտս իւր զնենգութիւն
չար, և կեղծաւորութեամբ իւրով զգործ իւր յառաջացոյց : Ջի իբրև նա
յեցաւ ի միամտութիւն զօրավարին Մանուէլի, սկսաւ նախ հպատակու-
թեամբ զմիտսն գողանալ, նախ մտերմութեամբ հաճել զմիտս նորա, ապա
զանձն իւր հոգածու և խնամակալ երևեցուցանէր նմա, ապա եկեալ գու-
շակութիւն առնէր նմա սուտ ի քմաց իւրոց՝ թէ Գիտասաշիւր դու, ո Մանու-
էլ, զի դեսպան լեալ է յարքայէն Պարսից, յաղագս քո բերեալ ունին
հրաման առ Սուրէնն, զի զքեզ կալցին կապեցեն, կամ աստէն սպանցեն,
կամ ոտիւք և ձեռօք և պարանոցաւ կապելով մեծաւ զգուշութեամբ տանել
առ թագաւորն Պարսից, արդ դուն գիտս՝, տես խորհեաց ընդ միտս քո
թէ զինչ գործեսցես : Եւ եղև յորժամ լուաւ զայս Մանուէլ, կայր զարմա-
ցեալ հիացեալ ընդ միտս իւր, և ասէր թէ չիք իմ յանցուցեալ առ Պարսիկս,
էր աղագաւ զայն առնիցէ ընդ մեզ : Եւ ասէ Մերուժանն ցՄանուէլ, Ես
ճշգրտեցի և հաստատեցի, զի իրքդ այդ ստոյգ են, մեծաւ սիրով և հոգա-
բարձութեամբ գուշակ եղէ քեզ : Իսկ իբրև հաւատաց բանին Մերուժանայ

Մանուէլէն, և կարծեաց ի միտս իւր՝ թէ ստոյգ են բանքն այն զոր լուաւ, ապա գունդ կազմեաց, և զօր բազում առ ինքն կուտեաց զօրավարն Հայոց Մանուէլ: Եւ մինչ դեռ խաղաղութեամբ Սուրէնն իւրով բանակաւն բանակեալ էր յանհոգս յանկարծ և աննեղ խաղաղութեամբ, իբրև ոչ ինչ գոյր ի մէջ նոցա նենդութիւն դաւաճանութեան ըստ համբաւահան չարագործն Մերուժանայ, յանկարծօրէն յերակարծունքն զօրավարն Հայոց Մանուէլ հասանէր անկանէր ի վերայ բանակին Սուրենայ, և զտասն հազարսն զՊարսիկսն միանգամայն կոտորէր: Բայց զմարզպան Սուրէնն միաձի արձակէր, շնորհել զարևն իւր՝ պարզև արարեալ: Եւ զարմացեալ Սուրէն ընդ իրան ընդ այնոսիկ թէ ընդէր, քր աղաղաւ նա զայս արդեւք գործեաց. և ասէ Մանուէլ ցՍուրէն. Ջքեզ վասն բարեկամութեան սիրոյն արձակեալ, ողջանդամ երթիչիբ զճանապարհս քո. այլ ես ի պարսկաց ի խափս այլ ոչ անկայց: Եւ ինքն Մանուէլ Հայոց զգունդն կազմէր, և զարսն պատրաստէր. և գիտաց այնուհետև թէ մեծ թշնամութիւն յարոյց և մեծ գրգռութիւն ընդ թագաւորին Պարսից: Եւ յայնմ հետէ զօրավարն Հայոց Մանուէլ հանդերձ ամենայն գնդաւն գտիկին Ջարմանդուխտ գկին թագաւորին Պապայ ի գլուխ առեալ, ի տեղի թագաւորացն շրջեցուցանէին. և ինքեանք կային ի մարտի պատերազմին յաղագս շինութեան աշխարհին Հայոց յամենայն կողմանց ընդ թշնամիս և ընդ սահմանակիցս՝ որ շուրջ գիւրեամբք էին, և աւելի զօրքն²² Պարսից զամենայն աւուրս կենաց իւրոց. բայց Մերուժանն գնայր անզր առ թագաւորն Պարսից ամբաստան զՄանուէլէ:

²² Statt *զօրքն* würde man *ընդ* (aus der vorigen Zeile) *զօրսն* . . . erwarten; die Konstruktion ist wohl durch falsche Beziehung zu dem vorhergehenden Relativsatz entstanden.

KORIUN

Koriun (Կորիւն) ist der Verfasser einer Biographie seines Lehrers, des hl. Mesrop (361–440), des Erfinders der armenischen Schrift. Der armenische Titel lautet: Պատմութիւն վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի. Über das Leben Koriuns ist wenig bekannt.

Seine bischöfliche Tätigkeit fällt in die Zeit von 425–460. Da Mesrop 440 starb, so ist dieses Jahr ein *terminus post quem* für die Abfassung der Biographie. Verschiedene Gründe legen es nahe, für die Zeit der Abfassung den Beginn der 50er Jahre des 5. Jh. anzusetzen. Der Text ist in einer längeren und einer kürzeren Rezension erhalten. Erstere erweist sich als die ursprüngliche. Der hier gegebene Text ist dieser längeren Rezension entnommen, die zugleich mit der kürzeren in der Venediger Ausgabe von 1894 abgedruckt ist.

Deutsche Übersetzungen:

1. Koriwns Biographie Mesrops, übersetzt von B. Welte. Anzeige der Feier der 25jährigen Regierung Wilhelms von Württemberg 31. 10. 1841. Tübingen 1841. (Aus dem längeren Text übersetzt, oft sehr frei und ungenau).
2. Ebenfalls auf der längeren Rezension beruht die genauere Übersetzung von S. Weber: Koriwn. Beschreibung des Lebens und Sterbens des hl. Lehrers Mesrop. Bibl. der Kirchenväter ... Ausgewählte Schriften der armenischen Kirchenväter. I. München 1927.

Eine französische Übersetzung findet sich im 2. Band von Langlois, *Collection des historiens anciens et modernes de l'Arménie*. 1869.

Empfohlen sei die vortreffliche russische Übersetzung von Š. V. Smbtjan und K. A. Melik-Ogandžanjan (mit ausführlicher Einleitung). Erewan 1962 (Smb.)

In unserem Text befindet sich Mesrop (auch Mašt'oç genannt) im Gebiet von Գողթն im östlichen Armenien. Seine Missionstätigkeit ist bislang nur von geringem Erfolg begleitet gewesen. Hier schließt unser Text an, in dem ausführlich die Geschichte der Erfindung der armenischen Schrift behandelt wird.

Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի

1250

5. Եւ այնպէս տրտմական հոգովք պաշարեալ և թակարդապատեալ և անկեալ ի ծուփս խորհրդոց, եթէ որպիսի՛ արդեօք ելա իրացն գտանիցէ : Եւ իբրեւ առուրս բազումս անդէն ի նմին դեգերէր, յարուցեալ այնուհետեւ հասանէր առ սուրբ կաթողիկոսն Հայոց մեծաց, որոյ անունն ճանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր, նմին փութոյ հաւանեալ : Եւ միանգամայն յօժարութեամբ գումարեալ հանդերձ աղօթիւք մեծովք առ Աստուած կանխէին, վասն ամենայն ոգւոց քրիստոսաբեր փրկութեանն հասանելոյ. և զայն առնէին առուրս բազումս : Ապա ելանէր նոցա պարգեւական յամենաբարին Աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և գիրս նշանագրոյ Հայաստան ազգին հասանել. բազում հարց փորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ, և բազում աշխատութեանց համբերեալ, ազգ առնէին ապա և զկանխագոյն ինդրելին իւրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ¹ :

W 27 AG 402

AG 42

10

6. Յայնժամ պատմէր նոցա արքայն, վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ² յանկարծ ուրեմն նշանագիրս աղիաբետաց հայերէն լեզուի : Եւ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն ի Դանիէլէ, յօժարեցին զարքայ՝ փոյթ առնել վասն պիտոյիցն այնոցիկ : Եւ նա առաքէր զոմն Վահրիճ անուն հրովարտակօք առ այր մի երէց, որոյ անուն Հաբէլ կոչէին. որ էր մերձաւոր Դանիէլի ասորոյ եպիսկոպոսի :

AG 44

20

7. Իսկ Հաբէլին զայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլն, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրոյն, և ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց. ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր : Իսկ արքային հանդերձ միաբան սրբոյն Սահակաւ և Մաշթոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբէլէն, ուրախ լինէին : Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւտն, խընդ-

24, 71

¹ Վռամշապուհ herrschte in Armenien 389-414.

² որոյ usw. Der Genetiv muß von einem zu ergänzenden գտեալ էր „erfunden hatte“ abhängen (s. § 356).

սրբործել 117

րէին հայցէին եւս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն մարթասցեն³: Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային. ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ երանելին հասանէր. և իբրեւ ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր. և նովին նշանագրովք տանէր⁴:

AG 46

8. Իսկ իբրեւ ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս և զկապս⁵ հայերէն լեզույն, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք⁶ և յարուցեալք դիպեցան:

9. Յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ: Վասն որոյ առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկտոյ հրամանաւ արքայի, և միաբանութեամբ սրբոյն Սահակայ, և հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր գնայր ի հինգերորդ ամի Վուամշապհոյ արքային Հայոց, և երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուց Ասորոց. որոց առաջինն Եղեսիա կոչի, և երկրորդն Ամիգ անուն: Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն. որոց առաջնոյն Բաբելաս անուն և երկրորդին Ակակիոս. հանդերձ կղերականօքն և իշխանօքն քաղաքին պատահեալ, և բազում մեծարանս ցուցեալ հասելոցն, ընդունէին հոգաբարձութեամբ, ըստ Քրիստոսի անուանելոցն կարգի:

17

20

10. Իսկ աշակերտասէրն վարդապետին՝ զտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զմմանս յասորի դպրութիւնն կարգէր, և զմմանս յունական դպրութիւնն՝ անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր, և նորա

³ Zu մարթասցեն muß ein Infinitiv, etwa *փորձել* „ausprobieren“ ergänzt werden.

⁴ In diesem Satz hat տանէր intransitive Bedeutung: „er kam voran“ oder „er fing damit an“ (vgl. den nächsten Satz). Weber: „er hielt sich an (diese Schriftzeichen)“; Welte: „nachdem er sich beschäftigt hatte . . .“; Smb.: „leitete die Beschäftigung (*vël zanjatija*) . . .“.

⁵ կապ hat hier eine ganz spezielle Bedeutung. Weber übersetzt „Verbindungen“, was viel zu allgemein ist; Welte meint, es seien „die mit einem *yet* (*ը*) ausgesprochenen vokallosten Buchstaben, welche häufig die Vermittlung, das Band zwischen zwei Silben sind“ (?). Smb. übersetzt *slog* „Silbe“. – ողջ ածել heißt „genau wiedergeben, genau ausdrücken“. – Zu dem Satz mit *իբրեւ* fehlt eigentlich ein nachfolgender Hauptsatz. Man streicht wohl besser diese Konjunktion.

⁶ Neben թաղեալք „gesammelt“ gibt es die Variante քաղեալք „begraben“; Weber übersetzt danach „fallen gelassen (wörtlich: begraben)“. Die Variante wird auch von Smb. gebraucht.

իւրովք հաւասարօք զսովորականն առաջի եղեալ զաղօթս և զտքնութիւնս և զպաղատանս արտասուալից, զխստամբերութիւնս, զհոգս զաշխարհահեծս, յիշելով զասացեալսն մարգարէին, եթէ՛ »Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցես»⁷ :

Ag 48

11. Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ : Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական շափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի սուրբ աջով իւրով, նշանագիրս հայերէն լեզուին : Եւ անդ վաղվազակի նշանակեալ անուանեալ և կարգեալ, յորինէր սիրոբայիւք և կապօք : Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց, հանդերձ օգնականօք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոստացոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցոյն մեծարեալ լինէր : Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հոսիանոս անուն գտեալ. որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն՝ զնրբագոյնսն զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն, միանգամայն յորինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք. որոց առաջնոյն Յովհանն անուն կոչէին, յեկեղեցաց գաւառէն, և երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանէն : Եւ եղեալ սկիզբն նախ յԱռական Սողմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ՛ »Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» : Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի. հանդերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին դպրութեան :

-W 48

W 49

10 W 50

W 51

Ag 50

W 52

20

12. Ապա յետ այնորիկ առնոյր թուղթս յեպիսկոպոսէ քաղաքին. և հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն, բերէր⁸ առ եպիսկոպոսն Ասորոց : Որ յորոց նախընկալն եղեւ, առաջի արկեալ նոցա զնշանագիրն աստուածատուր. վասն որոյ բազում իսկ գովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս Աստուծոյ, և ի մխիթարութիւն աշակերտելոցն, ոչ սակաւք :

W 53

141

122 6

128 3

Ag 54

30

Th

Tst

15. Եւ արդ եկեալ յիշելին մերձ ի թագաւորական քաղաքն, ազգ լինէր թագաւորին և սրբոյ եպիսկոպոսին : Որոց առեալ զամենայն նախարարագունդ աւագանւոյն ամբօխ, ի քաղաքէն ելեալ՝ պատահէին երանելոյն՝ զափամբ Ռահգետոյն : Եւ զցանկալի ողջոյնն միմեանց փուեալ. ուստի

⁷ Die gemeinte Bibelstelle (Jes. 30,15) ist im Armen. nicht genau wiedergegeben. ⁸ Zu բերէր ist als Objekt „sie“ (die Briefe) zu ergänzen. – Ասորոց „aus Syrien“.

և բարբառօք ցնծութեան և երգօք հոգեւորօք, և բարձրագոյն օրհնութեամբք ի քաղաքն դառնային, և զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին :

14. 12. 20
28. 6. 79
W 60
16. Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զխուժարուժ կողմանսն Մարաց, որք ոչ միայն վասն զիւական սատանայակիր բարուցն ճիւղութեան, այլ և վասն խեցրեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ զժուարամատոյցք էին : Առ ի յարգարել և զնոցա հարուստ ամացն ծնունդս՝ առեալ պարզախօսս հոետորաբանս, կրթեալս աստուածատուր իմաստութեանն ծնունդս կացուցանէին : Եւ այնպէս միջամուխ եղեալ հանգամանօք օրինապատգամացն, մինչեւ բնաւ արտաքոյ իւրեանց բնականութեանն զերծանել : Եւ ի ձեռն առեալ այնուհետև աստուածագործ մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել ի գրել և յուսուցանել. մանաւանդ հայեցեալ ի տեառնաբարբառ հրամանացն բարձրութիւնն, որ առ երանելին Մովսէս եկեալ, վասն ամենայն իրացն եղելոց, յաստուածեղէն պատգամացն բարձրութիւն աւանդելոցն՝ մատենագրել առ ի պահեստ յաւիտեանցն որ զալոցն էին. նոյնպիսիք և այլոց մարգարէիցն հրամայեալք : «Առ, ասէ, քարտէզ նոր մեծ, և գրեն ի նմա գրչաւ դպրի»⁹ : Եւ այլուր, թէ՛ «Գրեն զտեսիլդ ի տախտակի, և ի գիրս հաստատեն»¹⁰ : Իսկ Դաւիթ յայտնապէս ևս վասն ամենայն ազգաց՝ զվիճակ աստուածատուր օրինացն նշանակէ ասելովք, թէ՛ «Գրեսցի յազգ յայր»¹¹ : Եւ թէ՛ «Տէր պատմեսցէ գրովք ժողովրդոց»¹² : Զոր եկեալ կատարեաց ամենափրկիչն Քրիստոս շնորհատուր հրամանաւն, եթէ՛ «Ելէք ընդ ամենայն ազգս»¹³. և եթէ՛ «Քարոզեսցի աւետարան ընդ ամենայն տիեզերս»¹⁴ : Ուստի և երանելի հարցն մերոց համարձակութիւն առեալ յուսալից փութով, և երեւելի և արդիւնակատար ըստ աւետարանին՝ զիւրեանց մշակութիւնն ցուցանեն :

17. Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում յանկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, և յառաջագէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական

⁹ Vgl. Jes. 8,1.

¹⁰ Vgl. Hab. 2,2 und Jes. 30,8.

¹¹ Vgl. Ps. 101,19.

¹² Vgl. Ps. 86,6.

¹³ Vgl. Mt. 28,19.

¹⁴ Vgl. Mt. 24,14.

գնդոյն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայերէնախօսք գտան¹⁵ :

129 (4)

W 133 36. Յետ այնորիկ ուշ եղեալ երկոցունց երանելեացն՝ զիւրեանց ազգին զդպրութիւն առաւել յարգել և դիւրացուցանել, ձեռն ի գործ արկանէր ի թարգմանել և ի գրել մեծն իսահակ՝ ըստ յառաջագոյն սովորութեանն:

W 132 A6 74, m - 138 (7)

Որոց դարձեալ դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Նդեսացոց, զՅովսէփ, զոր ի վերոյն յիշեցաք, և երկրորդն Նզնիկ անուն՝ յԱյրարատեան գաւառէն՝ ի Կորդ գեղջէ, զի յԱսորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս, Հայերէն գրեալս դարձուցեն :

W 134 W 135

37. Իսկ թարգմանչացն հասեալ՝ ուր առաքեցանն, և կատարեալ զհրամանսն, և առ պատուական հարսն առաքեալ, անցեալ գնային ի կողմանս Յունաց. ուր և ուսեալք և տեղեկացեալք, թարգմանիչք կարգէին ըստ Հելլենական լեզուին :

W 136

38. Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս, դիմել իջանել ի կողմանս Յունաց, որ և Ղեւոնդէս առաջնոյն անուն էր, և երկրորդին Կորիւն, և մատուցեալ յարէին յՆզնիկն, իբրև առ ընտանեզոյն աննդակից՝ ի Կոստանդինական քաղաքին, և անդ միաբանութեամբ հոգեւոր պիտոյիցն զխնդիրն վըճարէին:

W 137 W 138

W 141 Որոյ յետ¹⁶ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն, և բազում շնորհագիր հարց յետ այնր¹⁷ աւանդութեամբք, և Նիկիական և Նիքեսոսական կանոնօք գային երեւելով աշխարհին Հայոց, և առաջի զնէին հարցն զբերեալ կտակարանսն եկեղեցւոյ սրբոյ :

20 W 140 A6 76

7+ 139 (4)

¹⁵ գտան ist 3. pl. aor. mediopass. zu գտանեմ.
¹⁶ յետ scheint hier sowohl als Präposition wie (ausnahmsweise) als Postposition aufzutreten.
¹⁷ Nach յետ այնր „hernach“ ist zu ergänzen: „aufgeschrieben“.

EZNIK VON KOLB

Eznik von Kolb (Եզնիկ Կողբացի) lebte im 5. Jh. Er muß um das Jahr 400 geboren sein, genaue Daten seiner Lebenszeit sind nicht bekannt. Sein wichtigstes Werk ist die „Widerlegung der Irrlehren“ (Եղծ աղանդոց); es zerfällt in 4 Bücher: 1. Wider die Irrlehren der Heiden, 2. Wider die Religion der Perser (den Mazdaismus), 3. Wider die Religion der griechischen Philosophen, 4. Wider die Irrlehren des Markion. Die Abfassung ist mit ziemlicher Sicherheit im 5. Jahrzehnt des 5. Jh. anzusetzen.

Der armenische Text ist mehrfach gedruckt worden mit nur geringen Verschiedenheiten in den Ausgaben. Die neueren Ausgaben basieren auf dem Text von 1826 (Venedig), der auch (mit ein paar geringfügigen Änderungen) in den folgenden Proben benutzt wird. Das dem ersten Druck (1762) zugrunde liegende einzige Manuskript ist (seit 1845?) verschollen. Es ist sehr fraglich, ob es identisch war mit dem 1902 von *Mkrtčean*, *Galust* und *Ačērean* in Etschmiadzin entdeckten Eznik-Manuskript.

Eine russische Textausgabe von 1914 (Tbilissi) war mir nicht zugänglich.

Deutsche Übersetzungen:

1. J. M. Schmid, Des Wardapet Eznik von Kolb „Wider die Sekten“. Wien 1900. (Wichtig wegen der Anmerkungen).
2. S. Weber, im 1. Band der „Ausgewählten Schriften der armenischen Kirchenväter“ (Bibl. der Kirchenväter. Hrsg. von Bardenhewer, Weyman und Zellinger). München 1927.

Die französische Übersetzung in: V. Langlois, *Collection des historiens de l'Arménie*. Paris 1869, Band 2, ist nur eine Teilübersetzung.

Den Inhalt des dem ersten Buch entnommenen Stückes bildet das Problem der Herkunft des Bösen; der aus dem zweiten Buch stammende Auszug behandelt die Schöpfung der Welt nach der Lehre der Perser und den persischen Dualismus.

Statt ausführlicher Anmerkungen sei verwiesen auf das wertvolle Buch O. G. v. Wesendonk, „Das Weltbild der Iranier“, München 1933, und auf die dort S. 288–289 angegebene neuere Literatur.

Galust Ter-
Masis / a
1845. 2/1

Masis
Masisee



Եղծ աղանդոց

Buch I

ԳԼ. ԺԲ

46 Արդ և զայն եւս հարցանեն. եթէ չար ինչ չկայր առաջի, ուստի
օձն՝ զոր սատանայ կոչէք՝ իմացաւ զհանգամանս չարին :

47 Ասեմք, եթէ սատանայ չար զստունգաներն մարդոյն Աստուծոյ իմացաւ,
վասն որոյ զմարդն յայն յօժարեցոյց : Որպէս յորժամ իցէ ոք ուրուք թշնա-
մի, և թագուցեալ զթշնամութիւնն՝ գաղտ կամիցի ֆրասել, և չգիտիցէ
զհանգամանս ֆրասակարութեանն, և շուրջ եկեալ յածիցի հնարս խնդրել.
ապա գտեալ ժամանակ՝ յորժամ ոք ՚ի բժշկաց թշնամւոյն նորա պա- 10
տուէր տայցէ յայս ինչ չհպել, և յայս նիշ կերակրոց չճաշակել, որով առ-
ողջութեանն կարիցէ հասանել, և նորա լուեալ՝ վաղվաղակի ՚ի կեղծիս
բարեկամութեան կեղծաւորեալ՝ զբժիշկն պարսաւիցէ, և զօգտակարն
նմա ֆրասակարս թելադրեալ կարծեցուցանիցէ, և հակառակ պատուէրս
հրամանաց բժշկին տայցէ, և այնու առնիցէ նմա ֆրաս. որ ոչ եթէ յառաջա-
գոյն գիտէր զհանգամանս ֆրասակարութեանն, այլ ՚ի պատուիրելոյ
բժշկին գտեալ հնարս՝ եղև ֆրասակար : Նոյնպէս՝ կարծի և զսատանայէ՝
նախանձերն նմա ընդ նախաստեղծ մարդոյն, և չգիտել զհանգամանս,
ֆրասակարութեանն. քանզի ոչ եթէ չար ինչ առաջի կայր՝ ուստի զհան-
գամանսն մարթ էր առնուլ. ուսեալ յԱստուծոյ պատուիրանէն՝ որ մար- 20
դոյն սուաւ արգելուլ զնա ՚ի ճաշակելոյ ՚ի տնկոյ իմեքէ ՚ի մահաբերէ,
զայն յառաջագրեաց մարդոյն. որ ոչ եթէ անպիտան ինչ ՚ի կերակուրս
մարդոյ էր, և ոչ բնութեամբ տունկն մահաբեր, և վասն այնորիկ ինչ ար-
գելաւ մարդն ՚ի ճաշակելոյ ՚ի նմանէ, այլ անսաստութիւնն եղև պատճառ
մահուան մարդոյն, իբրև յանցաւորի՝ որ անցանիցէ զհրամանաւ
հրամանատուի՝ որ նմա կարգեալ իցէ :

Արդ ժտեցոյց թշնամին զմարդն անցանել զհրամանաւն Աստուծոյ,
որպէս զի ոչ եթէ ստուգեալ գիտէր՝ եթէ այնու նմա ֆրաս ինչ գործել
կարիցէ, այլ կարծեօք ՚ի թեթուս մատուցեալ, եթէ լիցի և թէ չլինիցի.

¹ նոյնպէս bezieht sich auf S. 85, Z. 4 որպէս.

և յետոյ յԱստուծոյ պատուհասէն՝ որ առ մարդն եղև վասն պատուիրանազանցութեանն՝ իմացաւ եթէ պատուիրանք նորա մահ գործեցին, և յիրաւի պատժեցան և նա և մարդն՝ զոր յօժարեցոյց յանսաստութիւնն, ճաշակել ՚ի փայտէն՝ որ ոչ բնութեամբ մահաբեր էր, այլ յԱստուծոյ սպառնալեացն եղև այնպիսի իրաց պատճառ:

Եւ որպէս բժշկի ոչ կարեմք մեղադիր լինել՝ վասն յառաջագոյնն զգուշացուցանելոյ որով օրինակաւ կարիցէ մարդն առողջանալ, և նորա թողեալ զպատուէրս բժշկին՝ անսայցէ թշնամոյն՝ որ զվասարար խրատսն տայցէ նմա, որով ոչ զպատճառս վնասուն ՚ի բժշկէն՝ որ յառաջագոյնն գուշակեաց նմա՝ իմանալի է, այլ ՚ի թշնամոյն որ ՚ի պատուիրանէ բժշկին նմա զվնասն հնարեցաւ. նոյնպէս և զսատանայէ ասեմք լեալ թշնամի մարդկան՝ որ չեւ եւս գիտէր զհանգամանս չարեաց, այլ ՚ի պատուիրանէն Աստուծոյ ուսեալ՝ կամեցաւ վնասել մարդոյն. որպէս զի եթէ առանց Աստուծոյ կամաց ՚ի ծառոյն ճաշակիցէ՝ առնուցու պատիժ գմահ: Քանզի եթէ յառաջագոյն չէր գուշակեալ Աստուծոյ մարդոյն չուտել ՚ի կերակրոյ ծառոյն, և նորա յանգէտս կերեալ, չլինէր նմա պատիժ մահ. կամ որպէս թէ առ ՚ի չգիտանս եկեր, կամ թէ առ չժուժալոյ ՚ի կերակրոյ ծառոյն, չէր ինչ պատժի պարտական: Քանզի և մանուկ կաթնակեր՝ որ յայլ ինչ կերակուր մտաբերիցէ, ոչ պատժելի է՝ այլ արգահատելի, որպէս թէ առ ՚ի չգոյց կաթին յայն յօժարեաց: Նա և օձն, որ է սատանայ, յիրաւի պատժեցաւ՝ վասն ընդ անագորոյն թշնամութեան ընդ մարդոյն ունելոյ:

Եւ արդ սկիզբն չարեաց զնախանձն ասեմք, և զնախանձն յառաւել զմարդն պատուելոյ², և զչարիսն յանհնազանգութեանն: Չի Աստուած այնպէս առաւել զմարդն պատուեաց, և նորա անսաստեալ՝ զընկէց զպատուիրանն: Ուստի զամենայն ինչ որ լինի չար, ոչ բնութեամբ չար գիտեմք, այլ զի առանց կամացն Աստուծոյ գործին իրք ինչ՝ լինին չար:

Նա և ընդ լինելն իսկ սատանայի յԱստուծոյ, գիտաց՝ եթէ անսաստել ումեք Աստուծոյ՝ չար է և ոչ բարի. քանզի ոչ եթէ անմիտ ինչ ոք եղև նա յԱստուծոյ՝ եթէ չգիտէր, եթէ որ ինչ ըսաւ Աստուծոյ կամացն լինի՝ բարի է, և որ ինչ արտաքոյ քան զնորա կամսն՝ այն չար է. և վասն այնորիկ յիրաւի տանջէ զնա Աստուած, զի գիտէ նա զբարին, և ոչ առնէ. և հմուտ է չարին, և ոչ խորշի: Եւ ոչ չար և չարչարիչ հաստատեաց զնա Աստուած.

² Nach պատուելոյ ist ein Աստուծոյ zu ergänzen (Gen. subj.).

D
§ 416

14
L
10
48
20
137.H
Y
30

և ոչ փորձիչ՝ եթէ նովաւ փորձեալ զարդարս գտեսցէ. և ոչ ինքն յանձնէ
չար գտեալ, և ոչ անարար և հակառակ Աստուծոյ. այլ մտաւոր եղեալ
յԱստուծոյ, և հմուտ գիտութեան՝ թէ չար է հակառակ կալ Աստուծոյ
հրամանին, և յայն զոր գիտէրն՝ թէ չար է՝ յանդգնեցաւ, զանսաստու-
թենէն ասեմք. և անսաստութիւնն ոչ եթէ անձնաւոր ինչ յառաջագիւտ
էհաս ՚ի գիտութիւնն սատանայի, այլ իբրև զմի ինչ եղեալ ՚ի զիպաց
կամեցելոյն :

49 Նա և զմարդոյ յիրաւի, ասեմք, կրել պատուհաս ընդ որոց գործիցէ. T. 2
քանզի կամաւ երթայ յուսումն այնպիսի իրաց, յորոց յորժամ և կամիցի՝
և մեկնել կարող է. քանզի և կամելոյն և չկամելոյն ունի իշխանութիւն, 10
գորոյ զհետ երթայ և կարելն զոր ինչ կամիցի առնել: 20.7.77

ԳԼ. ԺԳ

50 Որովհետև, ասեն, չարեաց արարիչ զԱստուած չկամիք ասել, այլ
՚ի մարդկանէ եղեալ թելադրութեամբ սատանայի ՚ի հնազանդելոցն
նորա և ՚ի խաբեցելոց, և յիրաւի կրեն պատիժս. զի կարէին հատանել և
ընկենուլ ՚ի բաց զչարիսն, և ոչ կամեցան, և արդ վասն նորին իսկ սատա-
նայի հարցցուք. այնպիսի արդեւք արար զնա Աստուած, 510, 511 եթէ ինքնին 201
այնպիսի չէր՝ և յօժարեաց ՚ի չարաբարել:

51 Եթէ այնպիսի արարեալ էր զնա Աստուծոյ, պատիժս ՚ի նմանէ չէր
պարտ պահանջել, զի պահեաց զպայման բնութեանն՝ յոր արարն զնա 20
Աստուած. և որ ոք ոչ կամօք ինչ գործէ, ընդ այնք պատիժ չպարտի
կրել. բայց որ կամօք կարող է գործել, և գործ ինչ յոռութեան գործիցէ,
յիրաւի պատժի, զի ոչ եկաց յայնմ՝ զոր Աստուածն կամի. ապա եթէ յԱստու-
ծոյ բարւոք եղև, և անձամբ յանձնէ դարձոյց զկամսն ՚ի չար՝ հեռացու-
ցեալ զինքն ՚ի լաւէն, յիրաւի պահանջի ընդ 51, 2 որոց յանդգնեցան՝ պա-
տիժս. զի զսատանայ մեք ոչ յԱստուծոյ սատանայ եղեալ գիտեմք. այլ
զսատան անուն՝ վասն խոտորելոյն էառ իւր անուն. քանզի սատանայ
յԵբրայեցեոց և յԱսորեոց լեզուէ խոտորեալ թարգմանի. այլ զօրութիւն
իմն զգայուն լաւութեանց հաստատեցաւ յԱստուծոյ, և ՚ի թշնամութենէ X
ընդ մարդոյն ունելոյ՝ 48 իւրն կամօք եղև բանսարկու. թողեալ զԱստու- 30
ծոյ հպատակութիւն՝ սկսաւ անսաստել, և հակառակ կալ Աստուծոյ հրամա-
նացն ուսուցանել մարդկան, և իբրև զապստամբ յետս կացեալ թիւ-

րեցաւ յԱստուծոյ: Եւ վկայէ բանիս աստուածական բարբառն, որ ապ-
 ստամբ վիշապն կոչէ զնա՝ եթէ հրամանաւ սպան զապստամբ վիշապն: Եւ
 արդարեւ իսկ բանն Աստուած սպան զսատանայ, այնու զի կոխելոյն
 զնա ետ իշխանութիւն: Արդ ապստամբ կոչէ զնա գիր. եթէ նոյնպիսի՝
 - որպէս եղևն յԱստուծոյ՝ կացեալ էր, ապա ոչ ապստամբ կոչէր զնա.
 զի որ ապստամբի ոք, թողու զիւր պայմանն՝ որով ոչ անարար իսկ ցու-
 ցանի: Զի եթէ անարար էր, ապա ոչ յիւրմէն բնութենէն փոխէր. քանզի
 չմարթի բնութեան իմիք՝ առանց կամաց՝ մերթ բարի լինել, մերթ չար:

ԳԼ. ԺԴ

52 10 Իսկ արդ եթէ ոչ էր անարար, ասեն, ըստ ձեզ սատանայ, և ոչ այն-
 պիսի եղեալ յԱստուծոյ, և անձամբ զանձն դարձոյց՝ ի լաւէ անտի՝ ի յոռին,
 որ է՝ ի հնազանդութենէ յանհնազանդութիւն, արդ զայն ասացէք. գիտէր
 Աստուած՝ եթէ այնպէս լինելոց էր, եթէ չգիտէր. թէ գիտէր և արար,
 ինքն է պատճառ՝ նորա՝ ի լաւութեանցն դառնալոյ. ապա եթէ ոչ գիտէր,
 - զիմորդ առնէր զայն զոր ոչն գիտէր՝ թէ որպիսի ինչ ոք լինելոց իցէ:

Անգիտութիւն կարծել զԱստուծոյ՝ անհնարին յիմարութիւն է. քանզի
 միայն ինքն կանխագէտ է հանդերձելոց: Այլ քանզի բարերար էութիւն
 է Աստուած, ոչ կամեցաւ զազնուականութիւնն իւր ծածկել. վասն որոյ
 յառաջագոյն գիտէր զսատանայէ՝ եթէ թիւրեւոց է, և զմարդիկ յանցու-
 ցանելոց՝ առ ՚ի չունկնդիր լինելոյ հրամանաց նորա, որով միանգամայն
 վասն անձնիշխանութեան մարդոյն երևելոյ արար զնա Աստուած. զի
 առաւելութիւն բարերարութեան նորա յայտնի լիցի մարդկան, վասն
 թողութեան տարոյ մարդկան յառաջագոյն գործելոյն մեղաց: Զի յորժամ
 զսատանայ ամպարչտացեալ տեսանիցեն և չբարձեալ ՚ի միջոյ, և վասն
 իւրեանց մեղացն իմանայցեն՝ թէ գոյ հնար թողութեան ապաշխարու-
 թեամբ. զի Աստուծոյ բարերարութիւնն ցուցանիցի, և մարդիկ զչնորհն
 նորա գիտացեն. զի եթէ այն այնպէս չէր լեալ, և ոչ բարերարութեանն
 նորա ոք խելամուտ լինէր:

53 Նա բնաւ իսկ, ասեն, յետ թիւրեւոյն սատանայի և խաբելոյ զմարդն՝
 30 ընդէր իսկ ոչ եբարձ ՚ի միջոյ, զի մի զբազումս սպանանիցէ:

54 Ոչ եթէ չէր կարող Աստուած բառնալ զսատանայ ՚ի միջոյ, քանզի չիք
 ամենեւին տկարութիւն զԱստուծով. այլ զի չէր ինչ մեծ գործ Աստուծոյ

X գատտանայ ինքնին անձամբ սպանանել, և զարարած մի զիւր փոքր
 X յոչինչ դարձուցանել, զի մի կարծիցի՝ թէ վասն չժուժարոյ չարութեանն
 նորա սպան զնա: Երկրորդ անգամ՝ զի անձանօթ ևս լինէր առ յապայ) 55
 մարդկան Աստուծոյ բարերարութիւնն, թէ յառաջագոյն սպանանէր գա-
 տանայ. զի ոչ ոք ունէր նշանակ ինչ յայտնի բարերար կոչելոյ զԱստուած: —
 Այլ թերևս և կարծիք ինչ ՚ի մէջ մտանէին՝ թէ հաւասար ինչ ոք էր նա
 Աստուծոյ, և աճապարեաց ՚ի միջոյ եբարձ. վասն որոյ պահեաց զնա, և 56 X
 ոչ կորոյս ՚ի միջոյ, զի մարդիկ յորժամ լաւութեանցն հմուտ լինիցին,
 յաղթեացեն նմա՝ փոխանակ այնոցիկ՝ որք յառաջնունն յաղթեցան ՚ի
 նմանէ: 10

Այն իսկ մեծ և զարմանալի է, զի մարդն Աստուծոյ վառեալ Աստուծոյ
 օգնականութեամբն, պատերազմեալ յաղթիցէ սատանայի: Որպէս մար-
 տուսոյց ոք ամենայն հնարիւք հնարեալ զիւր աշակերտսն թեքել, առ XX
 ՚ի ցուցանելոյ զհանգամանս մարտիցն, որով մարթիցեն յաղթել ախո-
 յանից, և առաքիցէ զնոսա ՚ի հրահանգս մրցել ընդ ախոյանսն, և յաղ-
 թութեանցն ուշ առնել խրատիցէ, մինչեւ զկեանս անգամ արհամարհել. X
 զի լաւ համարի թէ վասն անուան բարիոք մեռանիցին, քան թէ կենդանի
 կայցեն և վատանուն լինիցին: Եւ նոցա զթելադրութիւնս վարդապե-
 տին ՚ի մտի եղեալ, և զպարզեւս ընդ յաղթութեանն, գեր ՚ի վերոյ լինիցին
 ախոյանին, և պսակեալ առ վարդապետին հասանիցեն, և նշանակ ճգնու- 20
 թեան ընդ ախոյանին՝ առ նա զպսակն բերիցեն: Ապա եթէ զմարտու-
 սոյցն զմտաւ ոչ ածիցեն, և յաղթութեան և պսակի ոչ ցանկանայցեն,
 կործանին վատանուն յախոյանէ անտի. յիրաւի այնուհետեւ թշնամանին
 և տանջին, և մահու պատիժ փոխանակ ընդ վատութեանն կրեն:

Նոյնպէս և զԱստուծոյ իմանալի է, թէ իւրովք պատուիրանօք վառէ - XX
 զեղեցիկ զմարդիկ՝ առ ՚ի պսակելոյ զյաղթօղն, և յամօթ առնելոյ զվա- XX X
 տացեալն. իսկ եթէ ոք յոչինչ զԱստուծոյ զպատուիրանսն համարիցի,
 յորժամ մրցել ընդ բանսարկուին մարտնչիցի՝ վաղվաղակի կործանի,
 քանզի չունի զնշանակս յաղթութեանն. և յիրաւի կրէ պատիժ պատու-
 հասից այնպիսին, զի ոչ նմանեաց ընկերին՝ որ կոռեցաւ և յաղթեաց: 30

Արդ վասն այնորիկ թողեալ է Աստուծոյ գատտանայ իրրև ՚ի հրա-
 հանգս կոռուանոցաց յաշխարհի, զի յորժամ իւր նահատակեալքն կոռու-
 ցին և յաղթիցեն նմա՝ պարծանք առաջնոյ յաղթութեանն նորա քակեսցին
 յայժմուն յայնպիսեացն մարդկանէ, որ լաւութեանցն ցանկութեամբ
 պարտիցեն զնա, և նշան յաղթութեան զնահատակութեանն կանգնիցեն: — X
 Քանզի կոխան արկեալ ընդ ոտիւք մերովք՝ անկեալ զնի մեռեալ, և կոր-
 ծանի՝ առ ՚ի լաւութեանցն ցանկութեան մերոյ ՚ի պարտութիւն մատնեալ: XX

Buch II

ԳԼ. Ա

145

Մինչ չի բնաւ էր ինչ, ասեն, ոչ երկինք և ոչ երկիր և ոչ այլ ինչ արարածք՝ որ յերկինս կամ յերկրի, Ջրուան³ ոմն անուն էր, որ թարգմանի բախտ կամ վառք: Չհազար ամ յաշտ արար՝ զի թերևս որդի մի լինիցի նմա, որում անուն Որմիզդ⁴, որ զերկինս և զերկիր և գամենայն որ ՚ի նոսա՝ առնիցէ. և յետ հազար ամի յաշտ առնելոյ՝ սկսաւ ածել զմտաւ, ասէ. օգոևս ինչ իցէ յաշտս զոր առնեմ, և լինիցի ինձ որդի Որմիզդ, եթէ ՚ի զուր ինչ ջանայցեմ: Եւ մինչ դեռ նա զայս խորհէր, Որմիզդ և Արհմն⁵ յղեցան յարգանդի մօր իւրեանց. Որմիզդն ՚ի յաշտն առնելոյ, և Արհմն ՚ի յերկուանաւոյ անտի: Ապա իմացեալ Ջրուանայ, ասէ. երկու որդիք են յորովայնի անդ, որ ոք ՚ի նոցանէ վաղ առ իս հասցէ՝ զնա թագաւոր արարից. և ծանուցեալ Որմիզդի զխորհուրդս հօրն՝ յայտնեաց Արհմնին. ասէ, Ջրուան հայր մեր խորհեցաւ՝ թէ որ ոք ՚ի մէնջ վաղ առ նա երթիցէ, զնա թագաւորեցուցէ: Եւ զայն լուեալ Արհմնին՝ ծակեաց զորովայնս, և ել եկաց առաջի հօրն: Եւ տեսեալ զնա Ջրուանայ, ոչ գիտաց եթէ ո՞ր ոք իցէ. և հարցանէր՝ եթէ ո՞վ ես դու: Եւ նա ասէ. ես եմ որդին քո: Ասէ ցնա Ջրուան. իմ որդին անուշահոտ և լուսաւոր է, և դու խաւարին և ժանդահոտ ես: Եւ մինչ դեռ նոքա զայս ընդ միմեանս խօսէին, ծնեալ Որմիզդի ՚ի ժամու իւրում լուսաւոր և անուշահոտ, եկն եկաց առաջի Ջրուանայ: Եւ տեսեալ զնա Ջրուանայ, գիտաց՝ եթէ Որմիզդ որդի նորա է, վասն որոյ գյաշտն առնէր. և առեալ զբարսմունսն⁶ զոր ՚ի ձեռին իւրում ունէր, որովք գյաշտն առնէր, ետ ցՈրմիզդ և ասէ. ցայժմ ես վասն քո յաշտ առնէի, յայսմ հետէ դու վասն իմ առնիցես: Եւ ՚ի տալ Ջրուանայ զբարսմունսն ցՈրմիզդ և օրհնել զնա,

20

³ Ջրուան, Vater des Ormuzd und Arhmn, ursprünglich „Zeit“. Aus der Verbindung avest. *zrvan-* und *akarana* „unbegrenzt“ entwickelte sich wohl die Funktion einer Gottheit (avest. *zrvan-*, mpers. *zrvān*, *zruvān*, *zarmān*, npers. *zervān*, *zermān*).

⁴ Որմիզդ = das gute Prinzip des Mazdaismus (avest. *Ahura mazdāh*, mpers. *Ohrmuzd* u. a., npers. *Hormuz(d)*, *Hormiz(d)*).

⁵ Արհմն = das böse Prinzip des Mazdaismus (avest. *Añgra mainyu*, mpers. *Ahrāman* u. a., npers. *Ahrīman*).

⁶ բարսմունք sind Baumzweige, die der opfernde Priester in der Hand hält. Vgl. darüber J. M. Schmid's Übersetzung S. 92, Anm.

մատուցեալ Արհմենի առաջի Ջրուանայ՝ ասէ ցնա. ոչ այնպէս ուխտեցեր՝
 թէ ո ոք յերկուց որդուցն իմոց յառաջ առ իս հասցէ, զնա թագաւոր արա-
 րից: Եւ Ջրուանն առ՝ ի չջրելոյ զուխտն՝ ասէ ցԱրհմնն. այ սուտ և չարագործ,
 տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի, և զՈրմիզդ ՚ի վերայ
 քո արքայ կացուցեալ. և յետ ինն հազար ամի Որմիզդ թագաւորեսցէ, և
 զինչ կամիցի առնել՝ արասցէ: Յայնժամ սկսան Որմիզդ և Արհմնն առնել
 արարածս. և ամենայն ինչ՝ զոր Որմիզդն առնէր՝ բարի էր և ուղիղ, և զոր
 ինչ Արհմնն գործէր՝ չար էր և թիւր:

ԳԼ. Բ

146 Այսպիսի անհաւատ և դանդաղանաց բանից տխմարաց մտաց կար- 10
 կատելոց՝ չէր պարտ ամենեւին բնաւ և առնել պատասխանի. զի բաւական
 էր իւրեանց իսկ անմտութիւնն յանդիմանել զնոսա անդատին ՚ի նոցին
 բանից՝ որ ընդ միմեանս կուուին, և միմեանց հակառակ են: Բայց քանզի
 այսու իմն մեծարոյ երեւին առաջնորդք քէչին իւրեանց հնազանդեցե-
 լոցն, և իւեղդ ընդ անձն արկեալ՝ ձգեն զնոսա ՚ի խորխորատ, հարկ է տալ
 պատասխանի, և ցուցանել թէ ոչ ինչ աւելի քան զոր Մանի⁷, զոր ինքեանք
 մորթեցին, ասեն:

147 Ջի նա երկու արմատս բարւոյ և չարի ասէ, և զայն ոչ յղութեամբ և
 ծննդեամբ, այլ ինքնակացս՝ միմեանց հակառակ. և նոքա զնոյն ասեն՝
 148 տենջանօք Ջրուանայն յղութեամբ և ծննդեամբ: Եւ եթէ նոյն քէչ է երկու 20
 ցունց, ընդէր ատիցեն մոգք զզանդիկս, եթէ ոչ զի վարուքն զատ են ՚ի
 149 միմեանց. թէպէտ և կերպարանօք և ոչ ճշմարտութեամբ: Այլ ՚ի քէչին
 մի են երկոքեան. նոքա երկարմատեանք, և սոքա նոյնպիսիք. նոքա
 արեւապաշտք, և սոքա ծառայք արեգական. նոքա ամենայն անշնչոց
 շունչ կարծեն, և սոքա նոյն օրինակ զնոյն իմանան:

150 Բայց զի Մանի կամեցաւ վերագոյն քան զնոցայն կեղծեօք վարս ցու-
 ցանել թէ ամենեւին իսկ ազատ ՚ի կարեաց ցանկութեանց իցէ, և ոչ քան
 զնոցայն միայն՝ այլ և քան զամենայն քէչից, ուստի յանդիմանեալ յաղջ-
 151 կանց իսկոտելոյ՝ մորթաղերծ մահուամբ պակասեցաւ ՚ի կենաց: Որով 10

⁷ Մանի, der Gründer des Manichäismus, lebte in der ersten Hälfte des 3. Jh.
 (215–273).

յայտ է՝ թէ վարուք եւեթ մեկնեալ են՝ ի միմեանց. զի նոքա կերպարանօղք են, և սոքա զեղիւք, և յայտ յանդիման անձնադիւրք. այլ կրօնիւք նոյնք և նոյնպիսիք :

ԳԼ. Գ

152 Արդ մեր թողեալ գնոսա, հարցցուք գտոսա: Զրուանն, զոր յառաջ-
քան զամենայն ինչ ասեն, կատարեալ ոք էր, թէ անկատար: Եթէ ասիցեն՝
եթէ կատարեալ էր, լուիցեն՝ եթէ կատարեալն յումմէ՞ կարօտանայր
ինդրել որդի, որ գայցէ և զերկինս և զերկիր առնիցէ. զի եթէ կատարեալ
էր, ինքն իսկ կարող էր առնել զերկինս և զերկիր: Ապա եթէ անկատար էր,
յայտ է՝ թէ էր ոմն՝ ի վեր քան զնա, որ զնորա թերակատարութիւնն ընու
կարէր. և եթէ էր ոք՝ ի վեր քան զնա, նմա պարտ էր առնել զերկինս և
զերկիր և զամենայն որ՝ ի նոսա՝ առ ՚ի ցուցանելոյ զիւր զբարերարութիւնն
և զօրութիւն. և ոչ Զրուանայ որդի շնորհել, որ զերկինս և զերկիր և զամե-
նայն որ ՚ի նոսա՝ առնիցէ:

153 Այլ, ասեն, փառաց առնէր զյաշտն:

154 Հարցցուք. փառքն յումեքէ՞ աջողեալ էին նմա, թէ վասն զի մշտնջե-
նաւորն էր՝ փառաւոր էր: Եթէ յումեքէ պարգեւեալ էին նմա փառքն,
հարկ է կարծել՝ եթէ էր ոմն՝ ի վեր քան զնա զօրագոյն և փառաւորագոյն,
ուստի՝ ի նա փառքն հասին: Ապա եթէ չէր ոք՝ ի վեր քան զնա, ՚ի զուր էր
զյաշտն հազարամեան առնել. զի փառքն ոչ եթէ անձնաւոր ինչ են, այլ
՚ի յաջողութենէ ուրուք անուանին փառք, որպէս ՚ի չաջողութենէ ուրուք
անուանի թշուառութիւն. և երկոքին՝ ի դիպաց արգասիք են, և ոչ անձանց
հաստատութիւնք:

155 Եւ այլ եւս. զի եթէ արեգակն և լուսին չեւ եւս էին լեալ, որով ժամքն
և աւուրք և ամիսք և տարիք կարգին, հազար ամն ուստի երեւէր. զի չէին
՚ի միջի լուսաւորքն, որք զթիւ աւուրց և ամսոց և տարեաց կարգէին.
այլ յայտ է՝ թէ անմտութեամբ լի են բաջադանքն:

156 Դարձեալ թէ երկինք և երկիր և որ ՚ի նոսայն՝ չէին, ո՞ւր առնէր զյաշտն
կամ թւ: Յորժամ երկիր չէր և ոչ տունկք ինչ որ ՚ի նմանէ, զբարսմունսն
ուստի գտանէր ունել ՚ի ձեռին. կամ բնաւ զինչ իսկ յազէր, զի անասունք
չեւ եւս էին արարեալ: Եւ որ քան զամենայն անմտագոյն է, զհազար ամ,
ասեն, յաշտ արար. և յետ հազար ամին յերկուացաւ, ասէ՝ թէ լինիցի ինձ

157

որդի Որմիզդ, և եթէ չլինիցի, և 'ի գուր ինչ վաստակիցիմ: Եւ այնու ցուցանէ՝ թէ տկար էր Ջրուանն և կարօտ և առանց գիտութեան, և պատճառք չարեացն նոյն է, և ոչ Արհմն: Ջի եթէ նորա չէր յերիւացեալ, որպէս ասենն, Արհմնն ոչ լինէր՝ զոր չարեացն արարիչ համբաւեն. այլ ինքն երկմտեաց, որ անհաւատն է և լի անկարգութեամբ:

Ջի ոչ երբէք 'ի միոջէ աղբերէ երկու բղխմունք ելանեն, մինն քաղցր և միւսն դառն. և ոչ 'ի միոջէ ծառոյ երկու պտուղք՝ մին անոյշ և մին դաժան: Արդ եթէ քաղցր գիտեն զՋրուանն, ոչ պարտին զդառն պտուղն զԱրհմն 'ի նմանէ համարել. և եթէ դառն հաշուին, չէ պատճառ զքաղցր պտուղն զՈրմիզդ 'ի նմանէ զնեւ: Եւ 'ի զէպ ելանէ նոցա աստուածական բարբառն, որ ասէ. կամ արարէք զճառն քաղցր, և զպտուղ նորա քաղցր. և կամ արարէք զճառն դառն, և զպտուղ նորա դառն. զի 'ի ծառոյ անտի պտուղն իւր ճանաչի:

Եւ թէ արարածք յիւրաքանչիւր յօրինուածս կան, և երբէք զսահմանօքն եղելօք նոցա ոչ անցանեն, իրաւի եւս առաւել Ջրուանն՝ եթէ մշտնջենաւոր ոք էր, և արարածս առնելոյ հնարս ինդրէր՝ եթէ անձամբ և թէ այլով և թէ որդոյն՝ որպէս ասենն, պարտ էր կարգ ինչ ցուցանել և ոչ անկարգութիւն:

Ջի ոչ երբէք տեսաք՝ թէ կովք էշս ծնան, և էշք եգինս, և ոչ գայլք մաքիս, և ոչ մաքիք աղուէսս, և ոչ առիւծք ձիս, և ոչ ձիք օձս. բայց միայն մի ինչ ծնունդ է՝ զոր մարդիկ հնարեցան արտաքոյ կարգաց բնութեան, ծնուցանել 'ի ձիոց և յիւոց ջորիս. և նոյնք անսերմն և անծնունդ են. զի ոչ յԱստուծոյ կարգեցան՝ այլ 'ի մարդկանէ հնարողութենէ: Արդ Ջրուանն եթէ արջառ էր, զկարիճն զԱրհմն զիւրոյ ծնանէր. և եթէ գայլ էր. զգառնն զՈրմիզդ հիմ ծնանէր. ոչ ապաքէն մարդկան մտաց բաջաղանք են:

Ջի և Ջրուանն իսկ մարդ լեալ է, այր մի քաջ առ Տիտանօքն⁸. և որպէս սովոր են Յոյնք և Արիք և ամենայն ազգք հեթանոսաց՝ զքաջս առ դիւցազունս ունել, հայեցեալ ընդ այն քէշակարկատին Պարսից՝ թէ որով-

⁸ Տիտանօքն. Vgl. hierzu Mos. Chor. I, c. 5 (Wh.): յառաջ քան զբուրգն եւ զբազմաբարբառն լինելոյ ձայնի ազգի մարդկան եւ զկնի նաւարկութեանն Քսիսութրեայ իհայս Ջրուանն և Տիտանն եւ Յապետոսթէ լինէին իշխանք երկրի. („Vor dem Turm(bau) und dem Vielsprachigwerden der Sprache des Menschenschlechts, und (aber) nach der Schiffsreise des Xisuthros nach Armenien waren Zrvan, Titan und Japetosthes Herrscher der Erde“).

14

10

Յով. 12, 33
7, 17

116

143

20

267
37

327

323

328

158

166a

ապա ոչ այժմ թագաւորել է նմա, և ոչ 'ի վախճանի՝ որպէս ասենն՝ յարթել կարէ : Իսկ եթէ առ չարակամութեան իցէ, գտանի զի ոչ միայն հայրն՝ որ թագաւորեցոյց զչարն՝ է պարտ չարեաց, այլ և որդին՝ որ կամակից եղև հօրն և համարձակիչ չարին :

- 164 Դարձեալ զի զթագաւորութիւնն որդւոցն ետ, միում զինն հազարամեան, և միւսումն զանսպառականն, ինքն յորո՞ւմ կարգի կայցէ : Ձի մինչ չէրն ինչ՝ չէր իմիք թագաւոր, քանզի և ոչ արարիչ իրիք էր. և յորժամ որդիքն եղեն, նոքա եղեն արարիչք՝ ոմն բարեաց և ոմն չարեաց, և նոքին թագաւորք՝ ոմն ժամանակեան և ոմն յաւիտենական. և մնաց Չրուանն դատարկ յարարչութենէ և 'ի թագաւորութենէ. զի արարիչ չէ, քանզի չէ իւր արարեալ. և թագաւոր չեղել, քանզի ո՞յր արարածոց լինէր թագաւոր : Եւ յայտ է՝ թէ ոչ էր երբէք Չրուանն, և ոչ է : Ձի որ է ոք, կամ արարիչ է կամ արարած : Արդ սա քանզի ոչ արարիչ է և ոչ արարած, ոչ երբէք նա Աստուած, և ոչ է և ոչ լինի :

21.6.67
26.2.39

ԳԼ. Դ

- 166 Այլ իբրև Չրուանն, ասեն, զայն 'ի մտի խորհեցաւ՝ թէ ոք յորդւոցն իմոց վաղ առ իս հասցէ՝ զնա թագաւոր արարից, գիտաց Որմիզդ և զխորհուրդն յայտնեաց Արհմենին :
- 167 Թէ զհօրն զխորհուրդ ծանեաւ Որմիզդ, զեղբօրն չարածճի զխորհուրդ ընդէր ոչ գիտաց՝ թէ ծակէ զորովայնն և ելանէ, և յառաջ երթայ առնու զթագաւորութիւնն, որ լինելոց էր առ եղեռանէ նմա և արարածոցն իւրոց, զի նախ յառաջնումն իսկ յետս հարեալ վատթարիցէ զնա, և մի ապա զինն հազար ամն զեղջ և ապաշաւ լինիցի առ 'ի հայելոյ իւր յուղիղ յարարածսն, զոր աղաւաղեալ կամակորիցէ : Եւ կամ Չրուանն, որ զերկուց որդւոց զյղութիւնն գիտաց յորովայնի, յորժամ եկեալ առաջի կայր Արհմենն՝ ընդէր ոչ ծանեաւ զնա :
Դարձեալ որ զիւր որդին Որմիզդ անուշահոտ և լուսաւոր անդէն յորովայնին գիտէր, զմիւս որդին՝ թէ ժանդահոտ և խաւարին իցէ, իբր ոչ գիտաց : Ո՞չ ապաքէն յայտ է՝ եթէ ոչ իրք հաւաստիք պատմին 'ի նոցանէ, այլ առասպելք կարկատունք :
- 169 Եւ միւսն եւս՝ որ քան զամենայն անհաւատագոյնն է, զի մին 'ի հազարամեայ յաշտն առնելոյ հազիւ լինէր. և միւսն յառժամայն յերկուանալոյ

14
20
V B m n
A 410

20.6.
30 14



անտի: Եւ եթէ ՚ի յերկուանայրյ անտի եղեւ Արհմնն որդի, ոչ պարտ էր
 գնա իւր որդի կոչել. զի եթէ իւր որդի էր, նմին նման գոյր և նոյնպիսի.
 կամ թէ բարի էր՝ բարի, կամ թէ չար էր՝ չար: Միթէ և նոյնպէս հայրն
 Զրուան և բարի էր արդեւք և չար. և ՚ի բարիոք երակէն նորա բարւոք
 որդին եղև, և ՚ի չար մայրէն նորա չարն: Եւ թէ այնպէս ինչ ոչ էր,
 ապա և ոչ նա զչարն իւր որդի կոչէր, և ոչ թագաւորութիւն տայր նմա:
 Այլ թէ ինքն բարի էր, զչարն եղծանէր և բարւոյն տայր զթագաւորու-
 թիւնն. որով ինքն քաջանուն լինէր, և զբարի որդին իւր զՈրմիզդ
 չառնէր միշտ սրտառուչ: Այլ յայսմ ամենայնէ յայտ է՝ եթէ ոչ երբէք
 լեալ է Զրուանայ հայր աստուածոց, և ոչ տուիչ թագաւորութեանց: 10

ԳԼ. Ե

171

Դարձեալ ասեն. զբարամունսն զոր ՚ի ձեռին ունէր՝ ցորդին իւր ցՈր-
 միզդ ետ, և ասէ. ցայժմ ես վասն քոյ յաշտ առնէի, յայսմ հետէ դու վասն
 իմ առնիցես:

n.7.

բաց

Արդ եթէ նա վասն նորա յաշտ առնէր, զի որդի լինիցի նմա, իսկ Որ-
 միզդ վասն նորա յոր սակա առնէր. միթէ կասկած ինչ ուստեք էր նմա, և
 այնր աղազաւ պատուիրէր նմա վասն իւր յաշտ առնել. միթէ յորմէ զոր-
 դին խնդրեաց, թէ գուցէ ընդ որդւոյն տալոյ՝ գնա բաժ առնուցու: Եթէ
 այն ինչ ՚ի մտի էր նորա, բարամունքն ինչ ոչ կարէին օգնել. և ի տալ զբար-
 ամունսն չասաց սա՝¹² թէ դու ինձ յաշտ առնիցես. զի ցուցցէ թէ էր ոմն՝²⁰
 որում նա վասն որդւոյն յաշտ առնէր. և որդւոյն պատուիրեաց վասն իւր
²¹⁶նմին յաշտ առնել:

14

Եւ եթէ էր ոք ՚ի վեր քան գնա և քան զորդին, որում զյաշտն առնէին,
 գնա պարտ էր իմանալ պատճառ իւրեանց և արարիչ ամենեցուն, և ոչ
 զԶրուան պատճառ Որմըզդի և Արհմենի, և գնոսա արարիչ չարեաց և բա-
 րեաց: Քան Զրուանայ որդի արարիչ տայր, որ ՚ի վերն քան զԶրուանն
 էր, ինքն իսկ իւրովի¹³ չկարէր զերկինս և զերկիր և որ ինչ ՚ի նոսա՝ առնել,
 որպէս յառաջագոյնն ասացաւ, և զիւր զօրութիւնն և զբարերարութիւնն
 ցուցանել: Կամ թէ յորդւոյն իւրմէ Արհմենայ կասկած ինչ էր նմա, և
 վասն այնորիկ զբարամունսն յՈրմիզդ տայր, զի նոքօք յաշտ արարեալ³⁰

¹² Statt սա lies besser նմա.

¹³ Zu իւրովի s. § 200.

26. Row

վերագունին՝ անկասկած լինիցի, ապաքէն պարտ էր ումեք՝ ՚ի միջի լինել, որում գյաշտն առնէր: Եւ եթէ էր ոք՝ ՚ի միջի՝ որում օրէն էր գյաշտն առնել, ապա Ջրուանն չէր մշտնջենաւոր, այլ յումեքէ եղեալ: Եւ պարտ է խնդրել յումմէ՛ նայն եղեւ, և ո՛վ էր՝ ում ինքն գյաշտն առնէր. և ո՛վ այն՝ որում որդւոյն հրամայեաց վասն իւր յաշտ առնել: Ջի ոչ է մարթ ումեք սկիզբն՝ առնուլ լինելոյ, եթէ ոչ յայլմէ՛¹⁴ առնուցու զլինելն. և Աստուած միայն կարող է առնել յոչընչէ ինչ որպէս և կամի: Եւ արդ ո՞վ իցէ որ զՋրուանն արար, եթէ ոչ Աստուած, որում և գյաշտն առնէր. որ և որդի այնպիսի ետ նմա, զի գերկինս և գերկիր և որ՝ ՚ի նոսա՝ առնիցէ: Եւ այն են զարմանք՝ զի ինքն ոչ արար, և որդւոյն Ջրուանայ կարող է տալ զառնելն: 10

25.779

172/173 Այլ չէր ոք՝ ՚ի միջի, ասեն, որում Ջրուան գյաշտն առնէր. եթէ այնպէս իցէ, և ոչ Ջրուանն իսկ էր. և մեծի ծաղու արժանի է, զի չէրն չէին վասն չէին յաշտ առնէր¹⁵: 231,6

ԳԼ. Զ

174 Այլ թէ և բախտ եւս էր՝ որպէս ասենն՝ Ջրուանն, ապաքէն ուրուք — բախտ էր. և ո՞վ էր արդեւք՝ ոյր բախտն էր: Ջի բախտ անձնաւոր ինչ չէ, այլ դէպք աջողութեան. որպէս յարդարութենէն արդարն կոչի, և ՚ի քաջութենէն քաջն, նոյնպէս և ՚ի փառաւորութենէն¹⁶ անտի բախտաւոր: Արդ եթէ բախտ էր Ջրուանն՝ չէր ինչ անձնաւոր. ուստի յայտ է՝ թէ բնաւ և էր իսկ ոչ Ջրուանն: 20

175 Եւ եթէ՛ որպէս ասեն՝ ՚ի յերկուանալոյ անտի յղացաւ Արհմնն, յառաջնումն իսկ պարտ էր նմա յերկուանալ՝ զի թող անդէն ետ ընդ ետ լինէր նմա որդի, և ոչ հազարամ տառապել և յաշտ առնել՝ զի որդի ծնցի: Սակայն եղև նմա թէ չար և եթէ բարի, և զչարութիւնն յիւրոց բարուց առ, և ոչ

176 ՚ի ծննդենէ անտի. քանզի չէր մարթ միում արգանդի զչարեացն գործօ —

¹⁴ Zu յայլմէ s. § 159.
¹⁵ Lauer übersetzt: „(es verdient Spott;) denn der Nichtseiende verrichtete Opfer einem Nichtseienden für einen Nichtseienden“; Weber: „(es ist lächerlich,) daß der, der nicht war, denen, die nicht waren, Opfer brachte für solche, die nicht waren.“ Schiebt man nach զի ein որ ein, so ist die Stelle glatt: „(es ist lächerlich,) daß (der), der nicht war (չէր -ն), einem Nichtexistierenden (չէին, Gen.-Dat. von չէին ‚nicht existierend‘) für einen Nichtexistierenden Opfer darbrachte.“
¹⁶ Der Parallelität mit den vorhergehenden Sätzen halber ist statt փառաւորութենէ besser բախտաւորութենէ zu lesen.

նեայ և զբարեացն արարիչ ընդունել: Ջի եթէ չար էր, չարին եւեթ պարտէր ասպնջական լինել. և եթէ բարի էր, բարւոյն: Քանզի բարին և չար 'ի միում անկանել ոչ մարթէին, որպէս զի ոչ գայլք և գառինք 'ի միջէ արգանդէ ծնանին. զորոց զբարւոյն կողմն յորմ' ըզգէ դնեն, զարջառաց և զոչխարաց և զայլոց պիտանացուաց. և զչարին կողմն յԱրճմնայն, զգայլոց և զգազանաց և զճճեաց վնասակարաց: Եւ գայն ոչ գիտեն՝ թէ որպէս վնասակարացն ընդ անվնասակարսն չմարթի բնակել, նոյնպէս և ոչ բարւոյն ընդ չարին մարթ էր 'ի միում արգանդի յղենալ: Ջի զոր օրինակ չէ մարթ զհուր և զջուր 'ի մի վայր առնել՝ թէ գուցէ յորվեալ կողմն ասականիչ ընկերին իւրում լինիցի, նոյնպէս և ոչ բարւոյն և չարի 'ի մի վայր մտանել հնար էր. ասպ թէ ոչ, կամ նա զսա սպականէր, կամ սա զնա:

177 Ս >
178
179

Եւ դարձեալ ընդէր ոչ յաղթեաց յաշտածին ծնունդն, և եղև արգել յերկուական ծննդեանն. այլ իջեալ միմեանց թշնամիքն հաշտութեամբ խաղաղիկ 'ի միում արգանդի գառէին: Նա և հայրն եթէ երկուս որդիս գիտէր յորովայնին՝ զմին բարի և զմինն չար, ոչ խստն 'ի խուռն պարտ էր խոստանալ զթագաւորութիւնն, այլ այնմ միայն՝ վասն որոյ զյաշտն առնէր:

180

Բայց ասպքէն և Որմիզդն մինչ չեւ ծնեալ էր՝ թերակատար էր. և զիմրդ թերակատարն զխորհուրդն հայրենի իմացաւ. զի որ զխորհուրդս ուրուք ճանաչել կարէ, նա 'ի վեր է քան զնա. որ Աստուծոյ միայն է, և ոչ մարդոյ: Ուստի Որմիզդ վերագոյն է քան զհայրն և հօր և իմաստուն. զի մինչ դեռ յորովայնի էր՝ զխորհուրդ հօրն գիտաց. և ելեալ յորովայնէ անտի՝ կարող եղև զերկինս և զերկիր առնել, զոր հայրն ոչ կարաց առնել:

181

Եւ արդ՝ որ այնչափ հօր և իմաստունն էր քան զհայրն, գտանի վատթարագոյն՝ զի 'ի վատթարէն խաբեցաւ, այնու զի զխորհուրդ հօրն յայտնեաց նմա՝ ընդ որում անհաշտ թշնամութիւնն պարտ էր ունել և ոչ բարեկամութիւն:

182

Դարձեալ թէ ծակել եւս պարտ ինչ էր զորովայնն և ելանել, նմա պարտ էր՝ որ զխորհուրդ հօրն իմացաւ. զի թող ինքն նախ երթայր և առնոյր զթագաւորութիւնն, և ոչ Արճմնայ՝ որ ոչ զխորհուրդ հօրն գիտէր, և ոչ

183

թագաւորութեանն ինչ անդ էր: Բայց թէ ծակեաց զորովայնն, թերեւս և սպան իսկ զմայրն. զոր պարտ է ինդրել՝ թէ արգարեւ արդեւք մայր գոյր նոցա:

Այլ ուստի յայտ իցէ՝ թէ մայր գոյր. մանաւանդ զի ասեն իսկ՝ թէ մինչ

184 չեւ էր ինչ բնաւ, ոչ երկինք և ոչ երկիր, Ջրուան միայն էր. որ մեծի ծաղու
 արժանի է՝ եթէ ինքն հայր իցէ և ինքն մայր, և նոյն սերմանարկու և նոյն
 սերմնընկալ: Եւ որ եւս վատթարագոյնն է իբրև ծակեաց, ասեն, Ար-
 հրմնն զորովայն և եկն եկաց առաջի հօրն, ոչ ծանեաւ զնա հայրն: Արդ
 զի արդ ոչ ճանաչէր, զի ոք ուրեք չէր՝ մինչ ինքնն միայն էր. ոչ ապաքէն՝
 յայտ էր՝ թէ որ առ այն եկն, մի ոք յորդուցն նորա էր. և գտանի վատթա-
 րագոյն եւս քան զվատթարն, զի նա զսա ծանեաւ, և սա զնա ոչ ծանեաւ,
 և յուրաստ էր յորդույ անտի՝ թէ իմ որդին անուշահոտ և լուսաւոր է, և
 դու խաւարին և ժանդահոտ ես: Եւ զի արդ ոչ էր նորա որդի, որ ընդ բար-
 ւոք որդույն նորա՝ ի նմին արգանդի յղացեալ էր. և զնմանէ յուրաստ էր՝ 10
 185 թէ չեւս զու իմ որդի, և զմիւսմէն խոստով՝ թէ որդի իմ է: Եւ եթէ իբրև
 ՚ի չարէ յուրաստ էր, ապա և յուրթեանն զնա չէր պարտ արժանի առնել,
 այլ անդէն իբրև ՚ի չարէ խորշել և սատակել. և ոչ միայն զնա, այլ և զմի-
 ւրդը՝ որ զխորհուրդսն ՚ի վեր եհան:

ԳԼ. Է

186 Այլ և միւսն եւս անպիտանագոյն է՝ զոր ասենն, թէ և զբարսմունսն
 ետ նմա՝ առնել վասն իւր յաշտ, իբր ոչ եթէ յմումըզի կամ ՚ի յագելն էր
 զօրութիւնն՝ այլ ՚ի գաւազանսն: Զի եթէ ինքն հաւատարիմ էր լսելի
 լինելոյ, ապա աւելորդ իմն էր զգաւազանսն ՚ի ձեռին ունել. և եթէ ինքն
 չէր արժանի, և ոչ գաւազանքն բաւական էին արժանի առնել յագելոյ 20
 զանարժանն. զի բարսմունս ունել և յաշտ առնել՝ մարդկան գործ է և ոչ
 Աստուծոյ: Իսկ եթէ նա Աստուած էր, և կարող էր զերկինս և զերկիր առ-
 նել, զինչ պիտոյ էր նմա բարսմունս ունել և յաշտ առնել, զի զհայրն ՚ի
 կասկած անացն ապրեցուցէ: Որ զերկինս և զերկիր կարող էր առնել
 առանց բարսմանցն, զհայրն զի արդ ոչ կարէր անհոգ առնել առանց
 գաւազանացն: Եւ արդ յայտ եղև թէ և հայրն անպիտ և տկար և յայլ ապա-
 ստան էր, և որդին նոյնպէս տկար և անպիտ. զի ոչ նա՝ որդի առանց յաշտ
 առնելոյ կարաց ծնանել, և ոչ որդին՝ առանց զգաւազանսն ՚ի ձեռն առնելոյ
 կարաց զնա ազատ առնել ՚ի կասկածանաց:

ԳԼ. Ը

187

Նա և լլկանաց եւս չարին երկոքին պատճառք եղեն, չարչարելոյ զբարւոք արարածս բարւոյն: Ջի Որմիզդ, ասեն, որ ինչ բարի էր՝ զայն առնէր, և արս արդարս և բարեգործս, և Արճմնն զչար արարածս և զգեւս:

Արդ՝ եթէ դեւքն չարի արարածք և չարք էին բնութեամբ, և ոչ մի ոք՝ ՚ի նոցանէ բարի ինչ երբէք իմանալ կարէր. նա և ոչ Արճմնն իսկ գլխովին: Բայց արդ տեսանեմք, զի միումն¹⁷ որ կարի վայելուչն իսկ է՝ ՚ի մէջ արարածոց, որպէս ասեն, Արճմնն եղև հնարագիւտ լինելոյ: Իբրև ետես, ասեն, թէ արարածս գեղեցիկս արար Որմիզդ, և լոյս չգիտաց առնել, խորհեցաւ ընդ դեւս՝ ասէ, զինչ օգուտ է Որմըզդի, զի այնպիսի գեղեցիկ¹⁰ արարածս արար՝ և ՚ի խաւարի կան, զի լոյս ոչ գիտաց առնել: Արդ եթէ իմաստուն էր, ընդ մօրն մտանէր, և արեգական որդի լինէր. և ընդ քեռն անկանէր, և լուսին ծնանէր. և պատուէր տայր՝ զի մի ոք զխորհուրդն ՚ի վեր հանցէ: Ջայն լուեալ Մահմեայ դիւի՝ վաղվաղակի առ Որմիզդ հասանէր, և զխորհուրդն նմա ՚ի վեր հանէր: Ո՞վ անմտութիւն և անհամմորոտութիւն. որ զերկնից և զերկրի և զամենայնի՝ որ ՚ի նոսա՝ զհանգամանսն առնելոյ կարաց գտանել, զսակաւիկ ինչ զհայթայթանացն հնարս չմարթէր իմանալ: Եւ այնու ոչ միայն զՈրմիզդ անմիտ առնեն, այլ և զԱրճմնն՝ բարի բարի արարածոցն հնարագիւտ:

188

Որպէս և զմիւս եւս ասեն՝ թէ Արճմնն ասաց, ոչ եթէ չկարեմ առնել²⁰ բարի ինչ, այլ չկամիմ. և առ ՚ի հաստատուն զբանն առնելոյ՝ արար սիրամարգ: Տեսանէն զի կամօք է չար՝ և ոչ ՚ի ծնէ:

Արդ զինչ պայծառագոյն քան զլոյս կայցէ, որում Արճմնն հնարագիւտ եղև. կամ զինչ գեղեցկագոյն քան զսիրամարգ՝ զոր առ ՚ի ցուցանելոյ զգեղեցկագործութիւնն արար: Եւ այսու յայտ է՝ զի թէ չար ոք էր բնութեամբ Արճմնն, ոչ հնարագիւտ լուսոյ լինէր, և ոչ արարիչ գեղեցկութեան: Նա և թէ դեւք բնութեամբ չարք էին, չէր հնար Մահմեայն հանգամանաց լուսոյն առնելոյ գուշակ լինել, որում ցայժմ պաշտօնեայք այնր քէչի երիցս¹⁸ յամի զոհս մատուցանեն. ուստի յանդիմանեալ կշտամբին՝ թէ և նոքա զիւսպաշտք են. և դեւքն ոչ չարք ՚ի բնէ, այլ կամօք: ³⁰

189

¹⁷ Statt միումն ist արեգական zu lesen; der Genetiv ist abhängig von լինելոյ.

¹⁸ Zu երիցս vgl. § 194 aa).



Եւ եթէ ինքեանք զիւր զոհս մատուցանեն, որովք երեսօք զզիւապաշտան
հալածիցեն: Տեսանես զի ամենայն ինչ, որ 'ի նոցանէ ասի, առասպելք
են և սնոտի պատմութիւնք:

ԳԼ. Թ

190 Դարձեալ նոքին որ զլուսաւորացն արարած յայսպիսի պատճառա-
նաց զնեն, շրջեալ զայս բանս՝ այլ իմն պատճառ լինելոյ արեգական մու-
ծանեն: Արհմնն, ասեն, զՈրմիզդ 'ի ճաշ կոչեաց. և եկեալ Որմըզդի՝ չկա-
մեցաւ զճաշն ուտել, եթէ ոչ նախ որդիքն նոցա կոուիցեն: Եւ 'ի խեթկել
որդւոյն Արհմննի զորդին Որմըզդի, 'ի խնդիր եղեն դատաւորի և ոչ գտին.
ապա առեալ արարին զարեգակն, զի լիցի նոցա դատաւոր: 10

Անդ հնարագիւտ լինելոյ արեգական ասեն զԱրհմնն. և աստ յայտնի
խակ արարչակից լուսոյ¹⁹: Եւ եթէ այլ ոք չզոյր դատաւոր, և առ հայրն
չկարէին երթալ, կամ առ այն՝ որում հայրն և որդին յաշտ առնէին ըստ
առասպելին:

191 Եւ արդ զիւրդ իցեն թշնամիք միմեանց Որմիզդն և Արհմնն՝ որք 'ի միում -
արգանդի գայոացին, և 'ի միմեանց ճաշ երթային, և իրերաց գործակցու-
192 թեամբ զարեգակն ստեղծեալ՝ դատաւոր կացուցանէին: Արդ զմին՝
Ջրադաշտ²⁰ ոմն զեղխագործութեան զնէ²¹, եթէ 'ի մայրենի և 'ի քեռական
